891.99 | 7400
Տ-16 | Տաղք Մխիթար-
եանց վարդապետաց.
հ. 3-րդ.

# ՏԱՂՔ

# ՄԽԻԹԱՐԵԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

891.99
S-16

# ՏԱՂՔ

# ՄԽԻԹԱՐԵԱՆ

# ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

№ 154

## ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1854

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԵՐԹՈՒԱԾՔ

ՏԵԱՌՆ

# ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԻՐԱՆԱՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

# ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԵՂՕՆՔ

## Ա.

### ՄԱՅՐ ԵՒ ԴՍՏՐԻԿ

Մերձ յարեգդէմ յայն 'ի մարմանդ ,
Ուր ըզդըրախտին աւանդէն վայր ,
Բազմազըւարճ էր դարեւանդ .
  Նու 'ի ստորոտ նորին խըրձիթ
Հիմնեալ նոճիւք էր վաղեմի ,
Զոր շուրջ թանայր վըտակ վըճիտ ,
  Ըստուարաթոր ուռեաց կողերք
Մինչ 'ի յալիս անդ վայրահակ ,
Յօրինէին լուռ եղերերգ .
  Ըզհովուական անդ երջանիկ
Կէին կենցաղ 'ի միասին
Որբ և այրի մայր և դըստրիկ .
  Ի խանդակաթ միմեանց 'ի սէր
Էր ըսփոփումն երկաքանչիւր ,
Դըստերն 'ի մօր , մօրն 'ի դըստեր .
  Յաճախ զերկայն գիշերն 'ի քուն
Դըստրիկն 'ի լուր և 'ի հարցուած
Ըզաւօտէր ընդ մօրն անքուն .

Դուստրն.

Ասա ինձ, մայր իմ սիրելի,
Յառաջագոյն մինչ ես ծնայ
Ես 'ի յօրրանս յորժամ էի,
Մե՞ր անդաստանս այս էր կալուած՝
Որ ըզբըլրաւս ընդարձակի,
Թէ բախտն յետոյ այսր ըզմեզ ած,

Մայրն.

Վաղ հայրենին մեր աստ էր հիւղ,
Ես աստանօր ընդ հօրս եղբարց
Սնայ 'ի մեղր ես և 'ի յիւղ.
Այլ յորժամ հարսն եղէ քում հօր,
Այլուր եղէն մեզ անդաստանք,
Որ ոչ սակի էր հեռաւոր.
Զարտևանունս ապա գնորին,
Ո՛վ յիշատակ դառնակըսկիծ,
Մ՛ինչ կափուցի արտասուացն,
Դըստրիկ իմ, այսր արարաք դարձ.
Այսր և զաճիւն նորին ածաք,
Հանգուցանել 'ի շիրիմն հարց.
Յորմէ հետէ գնա աշխարհէն,
Ամք են տասնեակ, ծածկէ զշիրմն
Նորա զառամ բաղեղն ըզվէմ.
Վիշտք ըզվըշտաց հասին ըզհետ,
Որպէս ալիք մըղեն զալիս
Կոծեալ 'ի ծով մըրրկաւէտ.

Դուստրն.

Էր ինձ, գիտեմ, եղբայր մանկիկ
Քեզ սիրելի հաւատար ինձ,
Զոր կորուսի վաղամեռիկ.

Այլ արդեօք նա՞ էր միայնակ
Ինձ հարազատ սիրակցորդ,
Թէ քեզ և այլ գոյն ողբեակք.

## Մայրն.

Ահ, մի դու զսիրտ իմ կարեվէր,
Դստրիկ իմ, մի աղխողում
Դարձեալ հարցմամբդ այդ կեղեքեր.
Արդէն մեզ օրս է տարաժամ,
Արեւն 'ի մայր իւր արդ եմուտ,
Վաղ լռեցին հաւուց երամ.
Աստեղք 'ի նուաղ խորեանց 'ի շող,
Եւ զովարար թառամ ծաղկին
Ազօտաջահ լուսնակին ցօղ
Մեզ քաղցր 'ի նիրհ առնեն հրաւէր.
Ո՛ն երթիցուք լինել 'ի քուն.
Բարի, դստրիկ իմ, քեզ գիշեր.

## Դուստրն.

Ընդէ՞ր, մայրիկ, փութաս այդպէս
Վաղ քան 'ի յայլ երեկս 'ի նիրհ.
Այլ ես հնազանդ եղէց միշտ քեզ.

Որպէս մատաղ ապա որոջ,
Որ ընկողմնի առ մօրն 'ի նինջ
Տաւաղէլոյ 'ի դալարւոջ,
Խանձեալ մանկիկն 'ի վաստակոյ,
Եւ ժիրաժիր մօրն իւր օգնէր,
Ի մայրենին հանգեաւ 'ի ծոց.
Զարուսեկին ծագել այգուն,
Կանխայարուցք ապա 'ի քնոյ,
Տըւեալ հասակին նախ գոհութիւն,

Ջեռն 'ի կարգեալն արկին վաստակ,
Հանգիստ ընդ երկոլն խառնելով,
Մ՝արգըրտայեռ որպէս ոսկեակ ·
Զի այս նոցա կենացն էր կարգ,
Եւ հրպատակք կարգաց նոցին
Հոյլք մըշակացն և հովուաց պարք ·
Զեւ արեւուն ճառագայթից
Ի գագաթունս հարեալ լերանց,
Ի զհօտն ընդ դաշտըս ծաղկալից
Յօղատարափ 'ի դալարիս
Հովիւքն ածեալ ճարակէին
Եւ 'ի յարօտս անդ 'ի ջրարբիս ·
Ոհն ալեւոր հըմուտ 'ի սրինգ,
Յեցեալ 'ի ցուպն իւր ծայրաթեք,
Որպէս հովիւք նըկարին հինք,
Աշխարհելի հընչէր նուագ,
Դարակաւոր խաշինն 'ի դէտ,
Մ՝ինչ արածէրն ըղնա ցըյագ ·
Ա՝յլուր խարտեաշ հովուին մանուկ,
Օցսեալ գառանցն ըղհետ դիմէր,
Դօձեալ ըզցուպն իւր ըզճառուկ ·
Ա՝յլ ոմն այլուր հեզ պատանեակ
Ի՝աղմեալ յարօտ 'ի սեպ վիմին,
Զմայլէր 'ի յերգ գիւղին երամակ ·
Ի ջերմանեալ ասպա երկնի,
Մ՝ինչ արձակէր 'ի ծիրանւոյն
Դրպուռն ըզձիչ իւր անյեղլի,
Ի զհօտն 'ի յումպ կէսք առ լըճին,
Այլք առ ջըրհորըս տանէին,
Ուր յամր 'ի հիռ ճըրնչեալ անիւ,
Զուր 'ի գոգեալ գեղոյր մայրիս .
Այլք 'ի յեղտիւրըս սիզաւէտ,
Եւ հեզասահ կէսք 'ի յալիս ·
Ի հովանուտ ասպա յարօտ

Արածելին ըղմիջաւուրք
Եւ 'ի ծըմակ յանտառս ըղհօտ .
Եւ զովագին մինչ երեկոյն
Մեղմէր տակաւ 'ի բացավայրն
Ա ջյորդաւորք տապ արեւուն ,
Ածեալ յարբումըն վէրըստին՝
Խաշն 'ի ճարակ դառնայր անդրէն
Մինչեւ 'ի ցող երեկորին .
Իսկ ըղձըմեռն 'ի գոմ քընքուշ
Ճարակէր խաշն յարկածածուկ
Ի բըքայոյզ շընչմանց ըղգոյշ .
Մինչեւ 'ի դարձ ամարայնոյն
Եւ պատրաստել ճարակ խաշին
Դալարագեղ յարօտս՛ 'ի նոյն ,
Ընդ գիշերոյն ապա նըսեմ
Մինչ աստեղաց ճաճանչաւէտ
Նըշողէին բոյլք երկնաճեմ ,
Խաշն 'ի փարախ դառնայր 'ի կիթ ,
Լիոց 'ի ստեանցըն կաթնաբուղխ
Ծեղով կաթինըն շիթ առ շիթ .
Փայտեայ 'ի մէջ ածեալ պընակ ,
Աուան ըղպըտկանց հարեալ խաշին
Կըթէր ըղկաթն հովիւն երագ .
Մանուկ մատաղ զանսաստն եղջիւր
Նուաճէր զայծուն , եւ բառաչէր
Կաթնաբուծիկ գառն 'ի ջամբ իւր .
Սպիտակ կաթին փըրփուր 'ի վեր
Իբր ըղկոհակըս ծիւնեղէն
Աարդեալ 'ի գուշըն դիզանէր .
Մերթ միայնակ ղըստրիկն 'ի յայց
Եւ մերթ ընդ մօրն 'ի միասին
Դընայր ըստէպ գերդաստանեայց .
Որպէս մատաղ որթ դիեցիկ
Մօրն 'ի հետոց քեցեալ 'ի բաց ,

Կամ մոլորեալ խաշին ամփկ,
Երթայր ապա մօրն հետազօտ
Մ'երթ տընկախիտ 'ի յանտառին
Խընդրել ըզնա մերթ 'ի յարօտ·
Եւ գըտանէր ըզմայրն յաւէժ
Ու տատրակաց բուն ձիթենւոյ,
Յոր էր միակ թողեալ ուղեշ·
Օ՛ի հանապազ նա զկողակցին
Բաղեղնապատ նախ ըզշիրմն
Հեղեալ մաղթանըս ցաւագին,
Ի ձիթաստանն ապա երթայր,
Ընդ մեկուսի 'ի գըստերէն
Թաղեալ տըխուր լալեօքն ըզկայր·
Դըստրիկն ըզմայրն 'ի յայն աղէտ
Դըտեալ, և ինքն ընդ նըմա լայր·
Բայց էր լալեաց իւրն անգէտ·

Դուստրն.

Ընդէ՞ր, մայրիկ իմ, արտասուես·
Պատմեա ըզվիշտ սըրտի քո ինձ,
Գէթ վըշտակից եղէց ընդ քեզ·

Մայրն.

Յորմէ հետէ տատրակ և փուշ
Բերէ երկիրս աստուածանէծ,
Վըշտաց յոլովք են պատճառք յոյժ·
Այլ դու վըշտացս իմ մըխիթար,
Դու 'ի յերկրի աստ յոյս միակ
Ինձ, ով դըստրիկ իմ, պահեցար·
Երթ, մի զվաստակ քոյին թողուր·
Եկից և ես, այլ նախ ընկալ
Ըզմայրենին իմ ըզհամբոյր·

Դուստրն.

Երգէն հովուացն աղաւաղք այց.
Եկ արդ, մայրիկ, 'ի միասին
Տեսցուք ըզգործըս մշակաց.

Զի մշակացն էր կարգ այսպէս,
Երգեստանեայցն և որք 'ի հունձ
Սաստակէին 'ի յարտորէս.
Ձեւ գառնաշունչ աշնայնոյն բուք
Ըզպըտղաբեր ծառաստանաց
Կապտեալ 'ի բաց փարսադեղ շուք.
Ձըգեալ հուժկու 'ի յերընջոց
Տաժանաւոր ակօս 'ի խոր,
Հաւասարիմ երկրին 'ի ծոց
Ըզսերմն ատոք տայրն յաւանդ,
Ըզհանդերձեալ ամին պարէն
Հընձոցն 'ի յոյս ամբարեալ անդ.
Նախ պարարէր ըզնա անձրեւ,
Եւ գիշերոյ եղեամբն ցուրտ
Հալեալ 'ի տուէ 'ի ջերմն արեւ.
Ապա սպիտակ ձըմեռն 'ի ձիւն
Վերանըստեալ 'ի յարտորայն,
Պատըստէր զայն բխուրաբեղուն.
Իսկ այլ երկիրն, յորժամ զեփիւռ
Կակղէր ըզկոշտ 'ի գարնայնի,
Եռօրադիր յայնժամ առնիւր.
Հեծէր արջառն արօրաձիգ,
Յերկեալ փայլէր խոփն 'ի յակօս,
Ըսանդէին անդ սերմանիք.
Ապա ցորեանն 'ի հասկաթուռ
Կանգնէր 'ի յոյժ դալարագեղ,
Եւ հասն 'ի հիւթ կաթին ուռնոյր.
Մինչ յուկեփունջ ապա 'ի հունձ

Ծածկեալ երկիրըն ծածանէր՝
Յայտնեալ արփւոյն ցոլք ըզնոցունց ,
  Արկեալ մանկտին զայն 'ի մանգաղ ,
Շեղջեր հանդէպ միջօրէի
Ծորայն 'ի գիրկ կապեալ չըքնաղ ·
  Ի վայր ապա 'ի յընդարձակ
Սըփռեալ ըզշեղջըս բարդ 'ի բարդ ,
Կառոյր ըզհասկըն վակամակ ·
  Եւ մինչ ըզկամն 'ի կալօրայն
Ի դարձադարձ բազմահոլով
Եզոյգ 'ի շուրջ ածէր ձիան ,
  Ճռընչէր անիւն 'ի գալն 'ի գիլ ,
Պարէր տղայոց հոյլ 'ի սայլն ,
Հասկահասուն 'ի ձեռին ծիլ ·
  Զողաբարձիկ շուրջ այգեստանք
Ծարտորէխքն և յառուամէջս
Կանաչագեղ գործէին ցանկ ·
  Ձեւ գարնայնոյն զըւարթադէմ ,
Ծաղկունս յառին իւր փըթթելով ,
Ընդրէն յարօտ դարձեալ 'ի ձեմ ,
  Եւ 'ի սպիտակ փեղկից լերին ,
Հալեալ 'ի հողմն հարաւաշունչ ,
Ձեւ քամեալ լոյծ սառամանին ,
  Այգեգործին 'ի թեք յառոց
Հատեալ նուաճէր այգեստանւոյն
Բազմաշըռայլ ածուին ուռոց ·
  Ըստ ըզձապուկ ուռն ընդ երկրաւ
Թաղէր մըշակն , և խիտ առ խիտ
Տընկագործէր ածս ընտրանաւ ·
  Ընդ ըզմատաղ որթս 'ի կընձնիս
Ի սկըզբնաբոյս տիոյն հիւսեալ ,
Յենոյր 'ի խեչս անդ յերկձըղիս ·
  Եւ յամբառնալ կընձնոյն 'ի վեր ,
Յեցեալն 'ի նմա որթ ընդ նըմին

Սողէր 'ի ծայր անդր հասանէր ։
  Ապա 'ի բլուրս անդ արեգջէր
Եւ 'ի մարմանդ այգեստանեայս
Մինչ յակընթեայ ողկոյզն եփէր ,
  Մըշակք 'ի կութս 'ի հընձանին ,
Պըսակաւորք յուռոց ըզկայթ
Կարմիր ոտիւքն հարկանէին ։
  Հընչէր երգոց հովիւն 'ի ձայն ,
Եւ արձագանգք շուրջ 'ի լերանց
Փոխանակաւ կըրկնէին զայն ։
  Փըրփրէր խաղմուղն 'ի սըրուակին ,
Եւ ծաղկահամ 'ի յօշարակ
Լըցեալ թակոյքըն զեղուին ։
  Բայց յարտորէս անդ մինչ մըշակք
Եւ աստ հովիւք 'ի դալարիս
Պարապէին յուրեանց վաստակ ,
  Հարսունքն 'ի վրանս անդ նազին ժիրք ,
Իբր ընդ իրեարս քոյք սիրուհիք ,
Կային զբաղեալ յերկս անձանձիրք ։
  Ճարտար սանտերբ ոմն ընդ առէջ
Նուրբ կըտաւոյն , առ ըստորեաւ
Բաղմեալ , գործէր յար ելևէջ .
  Զերկայն վաստակն 'ի նուագս երգոց
Միւսն ըսփոփէր մեղմ 'ի մըրմունջ ,
Զիւրն յերթևեկ արկեալ կըկոց ։
  Այլ ոմն ըզգառն արկեալ 'ի յեփ ,
Բոց 'ի ներքոյ արծարծանէր ,
Շերտս 'ի մայրւոյ հերձեալ 'ի սեպ .
  Ի յորձնեռանդ սանին յալեաց
Անոյր այլ ոմըն տերևովք
Ըզճենճերոտ փըրփուրն 'ի բաց ։
  Այլ ոք յալեաց լըճին 'ի ճաշ
Բուղակաձև ցանցիւք վարմէր
Ըզկարմրախայտ ձուկն և ըզխած ։

Կէսք մրգս յոստոց քաղէին թարմ,
Ոմն ոք կաքաւս առ ՚ի խորտիկ
Յեռր ՚ի լարեալն որմնէր վարմ.
Եւ ըզգըռեալն ՚ի նմա որսիկ
Ոմք ՚ի դալար շամփրեալ յուղէշ,
Ճենճերէին ՚ի բոց յուշիկ.
Շուրջ ըզջրարբի արմանք ուռեաց
Հանդերձէր ճաշն, ուր հօլանի
Նոցին սփռէր լայնատարած.
Եւ ճաշակիցք անդ լինէին
Մայրն և դըստրիկ ընդ բազմախումբ
Գերդաստանիկս ՚ի միասին.
Գալարագեղ կոյտ տերևոց
Ընդ հօլանեան անդ յօրինէր
Նոցին բընքուշ բարձ և բազմոց.
Եւ վարսագեղ ուռեայն ուղէշք
Ըզգագաթամբքըն փարէին,
Շընչեալ մեղմօք զեփիւռք յուէժք.
Կարկաջահոս ընդ զառ ՚ի վայր
Ողլոյն վըտակ ակնակիտ
Ընդ մէջ ողորկս խճանէր գայր.
Թըռչունք ՚ի թուփս անդ երգեցիկք,
Եւ մնացուռուտ ՚ի յանտառին
Ճըճուէր ճընճղուկըն ծիծեռնիկ.
Հընչէր տատրակ քաղցր ՚ի մընչիւն,
Ձայնէր տորդիկն անդ ՚ի կընճնիս,
Ճըռնչէր ճըպուռն անխոնջ յերգոյն.
Շուրջ ընդ ոտիւք նոցա ՚ի գլոր
Վմայլին անկեալ ընդ դալարիս
Ծիրան և դեղձ տանձ և շըլոր.
Ընդ ամենայն ինչ զախորժակ
Երախանին արծարծանէր
Յորդորագոյն առ ՚ի ճաշակ.
Եւ ծերունեացն ՚ի նոսա հոյլ,

Ուրախութեան առեալ բաժակ,
Վառըն կենաց տիկնոջն հեղցը,
Ապա դըստրիկն 'ի միասին
Ընդ մօրն անտի երթայր 'ի բաց,
Թողեալ ազատ անդ ըզմանկտին.
Ոմն ըզտիկնոջն 'ի ներքս ածեալ
Զերկնաւորացն յերկրի հանդէտ
Գովէր ըզվարսըն ոլորափայլ.
Այլ ամն անդուստ զարմանալով
Զնորայն 'ի սպառ 'ի վիշտըս իւր
Զհամբերութիւնն առնոյր 'ի գով.
Այլք արժանի մօր այնպիսւոյ
Յերկնից պարգեւ գոլ ասէին
Դուստր այնպիսի բարեբարոյ.
Զի քան ըզզեղ յոյժ գեր 'ի վեր
Եւ ակներեւ ամենեցուն
Անմեղութիւն 'ի նմա փայլէր.
Եւ օրիորդն այնքան էր հեզ,
Զի ուղ ընդ ուղ թէ ազօրէր,
Չկարէր կըռուոյն ժուժալ 'ի տես.
Եւ մինչ նոքա այսպէս 'ի խիստ
Երկոյըն խոնջք՝ պարապէին
Ըզհետ ձնշուն առ 'ի հանգիստ,
Ի գործարանըս ժիր մեղուաց
Դըստրիկն ուրոյն անդր 'ի մօրէն
Հանապազօր երթայր 'ի յայգ.
Ի ծաղկաւէտ մերձ 'ի յափունս
Ի ցանկապատ հաստեալ ուղխ
Վաստակէին մեղուքն 'ի բոյնս.
Շուրջ ըզցանկօքն էին ուռիք,
Ախորժելի նոցին 'ի ծուծ
Զխրեանցն անշուք փըթթեալ ծաղիկ.
Եւ առ եզերբք լըճին ծոթոր
Անուշահոտ ծաղկէր և թիւմ,

Եւ մանուշակք անդ բուրաւոր ։
  Յորժամ նըժդեհ մեղուաց 'ի թիւ
Նոր ազգատոհմ և գաղթական
Շըրջէր ընդ օդս 'ի գալն 'ի հիւ ,
  Եւ իջանէր իբր ըղձեաւ ամբ
Պատէր պարուակըն թանձրախիտ
Շըտապարթիւ և կամ զարմանք ,
  Ի պըղընձեաց տաշտից ղօղանջ
Դըստրիկն անոյր զայն 'ի փեթակ ,
Ձեւ արեւուն ղօղեալ ճաճանչ ։
  Եւ զհամբարոյն բազմամըթեր
Ս՝ան ինչ 'ի բաց 'ի յաշնայնի
Ի յառտընին պէտըն կըթէր ·
  Զ՛ի զընտանի իրացն ըղհոգ ,
Ըռ 'ի մօրէն խըռատեալ այսպէս ,
Ընդ առաւօտն ածեալ յամբակ ,
  Զ՛քօանոյր այս ըղհետ ճաշուն
Ոսկեփայլիկ մեղուացն 'ի բոյծ
Եւ 'ի տընկոցըն ձեռատուն ։
  Ս՝երթ զանարուգ ճեղքեալ ըղձիւղ ,
Ըզպըտղաւէտ 'ի վայրենւոջ
Ըծեալ յեռոյր ըզմըրչ ընձիւղ ·
  Եւ պատուաստեալ բունն 'ի հերուն ,
Ընդ անծանօթ ծաղկունս ընդ իւր
Յառեալ պանծոյր 'ի նոր գարուն ։
  Եւ զի զըծուծ շըլորենի
Ի կարմրագեղ ծաղիկ դեղձւոյ
Փըթթեալ պըտղներ նախանձելի ·
  Եւ էր զի բուն խընձորենւոյ
Գտանէր յանկարծ ալեւորեալ
Սպիտակ ծաղկամբք ոստոց տանձւոյ ։
  Բայց լուսատու և անթառամ
Ձիթաստանին յոյժ խանդակաթ
Սերով դըստրիկն ածէր խընամ ։

Ուր անդ յոլով իւր ձեռատունկ
Զեւ եւըս փորձ սուր յատոցին ,
Եւ համատիք իւր այլք մանուկք ,
Յորոց դեռ այն ինչ հասք ինչ խուն
Ի յիւղաթորմ ձըմլեալ մամուլ՝
Տային ըզհիւթ ՚ի բոյծ բոցոյն ․
Անդըր դարձեալ եկն ՚ի խընդիր
Պըստըրիկըն մօրն իւր ՚ի յանձուկ ,
Զեւ խոնարհեալ արեն ՚ի ծիր ․
Անդ առ նովլին բազմեալ ծառով
Մայրիկն ըստէպ հայէր ՚ի նոյն ,
Եւ արտասուէր աղէխորով ․

Դուստրն .

Ո՜հ լաս , մայրիկ իմ , դու զի՞ լաս ․
Մի՛ ես լռեր , սիրտ իմ ձըմլի
Ընդ լռութիւն քո ընդ անհաս ․
Եւ ընդէր աչք քո կողկողին
Ի համր ՚ի կոճըղ ձիթենւոյդ ․
Ասա ինձ , մայր , ըզվիշտ քոյին ․

Մայրն .

Զիք ՚ի յէից համր և անխօս
Որ սիրտ թաղծեալ ․ դուստր իմ , և գետք
Թըւին նըման արտօսրահոս ․
Ինձ ամայի և անբընակ
Յամաց հետէ թըւին ՚ի սպառ
Շէնս այս և վայրք առհասարակ ․
Մինչ աստ երբեմն ես ձեմէի ,
Մանկունք զինեւ շուրջ պարէին
Խաղապատեալ յիս մի առ մի ․
Եւ մայրակոչք ինձ լինէին ,

Խանդաղատեալ զունկն իմ 'ի լուր ,
Որպէս բարբառ շըրթանց քոյին ,

Դուստրն .

Սուրէն և այլք ինձ հարազատ
Վարդք սիրուհիք և այլ եղբարք
Աչին , աւաղ , միոյն 'ի զատ .

Մայրն .

Արդ միայնակ դու ինձ մնացեր ,
Եւ տատաքանց եղէ ես ծառ ,
Թողեալ յերկրի յողք և յեղեր .

Եւ լռեցին երկաքանչիւր .
Այլ ակնարկք նոցին յիրեարս
Կողկողագինք ոչ կային լուռ .
Անխռով նոցայն էր սուգ ,
Զանկարեկիր գեղուին սիրտ
Աչաց նոցա յորդ արտասուք .
Բայց 'ի հոլիւան էր ծերունի
Աստուածարեալ ուշիւ և զգօն ,
Կերպարանաւն իսկ գեղանի .
Որոյ զտիկինն 'ի մանուկ տիս
Տարեալ 'ի գիրկ իւր էր յաճախ ,
Սածեալ 'ի ձեռն ընդ դալարիս .
Եւ հարսնութեան նորին տեսող ,
Դաշնակաւոր տիկ ըստ անձին՝
Զօրն այն երգեալ էր յիւրն 'ի փող .
Որ և զուստերցն բազմերամ
Եւ ըզդըստերց նորա զծընունդ
Եւ զմահ տեսեալ էր տարաժամ .
Վաղ իսկ գիտէր նա զերաշխէպ

Սըրտի նորին, և զմիայնակ
Նա ձիթենեաւն ողբալն ըստէպ.
Նորեն 'ի մուտըս խոնարհէր,
Եւ յամէին անդ 'ի տըխուր
Ձիթաստանին մայր ընդ դըստեր.
Գայ աւելորն անդր 'ի յանտառ,
Եւ խորագգայ 'ի սիրտ նորին
Նըգղի ողբոց նոցին պատճառ.

Հովիւն.

Սփոփեաց, դըստրիկ իմ և տիկին,
Զարտօսրալից ըզքոյին աչս
Նըմբարձ 'ի վեր, հայեաց յերկին.
Յերանելեացն անդ օթևան
Փայլեն ոսկեակք ամբիծք քոյին
Որան թէ աստեղք յարեանց կայան,
Ընդ հրեշտակացն անդ զուգապար
Եւ ընդ սըրբոցըն լուսերամ
Որեզ բարեխօսք կան անդադար.
Ի գիրկըս Հօրն անեղական
Պըրգուին յաւէրժ 'ի կեանս անմահ,
Ի յանդըրանկաց դըրօշմեալ մատեան.
Եւ 'ի դըստրիկըն քո հայեաց,
Զոր քեզ պահէն երկինք 'ի վարձ
Եւ 'ի սփոփումն քոց վըշտաց.
Պայցեն աւուրք երանաւէտ,
Զի սիրասուն ըզքեւ թոռնեակք
Շուրջ պար առեալ կացցեն յաւէտ.
Պարձցի արտօսր 'ի ցընծութիւն,
Որպէս տըխուր ամպոց ըղհետ
Ճաճանչապեղ շողեալ արփւոյն.
Օն արդ, դըստրիկ իմ և թոռնեակ,
Պարձցուք 'ի յարկըս մեր զըւարթք,
Աստեղազարդն եհաս երեակ.

## Մայրն.

Ո՛վ երբ ըղձայր ինձ սիրելի ,
Նու քան ըղձայր ինձ առաւել
Աստակաւոր դու ծերունի .
Յոյժ իսկ քոյոց շնորհ ունիմ
Հայրագորով ընդ իս խնամոց ,
Յոր միշտ գըտայր հաւատարիմ.
Աւրա իմ ընկճեալ ծանրաթախիծ
Յանանցն 'ի յոյս արծարծանի
Ի հոգեբուղխ քոյոց բանից .
Իբր ընդ երեկ ծաղիկ թարշամ
Պաղարագեղ զըւարթացեալ
Ի զովացին ցօղոյն 'ի նամ ,
Նրթ ժողովեա ըղձովեաց պար .
Ընդ միշտակայց հոյլս և հարսանց
Կացցեն պատրաստք հանդուամբ ,
Նո՛կ , դուստր , հատոյցին արդ փառըս տանք .
Թեպետ դառինք մեզ թըւեացին ,
Նորայն 'ի մեզ լիցին միշտ կանք ,

# ԳԵՂՕՆՔ Բ.

## ՀՈՎԻՒ ԵՒ ՀՈՎՈՒՈՒՀԻ *

Հովուուհին.

Թող զերամակդ, հովիւ բարի,
Ի գալարուօղ այգը 'ի վայրի.
Եւ ընդ բըլուր եկ ընդ վիմս
Հանգիր վայրիկ մի աստ առ իս.
Օ՜հ ձմեռն եանց, անձրևք անցին,
Ծաղիկք յարտորս մեր փըթթին.
Ձայն 'ի յաստոց շուրջանակի
Հընչէ 'ի յունկն իմ տատրակի.
Նուշահոտ ծաղկեն այգիք,
Գեղեցկագոյն ամն է այժմիկ.
Եկ, զի ոչ ինչ է ինձ հաճոյ,
Եղբօրորդեակ իմ, առանց քոյ.

Հովիւն.

Ինձ, քոյր իմ հարսն, յոյժ տըխրական
Օրընաշաղեղդ է տեսարան,
Զեւ զկորուսեալն իմ ոչխարակ
Ի մերս այսրէն ածեալ 'ի բակ.
Ունծի 'ի կաթն ըզնա առատ,
Եւ 'ի ստենէ այն ինչ անջատ
Մրանծէի զնա ընդ օդիս
Պարարտարօտ 'ի գալարիս,

* Այլաբանութիւն երգոյս հայի 'ի փրկիչն մեր Քրիստոս և 'ի սուրբ եկեղեցի, և յորինակ աւետարանական հովուին, որոյ թողեալ զիննսուն և զինն ոչխարսն յանապատի, երթայ 'ի խնդիր կորուսելոյն.

Նաւ առ վըճիտ վըտակս 'ի յուռթ
Ծփէի զնա խաշանցս ընդ խումբ.
Նաւ ընդ արօտն յորժամ գիշէր
Ի ցըրտագին ըստուերսն ածէր,
Ու 'ի գայլոց զերծ 'ի փարախ
Զնա 'ի ներքս առնուլ նախ.
Ո՞ արդ յարօտն ածցէ ըզքեզ,
Ո՞ 'ի վտակ ոչխարդ իմ հեզ.
Արդ անտէրունչ լեառն ըզլեռնայն
Յածեալ շըրջիս թափառական,
Զհետ հովուիդ բառաչելով,
Մայրից լերանց արկեալ գորով.

Հովուուհին.

Մի՛ ընդ կորուստ անկցի միտդ
Սիրտ քո, հովիւըդ բարեգութ.
Ի ծաղկաւէտ աստ 'ի յարօտ
Դեղ բազմերամ թափառի հօտ,
Նաւ երկուորեակ գառինք 'ի ծած
Ապաւէն ըզյոյր ըստինս այծուց.
Փարթամք 'ի կաթն եւք ձիւնեղէն,
Նաւ 'ի կոգւոյ ձօխք 'ի պարէն.
Իսկ յորժամ հունձք հասցեն կըրկին,
Մեզ խաշն յոլով անդրէն երկին
Փոխան միոյս տացէ այսմիկ՝
Որ 'ի հօտէդ կորեաւ այժմիկ.

Հովիւն.

Չար արդեօք ժանեաց գայլուն
Ընկաւ ոչխարն իմ ձեռասուն,
Ում թօթափեղ եւ ցըրտաբեկ
Ձըրկէի զցայգ եւ ըզցերեկ.

Ո՛չ եւս յիշես, յորժամ գետոյդ
Յորդեալ ալիքն ողողապատոյտ՝
Գունդն 'ի հետ ըղձօտ խաշին
Խեւ յորձանօքըն վարէին,
Ո՛րպէս ըզգաստըն կաթնաբոյծ
Սատակմանէն 'ի ջրահեղձոյց
Էջի 'ի ծայր անդր 'ի բըլրոյ՝
Բարձեալ ըզքաղցըր բեռն 'ի յուս :
Եւ յանըզգոյշ 'ի մանկըտւոյն
Մի՛նչ խանձ մայրւոյն անկեալ 'ի բուն,
Ընդ խըղաթուրմ արմին կեղեւ
Պատեալ զանխուլ հուրն 'ի ստորեւ՝
Սողոսկեցաւ ապա ընդ ոստս
Ի ճարճատուն որոտընդոստ,
Եւ ճարակեալ յաղթող բոցոյն
Մի՛նչ հըրդեհեր զանտառն ողջոյն,
Բարդեալ 'ի բարձր 'ի յամպս ըզծուխ
Ըզկըպըրային ճենճերով թուխ,
Ո՞չ յիշես նըր ըղնա 'ի գերծ
Էջի յայնժամ խաչամբքն համդերձ :

Հովուշունիկն.

Օ՜ խորդ կարեմ մոռանալ զայն .
Քեզ յոյժ ամիկն էր սիրական :
Նըման 'ի գեղմն իւր գեղանի
Էջեր ըզգըրօշմըն ծիրանի,
Եւ սոէպ տայիր ինձ զանասնեակն
Էր 'ի վնոքայն փոքրել գլխակ .
Զըքնաղ 'ի շուրթն անդր 'ի սանտեր
Սպիտակ կարմիր ատըըն խառնէր :
Ո՛հ, ոչխարակն ընդէ՞ր կորեաւ . . .
Ե՞ւ դու սփոփեաց յուսով բարեաւ :
Էսա, ուր ուռեաց ատբ խիտ առ խիտ

Կախին ըղձուրբս ականակիտ ,
Բաղձեալ բլրոյս դու 'ի ստորոտ ,
Նշդես 'ի նուրբ քոյին ծըղոտ .
Ծանօթ ձայնիդ թերևս 'ի լուր
Դարձցի ոչխարն առ հովիւ իւր .

### Հովիւն .

Յանկարծ գտանել եթէ ինձ գոյր
Ըզքեզ ոչխարդ իմ ձիւնաթոյր ,
Զուարթ ըզքէն յօրինեալ տօն ,
Զքեզ անմահին տայի 'ի ձօն .
Դու քաղցրագոյն հովուիդ ես քում ,
Քան քեզ արօտ և մեղուաց թիւմ .
Թողեալ ըզհօտն իմ , վըշտակիր
Շըրջիմ ըզհետ քո 'ի խնդիր .

### Հովուուհին .

Ահա զպատկեր նորին վըճիտ
Հայիմ 'ի խորս ալեաց լըճիդ .
Ահա բլրոյդ նա բարձր 'ի սեպ
Կացեալ 'ի վայր անհարկէ ստէպ .
Հայեաց 'ի վեր , ուրախ լեր արդ ,
Հովիւըդ քաջ գըտեր զոչխարդ .

### Հովիւն .

Մեծ է ինձ յոյժ , եթէ ստուգիւ
Ինձ անձկալին այն ծագէ տիւ ,
Յորում տացի գըգուել դարձեալ
Ինձ զոչխարակն իմ կորուսեալ .
Ա՛ հարսնուհիդ բարեաց գուշակ ,
Կեցցես յանկէտ դու պարոնակ .

Դու հովուուհեաց 'ի մէջ հարսանց
Դու այնքանիցըս գեղազանց ,
Որչափ գոհար վարդ կարմրերփեան
Քան ըղձալիկըս դաշտական .
Եւ քան զամէն փայտս անտառի
Որքան շըքեղ է խընձորի ,
Յղեա հրաւէր շուրջ առ գըրացիս ,
Գայցեն ուրախ լինել ընդ իս ,
Զօրհներգութեան առեալ նըւագ ,
Զի գտի զօգտեալն իմ ոչխարակ ·
Բարձեալ 'ի յուս ածից յօժար
Ի տէրունին զայն 'ի տաճար ·
Եղջին 'ի նարօտ ոսկեգիսակ ,
Գեղապաճոյճ ծաղկապըսակ ,
Կեցցէ հատուլին ձօնեալ 'ի նուէր
Ընդ անկորուստ ոչխարակ մեր ·

## ԳԵՂՕՆՔ Գ.

## ԿԻՒՐՈՍ ԵՒ ՎՐԷՆ

Կիւրոս.

Յանկարծ և ես էի հովիւ '
Ընդ աղքատին բնակեալ հիւղիւ ,
Եւ զգեղեցկաբարձ ուլից հօրան
Արածէի հովուացդ 'ի վրան ,
Կամ թէ զհասուն ընդ ձեզ ողկոյզ
Քաղուէի կըթոց 'ի յուս ,

1 Յայտնի են վէպք մեծին Կիւրոսի, զի ըստ անրջական երկիւղին Աժդահակայ հաւոյն իւրոյ' 'ի ծնանելն իւրում արկեալ յանտառս, սնաւ անդ ընդ հովիւս իբր որդի աղքատի հովուին, և ապա 'ի ձեռն Արբակայ Թագաւորեալ ·

Եւ 'ի յանտառս հովանախիտ
Ի կարկաջ ջուրց ականակիտ
Բազմեալ անհոգ գոհ և անտենչ,
Որպէս ըղձի հովուայդ 'ի ձէնջ,
Ընդ վարսագեղ կաղամախիք
Նուագէի 'ի ծղօտ գեղջուկ,
Եւ 'ի կերկեր ձըլպանց 'ի ձուկնչ
Հանգչէի քաղցր ընդ ձեզ 'ի նինջ.

Վրէն.

Սակայն տատ 'ի քեզ այդքան
Իղձք ընդ կենցաղս այս հովուական.
Իցէ՞ երբէք առեալ քո զփորձ,
Հովիւ եղեալ կամ երկրագործ.

Կիւրոս.

Ոյսպէս փութով, Մըրէն, դու զմեզ
Ի բաց յուշոց քումդ մերժես.
Ո՞չ աշնայնոյն ըղձօղաւոր
Խաղովկեաք ընդ քեզ խընձոր,
Եւ զկարմրորակ նուռն 'ի յերեար
Ընդ ծաղկաւէտ դլէաք դալար.
Եւ վաղեմի հազնոյն 'ի ծերպ,
Որ ամբառնայրն առ գետեզերբ,
Ո՞չ դու 'ի նմա դարանէիր
Զըգեւ զյուռնապ յիս ըղկարմիր.
Եւ զշագանակըս կաթնալից
Ի բարձրուղէշ կողերց ծայրից
Ո՞չ 'ի ձապուկ հարեալ մահակ
Եւ կամ քարամբք թօթափեաք.
Եւ ծերունւոյ ընդ հօր քոյին
Մ՝ինչ հովուէաքն 'ի միասին,

Ձեւ լոկ, Մըրէն, գայ քեզ 'ի յուշ
Զի բազմաձայք յարօտ քընքուշ.
Նա քաղցր 'ի նուրբ երգէր 'ի սրինգ,
Եւ կայթս ըղձեօք տային խաշինք.

Վրէն.

Ո՛ հովուակիցդ իմ եւ եղբայր,
Որ արդ պաշտիս բախտին 'ի ծայր,
Ուր եւ 'ի հիւղըս մեր գըծուծ
Հընչէ համբաւ յաղթող զինուց.
Ըզքեզ Երասխ ըզքեզ, Կիւրէ,
Շօշ եւ Բաբէլ արդ մեծարէ.
Եւ զի թողեալ քո զարդունիս,
Ի մէջ հովուաց աստ դեգերիս.

Կիւրոս.

Ըզխաշն հովուել գէթ սուղ ինչ ժամ
Ի դալարուտս ընդ քեզ ցանկամ.
Ըզձեռանէ խնձէ զաջոյ
Ոճնել երկնից եղեւ հաճոյ,
Եւ ամբառնալ զիս բարձր 'ի գահ,
Ի Բաբելոն հորդել ինձ ռահ.
Սակայն բարձաւ յինէն հանգիստ,
Զոր անդր ծածկեալք յատոք 'ի քիստ
Պճեղածըփեալք մեղմ 'ի զեփիւռ,
Եւ ընդ արօտըս համատփիւռ
Հօրանք ըղձեօք շուրջ պարառը
Յօրինէին մեզ աստանօր.
Ի ստուեր նոճեացըս բարձրուղէշ,
Զոր յարդունիս յիշեմ յաւէժ,
Ըզէ՛ սկսիր երգել դու ինձ,
Ես ըզխաշինըդ դիտեցից.

Վրէն.

Զոր 'ի դալար նոճոյս 'ի բուն
Թանգակեցի նըւագ ինչ խուն,
Զայն փորձեցայց առնուլ 'ի յերգ.
Աչ խիկ աստ խուլ են մեզ այերք,
Մերաձայնեն լերինք և բլուրք,
Եւ անտառին ծառք թաւամուրք.

Կիւրոս.

Ա՛հ, ծերունին թէ կեայր մեր հայր,
Զիմ բախտ 'ի սրինգն ընդ քեզ ողբայր.
Նա 'ի կապեն ինձ թագ 'ի գլուխ,
Յոլով եհեղ արտասուաց ուղխ.

Վրէն.

Աւա՜ղ փառաց անցաւորի.
Որպէս վըտակ ընդ դալարի
Մէտ մէտ ալեօքըն սողալով,
Մաղվաղ 'ի ձեմ դիմէ 'ի ծով.
Իցիւ չէին լեալ լսելի
Ուռնադըղորդ կարծր 'ի սալի
Կոփիւնք զինուց արիւնահեղ,
Եւ ոչ փողոց հընչումն ահեղ.
Ա՛վ երջանիկ դու անապատ,
Որ 'ի շկահմանց զինուց ազատ,
Իզմըշակին գիւղ և խաղաղ
Եւ ըղհովուին գործես կենցաղ.
Սաղարթախիտ թուփք դեղանի
Լերուք խաչանցս իմ հովանի.
Նոցունց 'ի բաց չէք այլ ինձ հոգ,
Եւ ոչ քան զիս բարեբախտ ոք.

## Կիւրոս.

Չէք, և կարի խոկ յիրաւի,
Չէք քան ըզքեզ որ 'ի յերկրի
Նշանաւէտ, Թէպէտ 'ի վեհ
Պերճածայրեալ բախտին նըսեհ,
Նոճիք բարձունք դուք ինձ վըկայք,
Մըգերը վըճիտք դուք և վըտակք.
Յորմէ-հետէ Թողի ըզձեզ,
Մըշտկոծիմ հոգս 'ի պէսպէս.
Նա ոչ երբէք յանդգայր 'ի նինջ
Նըղեւ հանգչել ինձ վայրկեան ինչ,
Նըդուեալ յարեւդ, հոլովիկ Մ ըրէն,
Մ՚իշտ անմոռաց հոգամ ըզքեզ.
Մալ հայրենիդ 'ի տաղաւար
Նման այսր ըզքեզ Թողի ցայսվայր.

## Վրէն.

Շատ խոկ սիրոյդ ինձ աներկբայ
Նոււր, Կիւրէ, զուռհաւաստեայ.
Դու զցանկապատըս զայս անձուկ
Ընդարձակեալ արտօրէխք,
Նա ըզըլըրակս իմ և զարօտ
Դու ծածկեցեր խաշանց 'ի հօտ.
Շուրջ Թափառին զինեւ զառինք
Յոր վայր հոլուխս լըսի սըրինգ.
Լընուն պարարտ կաթամբ ըզտաշտ
Ճարակաւոր արջառքս 'ի դաշտ.
Օէղուն 'ի բերս որԹոց հընձանք,
Նա արմըտեօք ինձ անդաստանք.
Մ՚երԹ 'ի հօտին մերԹ 'ի յայգեաց
Ներկլիմ 'ի խնամ շըրջիմ 'ի յայց.

## Կիւրոս.

Թէ նուաղագոյն սուղ ինչ՝ րոպէ
Հոգ արքունեաց զիս տագնապէ,
Զնախկի կենացս 'ի պարտէզն իմ
Ըզբօսլ 'ի յուշ անձեալ սփոփիմ։
Ինձ ձեռատունկ մայրիք ուղիղ
Ընդ երկուստեք կազմեն շաւիղ՝.
Իբր յընդարձակ դաշտի ճամբար
Զեւ ճակատուց խառնեալ յիրեար,
Մ՛ինչ վարանեալ գըժնեայ և մէս
Ճեմի 'ի մէջ ռազմիցն Արէս։
Բայց է արդէն մեզ երեկոյ,
Դառնայ ազատ եզն 'ի լծոյ.
Նշրինջք ըղխոյն ահա փայլուն
Դանդաղաքայլ անձեն 'ի տուն,
Եւ երկայնին ստուերք լերանց.
Վրանի փութով մեզ պահս էանց։
Բարեաւ մնա. ահա մեկնիմ,
Այլ ոչ 'ի քէն մեկնի սիրտ իմ։

## Վրէն.

Ողջամբ, Կիւրէ, դու միշտ կեցջիր.
Թէպէտ 'ի մէնջ դու տարագիր,
Այլ յարքունիս կեցեալ հովիւ,
Զբախտին անշարժ կալցիս զանիւ։

1 Թէպէտեւ սէր մշակութեան եւ խնամք յիւրական պարտիզին զկրասերոյն Կիւրոսէ պատմին 'ի վէպս, այլ զի Թագաւորք Պարսից նախնիք մեծարէին զմշակութիւն, ապա եւ տաւել որ յանտառս անեալն էր։

# ԳԵՂՕՆՔ Դ.

## ԾԵՐՈՒՆԻ ՄԵՐՁ Ի ՄԱՀ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ ԻՒՐ

*Որդին.*

Ասա ինձ , հարսն իմ , ծերունին զիա՞րդ կեայ ։

*Հարսնն.*

Ի՛ մեզ նըշոյլ յուսոյ ոչ ինչ դուզնաքեայ .
Ի մօտալուտ արդ յօրհասէն մազապուրծ
Թողի առ դուրս այրին ըզհայրն հեծաւորց ,
Նա հայրօրէն խնամովք ըզմէնջ հոգայ ցանդ ,
Նա զիս յըղեալ՝ մոռացեալ զիւրն ըզվըտանգ ։
Ո՛հ , ես ըզայս աչաց նըմին մըտադիւր
Տայի , յանկարծ թէ հնարաւոր ինձ այս գոյր ։
Յորմէ հետէ եղէ քեզ հարսն երանեակ ,
Ու արամբեմ զուլից ընդ քեզ երամակ ,
Նա զգութ իւրոց վաղամեռիկ զըստերաց
Յիս հանօրէն փոխան երկուցն ամփոփեաց ։

*Որդին.*

Ոչ տարապարտ նորայն ընդ քեզ անկաւ գութ ,
Այլ փոխարէն քումդ ընդ նըմա սէրտ սիրոյդ .
Նա զլաւութեանցն իւրոց 'ի քեզ ըզպատկեր
Այն ինչ ետես , լուցաւ յոգւոջ նորա սէր .
Զի 'նդ այգախուսմ գեղջ չըքնաղ այդքան ձիրք
Ոչ յումեք բաց 'ի քէն գըտան զուգակիցք .
Իսկ դու զարդարեացդ 'ի քեզ մասունս երփնանակ
Ծաղկես անպարծ որպէս համեստ մանուշակ ։

Դու դէտ վայրիկ մի կաց հօտին աստանօր ,
Զոր ոչ աստի հովուէ մանկիկն հեռաւոր ,
Ես կանխեցից , չեւ երկայնեալ ըստուերաց ,
Յայժմէն 'ի հիւղ մեր ծերունւոյ հօրն 'ի յայց .

Ծերունին .

Որդեակ առ ինչ գաս , տակաւին է մեզ տիւ .
Ընդէ՞ր և ում թողուս ըզխաշն անհովիւ .

Որդին .

Դարձ 'ի խրճիթակ քո ընդ յարկաւ հանգիր , հայր ,
Զօրէն ահա արդ խոնարհի յերն 'ի մայր .
Ճառակաւոր 'ի ծաղկաւէտ դալարիս
Թափառի խաշն առ գետեզերբն 'ի հովտիս ,
Սիր ըզջրարբի թումբն 'ի մատաղ եղեգնուտ
Ծածկէ Երասխ մանուածաւալ 'ի պտոյտ .
Ցարդ ըզնոսին արածէի ընդ արօտ ,
Նուագս 'ի նուրբ դաշնակելով 'ի ծղօտ .
Թողեալ մանկանն իմ զերամակն արդ 'ի խնամ ,
Իջքէն 'ի հոգս այսըր կանխեալ առ քեզ գամ .
Զուարթ ինձ յոյս հարան իմ այժմիկ եւ ընդ ուղ ,
Այլ տագնապէ կասկածագին զիս երկիւղ .
Զի գարնայնոյ ճաճանչագեղ արփւոյն շող
Ի թձընկէց փոյթ 'ի յամպոց ծածկի քօղ .

Ծերունին .

Բիւրս ինձ , որդեակ իմ , բիւրս ինձ տամ երանի ,
Զի այդպիսումդ եղէ որդւոյ արժանի .
Սամ մըտադիւր թողուամ ըզգուշաս հովուական ,
Մ՛երձեալ կենացս իմ աւասիկ 'ի վախճան .
Բայց հոյլք խաշինն և արջառոց զիա՞րդ կեան ,
Ծաղկէ՞ն այգիք , պտղաբերէ՞ անդաստան .

Զի զզօրութիւն յինէն աւար հարին ամք,
Ոչ ես 'ի յայց շրջել նոցին զօրէն կամք.

## Որդին.

Յաւէրժ մայրեաց յաւելցին, հայր, ամք ըզքեւ.
Եւ մի տեսցեն որք 'ի քէն աչք իմ զարեւ,
Այլ ըզխաշանց եւ զանդոց ինձ թող ըզհոգ,
Եւ մի, հայր, սիրտ քո հաշեսցի ըզնոքօք.
Հունձք աւելի են քան հընգեակք հընգերիր,
Հովուեմ ընդ քեզ, վարեմ զակօս ընդ երկիր.
Չեմ ինչ համբակ, ոչ անհըմուտ ինչ 'ի գործ,
Ի հայրենիդ վարժեալ հրահանգս եւ 'ի փորձ.
Դու զանդաստանս այս յօրինէր գեղանի,
Որ չէին 'ի հերկ յառաջագոյն պիտանի
Ոչ 'ի յարօտ խաշին եւ ոչ յայգեստան,
Այլ անջըրդի ամուլ անբեր եւ խոպան.
Դու զարմըտիս փոխան փըշոց բուսուցեր,
Քեւ ծածանին անդքս 'ի յորայս հասկաբեր.
Ծածկեն զարօտս հօտք համաւրիւռ եւ նախիր,
Ուր դարաներ աղուէսն եւ խլուրդ երկրաբեր.
Ծիրանեփայլ կակաչք, շուշանք ձիւնաթոյր
Զըմնադագեղ պըճնեն ըզդաշտ եւ ըզբլուր.
Զեղուն գինւոյ եւ արմըտեաց մեզ մըթերք,
Եւ ըզսեղան մեր ընդոծինք լընուն բերք.

## Ծերունին.

Այլք թխակօք ըզկայր անդունդըս յուզէն,
Ի հուր մատնէն կէսք ըզքաղաքս եւ 'ի զէն,
Զի յոսկեկուռ յականակապ 'ի բաժակ
Ըզծաղկահամ արբցեն գողթնեան զանապակ.
Այլք զխնդրաւ կըռուին ընդ խութ եւ ընդ խոչ,
Ես 'ի նընջել 'ի տիրացի ծիրանւոջ.

Կէսք շրնչասպառ պեղեն 'ի բովս զոսկին,
Ի ձապաղխ այլք 'ի յարեան ներկանելն.
Այլք տարագէմ փոխեն ըզսեամս ընտանիս,
Եւ ընդ օտար երկնաւ խընդրեն հայրենիս.
Իսկ ըզպարէն իւր ժիր մըշակն 'ի յերկիր
փայլուն խոփովըն պատրաստէ ըխաղիր.
Եւ անդըստին ըզմանկըտեակն իւր տածէ,
Ընկերկեան առ 'ի տոլոյն արկածէ.
Հանգչի անհոգ ընդ հովանեաւ քաղցր 'ի նինջ,
Եւ առ նըսմա խաշն և արջառ և երինջ.
Նա թագաւոր է 'ի ոլորտին մեծայաղթ,
Եւ ոչ ըղձուասա զխուրն ընդ նորայն փոխէ զբաղդ.

## Որդին.

Ահա մանկիկն ընդ հօտն այարէն հասեալ գայ,
Եւ մայրն ըզհետ նորին ոչ ինչ 'ի բացեայ,
Ծաղկամբ հովուիկըն պըսակեալ զարդեաւ,
Եւ հովուհւոյն լըցեալ ցօղով վարսքըն սեաւ.
Խաշն 'ի փարախ ահա դառնայ կըշտացինդ,
Արծաթափայլ 'ի շող լուսնին առեալ թինդ.
Եւ ծանրաբեռն բատեամբք 'ի յոյր կաթանէ,
Արջառն ընդ սեամս հաղիւ զանձն մըտանէ.
Որդեակ իմ, ա՛րկ մի մի զզուա 'ի հանդր,
Գուցէ գըտցէ զոք արտաքոյ գազան չար.
Տես զի մի այծն ըզքեզ 'ի կոյն 'ի վըխժակ
Հարցէ, 'ի բակ գաւթիդ վարեալ զըժկամակ.
Հովուիկըդ քաջ, ըզքեւ մայրիք և լերինք,
Ըզքեւ առուեզք հովանացեալն և երկինք,
Խաղապատին ըզքեւ զառինքդ աւաղիկ.
Եւ ճանաչէ զձայն քո առընդեայն դեռ ամիկ.
Սաղարթագեղ որթոյ ողկոյզ ցօղաւոր,
Եւ ոսկեփայլ հունձք ծածանեալ 'ի ծործոր,

Իսկ դու քոյոցըդ, սիրեցեալդ իմ որդեակ,
Իսկ դու քոյոցդ ես զարդ ծնողաց և պսակ.
Մնաց, բուսակ չքնաղ, բուսակ բարեբաստ.
Լիցին երկինք քեզ զօրավիգն և նպաստ.
Եւ հովուեսցես քեզէն խաշինդ հօտ ընդ հօտ,
Զհայրենատանդն իմ ժառանգեալ քո ըղձում.

Հարսնն.

Զայն ինձ սրընգի կած զեփիւռ քաղցրաշունչ,
Մինչ հաւաքեալ յօրինէի ես 'ի փունջ
Բզխրոխտ կակաչ, ըղյակընթեակ երփնագոյն,
Եւ զմանուշակ անուշահոտ և ցածուն,
Իջի առ խաշն, և իբր հովիւ մի հըմուտ
Ահա նուագէր մանկիկն 'ի ծղօտ բեկանուտ.
Բաղցր 'ի հովտիս երգէն սոխակ և սարեկ,
Այլ քաղցրագոյն երգէր որդեակն իմ հովուիկ.
Տեսի զըըթանցըն շարժեալ մեղմ 'ի բեկբեկ,
Եւ ընդ ծակտոմն զմատաղ մատանցն երթևեկ.
Արկի նըմա զիրկս և համբոյր մայրենի,
Զծաղկունս 'ի հիւս վարսիցն ածեալ գեղանի.
Եւ զհօտն արկեալ 'ի ցանկափակն 'ի գաւիթ,
Արդ զամք 'ի տուն քո, երջանիկ ծերունիդ.
Այլ երբ, աւա՜ղ, խաբեաց զիս յոյս յեղյեղուկ,
Մերթ ցընծութիւն մերթ պատրաստեալ ինձ ըղձուգ.

Թոռնեակն.

Հայր ես ըզքէն նըւագէի երգ թախիծ,
Ազերս արկեալ լերանց բըլրոց և մայրից,
Զի շնորհեցեն ըզծերունիդ իմ ինձ հայր,
Կեալ ընդ ծնողացս և ընդ թոռինդ յամս յամայր.
Սակայն նորին իսկ թըւէին ինձ յեղեր.
Յետս 'ի ժայռից ասանըր ողբոցս իմ պատկեր.

Հարսնն.

Ճմլէր ըզսիրտ իմ յողբաձայն դայլայլիկ,
Բան ըզհատակն իւր գեղըգզօնդ իմ մանկիկ.
Յաճախ 'ի գնին երկնից եղեալ ինձ գուշակ,
Զամպրոպ վաղուին գուժել անդոյ և գխորշակ,
Այժմ աւասիկ կամացն երկնից կանխատես,
Ըզհայրենին դա զգամն որհաս գուժէ մեզ։

Որդին.

Յանկարծ երկնից թէ լըսելի լինէին
Աղխողորմ իղձք և աղերս անմեղին,
Նա զկայ քո, հայր, առնոյր կենացդ երեկոյ.
Զի ցանկալի մեզ քան զարեւ են կեանք քո։

Ծերունին.

Շատ իսկ կեցի. ընդ երկնաչուն այժմ ընդ ռահ
Ուղևորել է ինձ, որդեակ իմ, 'ի ձահ։
Կեցի յերկար. յերկարագոյն զիմ կենցաղ
Յօրինեցին աւք երջանիկք և խաղաղ։
Որդի և հարսն ինձ ըստ սրտի և թոռնեակ
Նստուն երկինք, ծածկեն զարօտս իմ անդեայք.
Ոչ լիագոյն քան զիմս հընձովք ակաղձուն
Ածին երկինքք ումեք յանդոյ զայլ 'ի տուն,
Անփորձ ցաւոյ կեցեալ 'ի հեւղս յայս նըսեմ,
Յօժար ըզյամս որհաս մահուս ողջունեմ։
Լեր դու, որդեակ, հաստոյն քում փոյթ 'ի պաշտօն,
Վաստակասէր իբր ըզմեղու և գործօն.
Մ՛ի զհայրենի թողուր կենցաղդ և ըզդաշտ,
Երկինք յաւէրժ լիցին այսպէս ընդ քեզ հաշտ։
Ի համբերութեան յայս և յանձուկ ցանկապատ
Յաշխարհածուփ աւեաց կեցի ես ազատ,

Իբր եղեւն 'ի յանտառի երկնաբերձ
Զառամացեալ 'ի յարկածից ծովուն զերծ ,
Ոչ ընկալայ , և աւանդեմ շունչ զիմ առ .
Ոչի յարեայց յերկնահրաւէր փողոյն ազդ ,
Այլ արդ , որդեակ , զարտասուանս իմ կախ .
Ողջամբ մնա , զանձինն իմ առ տուր հողոյ ,

Հարսնն .

Զարմանալի ինձ քո ամբիծդ էր կենցաղ ,
Որդ զարմանամ ընդ մահ քո նոր և չքնաղ .
Յերկրէ յերկնից թռչիս թեթև 'ի կամար ,
Ոչ զանակերպ փոխեալ եւեթ ըզդադար ,

Որդին .

Ողբեալ լերինք ինձ ողբակիցք և անտառք ,
Ողբեալ լացցեն ընդ իս խաշինք և արջառք .
Ախմակառոյց քեզ կանգնեցից առ շիրիմ ,
Եւ մի եղծցէ զայն ժամանակն ոխերիմ .
Տրխուր զնովաւ արկցեն ոտնիք հովանի ,
Քոց վերնաձեմ ըղձիցդ 'ի տիպ գեղանի ,
Եւ ցոլշափ խաշն արածեսցի ընդ արօտ ,
Եւ ընդ հովիւ բարէ շուշան քաղցրահոտ ,
Մեղուք 'ի թիւմ, Ձրպրունք 'ի ցօղ պարարին ,
Դու յիշեսցիս միշտ առ թռունքս քոյին ,

# ԳԵՂՕՆՔ Ե.

## ՎՐՈՅՐ ԵՒ ԱՌԱՆ ՀՈՎԻՒՔ Ի ԲԵԹՂԵՀԷՄ

Վրոյր.

Գիտիցե՞ս, Առա՛ն,
Զի ծնաւ մեզ արքայ.
Յոյս նորանշան
Զիւրեւ ցոլանայ ։
Աստղ 'ի յերկնէ
Զեղեալն 'ի մեղի
Լուսաւորանէ
Փրկիչ աշխարհի .
Արքայք գերապանծ
Որ նա խոնարհին ,
Եւ զօրք 'ի բարձանց
Նուիրաբերք նորին ։
Ո՛ն առեալ և մեր
Նոցին արդ ընդհետ ,
Մատուցուք նուէր
Յայրն երկնահանգէտ ։

Առան.

Ըղձոյն խոկ և խոր
Ըծեալ ըզմտաւ ,
Այլ յոյժ փարանիմ
Եթէ զինչ բնաւ
Հովիւք աղքատորք
Տանել կարիցեմք
Որ ոչ թագաւորք
Ի յայց գան վսեմք ։

## Վրոյր․

Մ՛ի ինչ վարանիր ․
Ոչ գանձս 'ի հովուաց
Խնդրեսցէ 'ի ձեր
Մանկացեալն Աստուած ։
Այլ մեր աղքատիկ
Այս լիցին նուէրք ․
Ընծայեմ ես սրբինդ ,
Դու ներկուռ 'ի յերգ՝
Երգեա զյաղթանակ
Գառինն օձասպան ,
Մ՛ինչ ես ըղնըւագ
Հարից հովուական ,
Եւ քան զամենայն
Նուէր մեծարգոյ ,
Լիցի Մանկանն այն
Երգըս մեր հաճոյ ։



# ԹՈՒՂԹ Ա.

*Համբակք Պոլիմնեայ և Կալիոպեայ,*
*Կեցցէք Ալէքսիս ընդ Մենալքասայ [1].*

Մի թէ ՚նդ յարկաւ Մուսայք բնակեն.
Մուսայք ըղձայր սիրեն զանչէն,
Յաղբերականց ՚ի յորդ խոխոջ
Հընչէն քնարայըն թելք դողդոջ.
Ուր սարդենիք լըռեն համրք [2]
Թէ արձակին անդ Մուսայք յերգ,
Հովանախիտ ՚ի դալարիս
Ընդ ճանաչեմ ես զԱլէքսիս,
Նա ընդ հովիւըն Դամետաս [3]
Յանդս և ՚ի գիւղս ըզՄենալքաս,
Ուր ըղձերգին եթող զիւր հետ,
Մինչ Աստրէա [4] չուեաց յերկրէդ.
Պատգամաւոր չիք առընթեր,
Յիս Մուսայից անձեւ հրաւէր [5],
Մինչ ձրըընչէն ըստեպ մամուլք,
Գըրիչք անդէր կացցեն ուսմունք [6].
Խաղաղասէր ըզՄուսայն հեզ

1 Ալէքսիս և Մենալքաս քերթողական անուանք են երկուց կրօնակից եղբարց Նամակագրին, որոց ՚ի գեղջէ գրեալ էր առ նա քերթուած ինչ՝ պահանջելով զպատասխանին:
2 Զի շուրջ զեկեղեցեաւ, ուր գրէր քերթողս, պատեն սարդենիք:
3 Դամետաս է մի ՚ի հովուաց, զորս ընդ Մենալքայ մուծանէ Վիրգիլիոս ՚ի հովուերգութիւնս իւր:
4 Աստրէա, դիցուհի արդարութեան:
5 Քանզի Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան, յորդորիչ քերթողաց, ՚ի գեղջ կայր հեռի ՚ի քերթողէս:
6 Քանզի ուղղագրութիւնք տպագրութեանց յաճախաւորք խափան լինէին քերթութեան:

Աշթեւեկաց խռովէ Հանդէս [1].
Ապա թէ ոչ, ոչ և Ռամն [2]
Ըզքերնդն 'ի բաց դընէր հաւան.
Նաև զՊիմալայն իւր աններկուն
Յիս շընչեցոյց զայս տաղ ողջոյն.
Ընդ անդադար յուզումն ամպոց
Եւ ընդ անձրեւըս բազմահոծ,
Սիրտ իմ թախծեալ, հեծեմ տըխուր.
Յերբ ինձ երկինք իջեն անլուր.
Յերբ մարգարէքըն սուտք Հերայ [3]
Պըշմարտեցին 'ի ձեր վերայ.
Ինձ զաշնայնոյն, ով սիրելիք,
Զաղէտս ամեաւ դուք յուշ ածիք,
Զոր ոչ կարեմ աչօք անթաց
Յիշել զայն օր անպուրծ 'ի մնաց.
Գարնանազգեստ միայն Պրենդէս [4],
Խնայող Մուսայք, թըռեցաւ ձեզ.
Սակայն Պրենդէս միշտ է մօտ,
Եւ ոչ 'ի ձօր իւր պատուրի.
Սով ընդ հանուր և աւերած
Գրնաց ալեացն իւր հետընթաց.
Ի յեզեւին յարկածածուկ [5]
Յորմէ հեռէ մեկնեցայք դուք,
Որ ըստ օրէ ժամէ 'ի ժամ
Պարզելոյ էս օդոց մըհամ.
Զայս միշտ խօսիմ, այս է ինձ փոյթ,
Յիշատակաւ ձերոյ սիրոյդ.
Նորդ կարեկից եղեն երկինք,
Նման է արդ, թէ ոչ խաբինք.

1 Զի յաճախեն և յաճախեն յոյժ հիւղք 'ի տես վանաց որբոյն Ղազարու.
2 Արամ, քերթողական անուն վարժապետի քերթողիս.
3 Մոռէօռլէօ Հէյզով, այսինքն գուշակք օդոց.
4 Պրէնտէս կամ Պրէնտա գետ, որ առեալ պատառէ զթումբս իւր և ողողանէ զդաշտս. և հոսէ գետս այս առ. անմարատան տամբն, ուր կային ընդունօղք դպրոյս.
5 Զի նաւարկութեամբ լինէր յայնժամ երթեւեկ 'ի գիւղ.

Շընչէ զեփիւռ հողմ բարեբեր ,
Յարդիւնս անդոց բազմածըլթեր .
Վայրք մըրըրկեալք յալիս ալենդեան ,
Ծածանեսցին արդ 'ի ցորեան .
Եւ զհետս աւեաց զաւազ և սիկ
Ծածկեն ընդ հուպ խիտ գալարք ,
Ընդ բազմաշէկ յակունք քընքուշ ,
Ընդ ձեզ լինել ցանկայի յոյժ .
Ճանապարհորդ կանխայարոյց
Դիմել 'ի դաշտ առաւօտուց ,
Եւ զմիջաւուրբ դառնալ ընդ ձեզ ,
Թող լինէի արեւակէզ .
Զլար աղեղան մեղմել արագ ,
Որպէս ուշիմն ազդէ առակ ,
  Ճեպին աւուրք այդր յանցընթաց
Իբր ամպհի երկնայարաց ,
Որ 'ի փոշւոյ զըլեն թեթեւ
Զանիւս կառաց փայլակնաձեւ .
Իսկ աստ դանդաղ գընան սայլորդք
Որպէս կըրիայք զըրահամորթք ,
Մինչեւ 'ի լաստորդ ծովակու
Դարձեալ լինիմք մեք ակնարկու .
  Խոնարհաբար համբոյր աջոյն
Վարդապետի Հօրն և ողջոյն .
Եւ որ 'ի գեղջդ են ծերակոյտ
Ըզաւանակերպ սուրբ երամոյդ .
Ի Տիեզերեայ նորեկ հիւրոյն ,
Հիւր Տիեզերի հանդերձելոյն .
Թագցրաւենւոյ մըրցանակին
Եւ որ բաշխողն է 'ի խաղին .
Համուրց ողջոյն հարց և եղբարց ,
Սիրոյ կըրկին սէր փոխադարձ ,
  Ի քսանեւթ Մարգաց ամոյ ,
Ըստ Նըրասխոյ մեծի գետոյ ,

Ի գողթնաստան յերկրին Վանանդ ,
Գրեցի զպատճէն սիրոյս ձեզ անդ ,
Նուաստ եղբայր ձեր և անպէտ ,
Հայոց մեծաց Վըրդը պըուէտ .

## ԹՈՒՂԹ Բ.

Հայոց մեծաց Վըրոյր պըւէտ
Առ Մենալքաս ողջոյն յաւէտ .

Յանձրևաթուրմ արօտդ գէջ ,
Ո՛վ սիրեցեալդ իմ Մենալքաս ,
Ճարակաւոր հօտից 'ի մէջ
Մինչ կողմանել անկարանաս ,
Նու ծաղկաւէտ փոխան բարձի ,
Գարնայնոյն գեղ կանաչազարդ ,
Փուտ սաղարթաց կոյտ 'ի բացի
Բազմոց արգել ընծայէ արդ ,
Մինչ ընդ ուռխ հովանախիտ
Հովեալ գեղջկին կերկերի երգ ,
Դարձ 'ի գըծուծըդ քո խըրճիթ ,
Մինչ չեւ ըզքեզ վանեն տարերք .
Զի բարկացողըն մի Պլենդէս ,
Փըլուզեալ աւերօքն ըզթումբ և զանդ ,
Իջցէ դարձեալ 'ի տեսիլ քեզ
Խաստ անախորժ գըլթած ականդ .
Ո՛հ , զի յիշեմ զհըզօր հինին
Զէն ըղձառոյ բունըս քեցուլ ,
Նու անհանգէտ ընդ գեղջէին
Մըղել ճակատ հիւղս ընդ խարխուլ .
Ուստի վարեալ հօտն և հովիւ ,
Մայր ընդ մանկան , խաշն ընդ գառին ,

Վըստարածեալք հանգոյն լացիւ
Ողորմ ըղձերս իմ ձըմէքին.
Ուր ընդ հրոսող ջուրս անկայուն
Յան և ցըրիւ գոմ և հընձան,
Ուր գնայր 'ի լող սայլն ակաղձուն
Այգէգործին յուսովն ունայն.
Յանկարծ ազդէր յիս մտաւկան
Միք 'ի վիպել ըղխիտոն արկած.
Խնայել 'ի լուրն եղերական
Ոչ կարէիր զարտօսր աչաց.
Իսկ ժաժայցես ընդ տեսիլդ այդ.
Դարձ 'ի խըրձիթդ յարկածածուկ
Նախ քան զարփւոյն անձնադաշթ
Ծնել ըղդառնըն քեզ եղուկ.
Կանխեալ 'ի խիստ մարտէն խոյս տուր,
Պատըսպարել այսր ընդ հիւղիւ.
Յամարաստան երկիր սարսուռ
Դըժուարայաղթ զըրդէ կըռիւ.
Թէ զգուշագոյն չիցես տըկարդ
Քան ընդըժդեհ կըռընկաց տարմ.
Նըզա կազմին յօդաչու արդ,
Նըրկնի Սկիւթացն անկայուն զարմ.
Օ՜ իս մայր ննուցըն հրաւիրակ
Ո՛ քեզ յըղէ Իմաստուհին.
Յերբ ընդ գըտաերցըն գեղարդնակ
Հիւր օթիցես. Թող ըզնոսին.
Ա՛ռ սան նորա Հայըն յաղնեբախտ՝
Սպասեալ մընայ քում գալըստեանդ.
Բզծերունոյն ըստուերս անբախտ
Չկարեմք հաշտել մինչ դեռ կաս անդ.
Ի սիրայնոյն քանդ անուան՝ վէմք
Նաւ ուռն և գըոց կան առ իս կազմ.

1 Ոսկեբերան Հայրապետն, որոյ ճառիցն հին Թարգմանութիւն այն ինչ գտեալ, ակիզըն տպագրութեան նորա յայնժամ պատրաստէր.

Ընծա՛հ արժան եկ քանդակեալք ,
Որ ընդ դարուց մնասցէ ռազմ ·
Բաղխեալ յաղեաց սաստի սիրտ իմ ,
Մ՛ինչ դեռ մնայր միոյդ տեսոյ ,
Եւ 'ի միամէն ահա զըրկիմ ,
Նոյն է զբօսանք ձեր ինձ հաճոյ ·

---

# Թ Ո Ւ Ղ Թ Գ.

## Վ Ր Ո Ց Ր Ա Ռ Մ Ե Ն Ա Լ Ք Ա Ս

Ըզպարանոցաւդ , խմբս Մ՛ենալքաս ,
Զոր ուրարըն սուրբ պատէ հանապազ ,
Չեթող ինձ փարել՝ բայց վայրկեան ինչ սուղ՝
Ժամանակըն ուշտ յանկանեն իմ յուղ ·
Եւ թէպէտ յաճախ Մ՛ուսայն կարեկիր
Տարակուսելուամ ինձ գոյր թեւադիր ,
Բայց Գաղղիացին այն եկաց ընդդէմ՝
Ըստ երեամ բարուցն իւր դեղ և դըժխեամ ,
Յամառեալ 'ի բաց ըզհիւրըն մերժել ,
Եւ ցանգ ըզտաղտուկն հարկանել ինձ թեւ ·
Նոյն ես 'ի բացի դըրշաւ կապարեաւ ,
Զ՛ի զփետուրն ունի հիւրամերժն 'ի գլուխ ,
Գրոշմեմ քեզ զանհարթ ըզտատըս առ Պրենդայ ,
Մ՛ինչ զարմանադայր յորդեալ գետըն գայ ,
Եւ նըժդեհ ալեօքըն թանայ ընդ իս
Զափանն՝ ուր բազմեալ կամ ըղձալարիս ·
Ի դաշտ այսր խմուեմ , ոչ ամպոց ինչ գու
Եւ ոչ արեգակն հայէր յիս խոժոռ ·

1 Գուլլիոյն Ուլէն , որ 'ի թարգմանութիւն հնախօսութեանն իւրոյ կաչկանդեալ ունէր զերբթողն ·

Ուր գեղածիծաղ վայրքս առհասարակ
Զիս ողջունեցին ընդ հօրը օգաբնակ։
Եւ զառաւօտին փառաբանութիւն
Մինչ յարօտն 'ի ձեմ երգէի այգուն,
Փոխ առ փոխ ընդ իս սոխակն և սարեկ
Որհնաբանէին յիւրեանց դայլայլիկ,
Եւ ճաճանչ թևոց նոցին երփնագոյն
Ի ծայրակարմիր նշուլից արփւոյն
Հարեալ անդրադարձ յաչացս իմ 'ի բիբ,
Ի յերգարանիս ցոլանայր 'ի տիպ։
Եւ ըզմիջաւուրք ձրպուռն անկարօտ
Յոտքս ծիրանւոյ ըզմայլեալ 'ի տօթ,
Ի կերկերաձայն թևոյն 'ի հագագ
Զիւրն յեղանակէր զոր սիրեմ նըւագ·
Եւ լըճանց ընակիչքն իսկ անդ երգէին
Ոչ ինչ անհաճոյ յունկըն քերթողին·
Եւ յաճախ 'ի զռինչ ծոյլ յաւանակի
Ախորժէր Մուսայս բազմեալ 'ի դաշտի։
Զիւրն անձնիւր բուսակ անմոռաբեր
Որպիսի և է զծաղիկըն ձօձէր,
Եւ յամենեցունց անտի հոտ անոյշ
Խառնէր 'ի բուրումն ախորժելի յոյժ։
Եւ պարուակըն ժիր թիւմոյց տարփաւոր
Հոյլ յոտին խմբեալ թըռոյց բազմաւոր,
Մինչ ըզհանդերձեալ տածողի նոցին
Ի յոլլանս ըղձիւ լըսեմ զառաջին [1]։
Ամենուստ զինեւ պար առին բերկրանք,
Բայց դու խրամատէիր ըզչքնաղըն ցանկ·
Զի զիս հեռաւոր յիշատակ քոյին
Ընկէր անանդորր 'ի լըրման նոցին։
Ընդէ՞ր ոչ և դու այսր ընդ մեզ եկիր,
Թէ չէր փոյթ ինձ կալ 'ի քէն տարադիր·

1 Զի յաւուր գնալոյ քերթողիս 'ի գիւղ. պահապանի տանն ծնեալ էր որդի։

Ընդէր ոչ և դու եկիր այսր ընդ մեզ.
Ի վըսեմն ընդ քեզ գնայաք 'ի պարտէզ,
Ի տուն սոխակաց՝ ուր ցանկ երթեւեկ
Քաղցր է ինձ, և ոչ ձանձրանամ երբէք.
Երթայաք 'ի դրախտ տիկնոջն հիւսիսի,
Ի դաշտըն գնայաք, և 'ի սար ուղի.
Այլ և յաղքատին 'ի մերն անտառակ,
Քանզի քաղցր է մերն, ընդ քեզ ճեմէաք.
Թէպէտ ընդ գըծուծ հովանեաւ նոցին,
Սակայն սուրբ սիրով գոհք 'ի միասին.
Զի երիցագոյնն իսկ ասա է եղբայր,
Որ զքեզ գորովով յիշէ անդադար.
Զի աստէն և միւս խարտեաշն է կըրտսեր,
Ալեձեւ մօրուօքն և մըտօք իսկ ծեր.
Եւ ես ցանկալի պարուդ ձեր այդմիկ
Ոչ գիտեմ լըրումն որպիսի և կնիք,
Թէպէտ ըստ բախտի յաւելեալ 'ի ձեզ,
Այլ կապեալ 'ի սէր հարազատապէս.
Իցիւ մինն 'ի մէնջ թէ ընդ քեզ մնայր,
Զի սփոփումն ընդ մեզ բաժանէր արդար.
Իսկ այժմիկ թերի մըխիթարեալ մեր,
Եւ անմըխիթար դու այդրէն մնացեր.
Յայնժամ զոյգ և զոյգ, որպէս թեթեւակ
Սայլիկք երկանիւք, դուք և մեք գնայաք.
Այլ ոչ ինչ երկինք գործէին տարապարտ.
Ողջ լեր, մեք ողջ եմք. այսքան բաւ է արդ.
 Եթէ զանյարդար տաղս ընթեռնըլով
Շարժեսցի երբէք սիրտ քո 'ի գորով,
Գիտեա հաւատեաւ, խնդիր Ս՝ենալբաս,
Զի անծըպտելի սէրըն գըրեաց զայս.
Ի մարգաց երկու առ Գըրենդեայ գետոյ,
Գըծեցի զքարտէզս այս առ քեզ սիրոյ.
Ի թուականութեան հազար երկերիւր
Եօթանասնեչորս, քոյդ նըւաստ Սըրոբ.

# ԹՈՒՂԹ Դ.

## ՆՈՐԻՆ ԱՌ ՆՈՅՆ

Ծանրատաղտուկ գաղղիացւոյն ընդդէմ, որ զիս կաշկանդէ ,
Ըզմըրթերեալ ոխս իմ գրեցի , մինչ չեւ լեալ հունձք , 'ի Պրենդէ .
Իսկ մինչ այժմիկ ընդ ցօղաւոր խընձորս այգուն դու ճեմիս ,
Քանզի ցանկամ ճեմել ընդ քեզ , գոնեա քարտիւս յիշեա զիս .
Անխոնջ 'ի գլուխ հնարից սուրբ սէր , որպէս և քաջ իսկ գիտես ,
Որ զկապարեայն անդ ընդ փետուր գըրչին եարկ 'ի քարտէս ,
Այժմ ըզգիշեր փոխէ 'ի տիւ , և յարեգակն ըզլուսին ,
Քանզի ըզքնիկն որ բոլանդակ յինքըն զրաւեաց զըժպըհին ,
Զի ուր երբեմն ինձ ճաշակից մատչէր Մուսայն իմ առ իս ,
Արդ նա և անդ յեղանակէ զիւր մեղմն ինձ յոյժ ձայնձրայլս [1] .
Յոյժ այլազգի ճաշեմ այժմիկ քան զոր երբեմն 'ի հերուն ,
Յորժամ մարթէր զերկայնաձիգ պատրել գիշերն ինձ 'ի բուն ,
Ըզսուրբ Հերմեայ [2] զանկեղինին լուեալ ձայն անդամոր ,
Արուեստապէս բարձր 'ի բեմին արտասանեալ քաջոլոր .
Այլ , բարեէ , կերք ընդ որ շրջեն՝ անդր ըզՄուսայս մըղեցին ,
Իբր հողմնայոյց կոտաւոյն հարաւ ըզբարձրակող եղևին ,
Մինչ հայկաբան ոգին 'ի յիս զարթոյց ըզկիրս ազգասէր ,
Նա յոյր վերայ ցասումն էր ինձ՝ 'ի տուէ ըզգրիչս իմ գերել ,
Ի ծածանել լուսաբոլոր լուսնին վըճիտ ընդ ալեօք ,
Առ ձեռասուն շահասպրամիւղ՝ զոր յիշեցես դու արդեօք ,
Զոր յարամբրձ 'ի յիշատակ քո դարմանեալ ցարդ խնամօք ,
Առ ապակեայ պատուհանաւն իմ զայս գրեցի քեզ բոլոր .
Դու մինչ յերեկն ոսկեզօծէ լուսին ըզդաշտ և ըզբլուր ,
Նա զգեղջկէին 'ի հընձանէն լսես նըւագ քաղցրալուր ,

1 Քանզի համբակաց պատմութիւնն Ռոլէնի ընթեռնոյր յայնժամ 'ի ժամ ճաշու 'ի սեղանատան .
2 Սուրբ Հերմէս , այսինքն Ռակերիբանի .

Կամ ըզբառաչ եղնամօլին , կամ զպաճոյոյզ երգ հաւուն ,
Եւ կամ ըղձիչ գորտոց ախորժ քան ըզձրուինչ ըզմանկոյն ,
Եւ մինչ ընդ այգըն զախաղձուն սայլն ողկուզացն ընդ բեռամբ ,
Համդարտաքայլ ձըգեն արջառք ծնօտիցն յուշիկ տատանմամբ ,
Եւ Մ՚ուսայիցն հաճոյ գուննեան մինչ ընդ ծորակն հոսէ ուղխ ,
Կարմիր տոամբ ՚ի հընձանին պարէ մանկտոյն լխակոյս ,
Եւ զըրկելոց ջամբիւ գառանց մինչ ըմպես լի դու զբաժակ ,
Զորս աըղայ գեղջուկն ածէ համապատօր ՚ի ձմրան ,
Եւ թէ զխոռս՝ ցուպ ՚ի ձեռին տեսցես ընդ այգն ըզնա մօտ
Ի փոս թըմբին թօթօռլ կանչիւք օցսեալ խաշինն հետամուտ ,
Յիշեա յայնժամ զի առաւել բերկրիմ քոյոցդ ես ՚ի լուր ,
Քան ՚ի վայելս ՚ի նոյն անձամբ ըզբօսանել թէ ինձ դոյր ։
Մինչ գալիլեան ակամբ զատեղըս դիտէի ընդ եթեր ,
Խանդահագոյն ըզհայեցուածս իմ յորդորեաց ուղղել սէր ։
Ոչ ինչ տեսի ՚ի դիտելոցս , այլ տուղ ՚ի քէն ՚ի բացեայ
Դիպաւ աչացս իմ աղգարանդ՝ որ իբր ըզծուխ ամբառնայ ։
Եթէ զկամս վատասակոց քերթն հաճոյ սըրբես ընդ երեակ ,
Եւ բարեկամ իցէ Եւրոյն , և ոչ քեզ առաղ ինչ ներհակ ,
Գըրեա ինձ , ով Մ՚ենալքաս , տուր զաւետիսդ ինձ դու զայդ ,
Եթէ կամիս ինձ դու զբօսանս ոչ ՚ի քոյոցդ ինչ ընդհատ ։
Նինջ , յորմէ ոչ է հնար լինել վատասակելում անձնապահ ,
Զի և այսուիկ պատկերեացէ նա զանհրաժեշտն ինձ ըզմահ ,
Բա սուրբ քո սէրդ ՚ի գըրեն իմ զայս յաչացս իմ խոյս ետ ՚ի բաց ,
Եւ ըզծանօթ քեզ սիրտ իմ ոչ եթող առանց հաւատեաց ։

Յամին հազար և երկերիւր
Եօթանասուն և քառեակ ,
Յամսեանն հոռի գրեցի Վերոյր
Մերձ ՚ի Համդրին ՚ի կըղզեակ ։

# ԹՈՒՂԹ Ե.

## ՆՈՐԻՆ ԱՌ ՆՈՅՆ

Մ՚ինչ ըղձմնացեալս յոյս ըզբօսանաց քոյ զիս ըսփոփէր ,
Զայն եւս ոխերիմ եբարձ յինէն բախտն ոսոխ անհրուէր ·
Եւ փոխան ծաղկեայ գարնայնոյն հիւրոյդ ընդ առաջ գալոյ ,
Անդաստանք ջրողողք ծածկեալք ընդ Պրենդեաւ կան առաջի քո ·
Ոյց աղեաաւոր ըզգըլթած քո սիրտ Հրմէ տեսարան ,
Ի զուարճալըլուկ գեղջկին զապառնի աղդեալ կերպարան ,
Աւա՜ղ , զառամին հանուրք ընդ ծաղկի հասակիս մեր զոյգ ·
Այլ յիշատակաւ անցելոց բարեաց գէթ ըսփոփեսցուք ·
Յորժամ քան զարդի զարունս այս աշունըն գեղածիծաղ
Մ՚եզ տերեւախառն ընծայէր բազմոց գալարի չքնաղ ,
Եւ 'ի խումբս հօտից վարսագեղ ծառոց բազմէաք 'ի ստուեր ,
Ուր 'ի միասին քաղցրաձայն ընդ մեզ եղբայրըն կըրտսեր ,
Իշհաւուց երամ շարժէր գեղգեղմամբ յերգ նախանձընդդէմ ,
Եւ ըզսիրտըս մեր գորովէր զաղատ 'ի հոգոյ նըսեմ ,
Ուր հըրու արջառ 'ի յանդ երթեւեկ 'ի դաշտն առընթեր
փայլուն երկաթովն ըզսաժանաւոր ակօսըն ձըգէր ,
Զեղով տատանմամբ 'ի սահանգըն լիոց ըզկաթին կայլակ ,
Զոր սիրես այգուն ըմպել փըրփրադէզ կըթեալ 'ի բաժակ ,
Ո՜հ , զի վայելուչ բնակէաք յայնժամ մեք 'ի միասին .
Այժմ և զըզբօսանս առնէ բաժանումըն մեզ դառնագին ,
Թէ ընդէր կըրտսերն և կամ միւսն եղբայր չիցէ աստ առ մեզ ,
Եւ գործի խրամոտ անկարկատելի յիղձըս մեր այսպէս ·
Արի սակայ ըզփորձն . եթէ գիտել զայն կամիս աներկբայ ,
Ի լեառն եւգանեան յորժամ երթիցես 'ի գայլախաղեայ [1] ,
Ուր յանմատչելի բարձուէն միջնաբերդըն պարահայեաց
Նըկատէ 'ի մեծ հովիտըն հերձեալ գետոյն 'ի մանուած ,

1 Մոնժէնէվր , մի յեւգանեան լերանց , որ թարգմանի գայլախաղ լեառն , ուր է ամրոց կառուցեալ յԷծէլինեայ բանաւորէ :

Նա շրջմանակաւ ածէ ծառաստանն 'ի կատարն ուղի ,
Խնդրեա 'ի մայրեան , և զառհաւատչեայ գտցես հաւատոյ ·
Մինչ ընդ հովանեաւ նոցին միայնակ գայի զառ 'ի վայր ,
Ընդ ըզմխրայնոյդ Թողի զյիշատակ բարձրուղէշն 'ի մայր ·
Խնդրեա անդանօր , և 'ի խորշոմեալ գտցես կեղևին
Սուարացեալ ընդ բուն հաստարմատ ծառոյն զքանդ անուան քոյին ·
Բարձր 'ի կառս այժմիկ բազմեալ 'ի ձիոց լըծեալ յամեհեաց ,
Որ խաղաղանին Թեթև ընթանան 'ի Ճնապուհ հարթած ,
Խաբել ոչ կարեմք զուղին՝ զոր յայնժամ ըզմայլեալք 'ի սէր
Հետևակընթացք գնայաք անտաղտուկ յանդաստանըս մեր ·
Իբր ըզքաջարշաւըն՝ զորըս Հելլէնք Օրագնաց կոչէն ,
Ըսպարեզ երկայն հատեալ առօրեն սուրհանդակօրէն ·
Նա զանդամըս մեր պարտասեալս 'ի տօթ հազիւ յերեկոյն
Զարծարծեալս 'ի սուրբ զաւեշտս 'ի մահճի պարտէր հարկ քընոյն ·
Նոյլին իսկ սըրտիւ , որով ընթեռնուս , գրեցի քեզ զայս գիր ·
Յաւելում զոր ինձ ձախողակ հըմայք լինելին Թելադիր ·
Մի գուցէ և դու միւս եղբօրն համգոյն , զոր յիշեմըս միշտ ,
Բազմամեայ երԹայց փորձ ինչ զամօրեայդ առնես ինձ 'ի վիշտ ·
Հոգ է ինձ ընդ այդ , այլ ոչ ինչ երկնիք չար գործեն ըընաւ ·
Ողջ եւեթ լիջիր , և սուրբ սիրոյն զօդ չորոշի տեղեաւ ·
Յամենայնն 'ի մարգաց 'ի Թուարերութեան հազար երկերիւր
Նօթանասունևհինգ գրեցի 'ի Մեհեժ եղբայր քո Մըրոջ ·

---

# Թ Ո Ւ Ղ Թ Զ ·

## Ն Ո Ր Ի Ն  Ա Ռ  Ն Ո Յ Ն

Յոյժ իսկ 'ի զգալւոյն այլազգ 'ի սըրտի բորբոքի սուրբ սէր ·
Թեպէտ տարագիր յիւրմէ սիրելւոյն հաշեալ կարեվէր ,
Սակայն ըստիպի յանշուշտ հաւատոյս փոխադարձ սիրոյն ,
Նա ընդ յիշատակն իսկ նորին տըխուր խառնի բերկրութիւն ·
Թէ զմտաւ ածեմ զի ուր և իցէ՝ է սիրտ մըտերիմ ,
Որ ինձ կարեկցի , որ յիշէ միշտ զիս , բերկրիմ և սփոփիմ ·

Եւ ոչ բերկրանաց խնդոց անջրպետք արկանեն խափան ,
Նա՛ լերինք և ծովք հովիտք խորաձորք յաճախեն ինձ զայն .
Զի և ոչ բերկրանքս ինձ հասանէին թըղթելոյ առ քեզ ,
Եթէ ոչ զգժնեայ բախտն 'ի յերերաց բաժանէր ըզմեզ .
Միայնոյն է կար 'ի չարէն յառաջ ածել ըզբարի ,
Եւ որ 'ի նմանէ սէրն ըզնոյն նովաւ զօրէ ըստ կարի .
Նմա գոհութիւնս անդադար , և բնաւս ինձ տամ երանի ,
Զի զիս այդպիսեացդ հանդոյն ձեզ եղբարց արար արժանի .
Ի բազմապատիկ այժմ 'ի գրաւական սիրոյդ յաւելեր ,
Յերկոցունց եղբարցդ իսկ զըրկել ըզքեզ միոյս առ 'ի սէր .
Միայնակ 'ի յանձն առեալ ըզվաստակս և զհոգ մըտադիւր ,
Զի ինձ և նոցին լիցի աստանօր բախտումն և դիւր .
Այլազգ արդարեւ այժմիկ ըզկենցաղ վարեմ գեղաբնակ ,
Զամենայն յինէն պարուրեալ 'ի բաց տաղտկալի վաստակ .
Ընդ այգն ընդ երեկ ընդ ախորժ ուղին երթեւեկելով ,
Ուր ցօրեանն առոք ծածանի 'ի մեղմ զեփիւռ իբր ըզծով .
Ուր զօգտածարաւ մըշակին ըզյոյս չպատրէ երբէք արտ ,
Ուր այգիք ծաղկեալ , և 'ի նորածին ողկոյզս 'ի պարարտ
Ըզհանդերձելոյն աշնայնոյ զմայլման ընծայեն ըզգըրաւ .
Ո՛հ , ընդէր յայսքան 'ի զբօսանս ընդ մեզ չիցես և դու բնաւ . . .
Զի մի տըրտմիցիմ 'ի թողուլըն զայս բազմազբօս ըզվայր ,
Ի տենչ վաղագոյն ողջագուրելոյ զանձկալիդ եղբայր .
Յամառանն 'ի մարգաց գրեցի առ Պրենդեաւ Արթըր սիրայնոյդ .
Ի թուականութեան հազար երկերիւր եօթանասնեւութ .

# ԹՈՒՂԹ Է·

## ԱՌ ՎԱՐԺԱՐԱՆԵԱՑՍ ԵՒ ԱՌ ՎԱՐԺԱՊԵՏ ՆՈՑԻՆ

### ՓՈԽԱԴԱՐՁ ՈՂՋՈՅՆ

Հրաժարական ողջունիդ նըւէր
Ի նուէր փոխադարձ առնէ ինձ հրաւէր ·
Այր որ 'ի գլխոց եղբարցդ ութեցուն
Որ եղեր Պրենդեայ մատոյց ինձ ըղձոյս ,
Զեղ 'ի տիբերեանց ՚ գիղձս իմ 'ի յեղերց
Ընծէ 'ի Հանդըրձն արդ յաղխ ուղերձ ,
Աշուն 'ի պարտէզ ուղեալ տըխուր ՚ ,
Բաղել արդարեւ անդանօր գըմուռ ·
Ընկեք որ անտի գըլեալ ընդ փոշին ,
Յերկաթեայցն 'ի բաց գլխ 'ի գըանցն ածին ,
Ընդէր ոչ կարկեալ կասեցին անշարժք ,
Ե՛ր նըժոյգք ըղկայ չառին քաջալարժք ,
Այրա իմ 'ի յննեակ հարեալ յերաշխեպ ,
Ուք 'ի յետս 'ի բաց հայէին ըստէպ ·
Խուէր ինձ երկլն յերկիր 'ի խոնարհ ,
Կամ երկիր յերկնից փոխեալ 'ի կամար ,
Ի համաստեղաց գիտէի ըզմին ,
Օ՛ի ձեմ անդ առեալ շըրջէր 'ի դաշտին ·
Ըստղ 'ի միջի մեծ , և աստեղք ութեակ
Կըրտսերք ըղձոլաւ գնային արբանեակք ,
Համպա արդ նըժոյգք իմ տալաըմեակք ,
Խոըխա արդ արծուոյ առէք հանգուՆակ ·

1 Բանդի 'ի Հռովմայ գրէ զթուղթս զայս քերթողն , որպէս և գյաջորդ գերկոսին գիրս ·
2 Զի յոյըռնական պարոնիզին , որ 'ի Աթրա , եա քերթողս զներքին հրաժարական ողջոյն այնոցիկ՝ առ որս գրէ ·

Ածէք զիս, 'ի տար տարայք 'ի յերկիր,
Ընդ ոլորտս երկրի երթայց տարագիր,
Այլ միշտ անձներեւ միշտ գեղանըշոյլ
Փայլեսցեն նոքա իբր արփից լոյս բոյլ·
Որոշիմ տեղեաւ, այլ ոչ և սրտիւ,
Մ՚ըշտայուշ նոցին զգիշեր և զտիւ.

---

# ԹՈՒՂԹ Ը·

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ

### ՓՈԽԱԴԱՐՁ ՈՒՂԵՐՁ

Ուղեւոր նըժդեհ
Մ՚ինչ ընդ եւգանեան
Մ՚եկնէի ընդ դեհ,
Ի Հանգրին եզերց
Ձերդ առ իս եհաս
Սիրալիր ուղերձ.
Օ՜ քինչ իմն աղէ քնար
Նորգեսցէ փոխան
Ի տըխուրն իւր լար . . .
Սէր ընդ սիրոյ ձօն
Յափանց Տիբերի
Տար, Մ՚ուսայդ իմ, օ՛ն.
Տեսի ես զՎէզեմ
Փոխեալ 'ի Վեհէժ
Ի դրախտ ծովածնեմ.
Տեսի ժիրաժիր
Հոյլս անդ մըշակաց
Որ գործեն զերկիր.
Ի նախանձաւոր
Վաստակոց նոցին

Մ՚անկտի անդամնօր ,
Դրախտին այնորիկ
Յորս առ ՚ի յապայն
Նա զարդ գեղեցիկ ,
Զ՛իր անդ բայց ընձեր ,
Յորս և զարդ կրօնիս ,
Դիտեմ ընդպատկեր .
Ոչ այնպէս այերք
Ի հաւուց երամ
Պըճնին և ՚ի յերգ ,
Ոչ երկնից կամար
Այնպէս նշողէ
Յաստեղաց կաճառ ,
Ոչ ծառոց կողերք
Այնպէս գեղազարդ
Կախին պտղաբերք ,
Ոչ այնպէս արօտ
Նա բուր ՚ի խաշին
Զարդարի ՚ի հօտ ,
Որպէս պերճ ՚ի ձեզ
Աստուածատունկդ այդ
Ճոխանայ պարտէզ .
Սուսեր բոցաղէն
Ճապուկ ՚ի ձեռին
Կացցէ անդ Քերովբէն ,
Յանկ զօձապատիր
Անձեղ ըղձաւանս
Անտի տարազիր .
Նա զնախնին իւր վէհ
Կորուսեալ ըղբախտ
Գեղեցկանըրաւէհ ,
Ի նորս յայս ՚ի դրախտ
Երկիր հայկազնեան
Լիցի բարեբախտ .

# ԹՈՒՂԹ Թ.

## ԱՌ ՄԱՆԿՏԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

## ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

### ՈՒՂԵՐՁ

Յաղթական 'ի յափանց
Մուսայն որ զձերդ 'ի Տիբեր
Լած ըզգիծըս մատանց,
Շարժէ ըզքնար իմ 'ի նուագ,
Իմաստուհւոյն Աթենայ
Ո՛վ սիրասուն մանկըտեակ.
Մինչ դեռ ոըխուր 'ի խաւար
Ալեւորեալն Այրարատ
Հեծեծէ դառն 'ի յաշխար,
Նա զվաղեմին խընդրէ լոյս,
Զոր յանընջուլ 'ի գիշեր
Տըգիտութեանըն կորոյս,
Ի ծոց ահա 'ի Հանդըրին
Զիմաստուհին նըշմարեմ
Ջահ բոցաւառ 'ի ձեռին.
Նա բազմերամ ըզմանկանց
Հոյլ ըզնովաւ եկեալ
Յաղնըւական 'ի նախանձ,
Որք մայրենի 'ի բոցոյն
Ըզլիզանուտ զիւրեանց ջահ
Առ 'ի վառել գործեն գուն.
Մինչ ընդ տեսիլն հիանամ,
Ձայն ինձ ազդէ. Մանկըտւոյ
Դա հայկազին է երամ.
Համայս առ ձեզ բարբառիմ,
Յոյս հայրենեացըդ ձերոց
Մանկտի ըզգօն եւ ուշիմ.

Զեղ ծերունին արդ 'ի մայր
Սգիողում 'ի հառաչ
Մ՚ընայ գետակըն կալեալ·
Լուցէք լուցէք ժիրաժիր ,
Նու գլխու 'ի քոց խմատից
Բարձեալ ըզջահ լուսաձիր ,
Ալացիք 'ի քնիկդ 'ի յաշխարհ ,
Մերժել 'ի քաց 'ի նմանէ
Նըսեմնասուեր ըզխաւար ·
Յանկարծ աւուրցն այնոցիկ
Գոյր ըղձալեաց 'ի տեսիլ
Նըշխար կենաց քեզ հերիք ,
Յոր 'ի նախնին իւր 'ի դեհ
Իմաստուհին ըզհետ ձեր
Դարձցի պանդուխտն և նըժդեհ .
Ուր շուրջ զիւրեւ պարէին
Պըսակաւորք ձիթենեօք
Որեարն երբեմն Հայ ազին .
Ուր Արամազդոյն 'ի տաճար ,
Տմբրեան խընկոց ըզնոյլն
Ծուխ ըզբագնաւ դիզանայր ·
Թէ տիկնօրէն անդ պաշտօն
Ի դիւցազանցն առնոյր հարց
Ի տարապարտ նա 'ի կռօն ,
Ճշմարտութեան պաշտօնեայ
Յօժարագոյն աստանօր
Նաժիշտ կռօնից կացցէ նա ·

## ԱՌ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԱԲԲԱՀԱՅՐՆ

## Ի ԼՐՈՒՄՆ ՏԱՐԻՈՑ

### ՈՒՂԵՐՁ

*Մինչ արփին օրակշիռ*
*Գեղաւոր*
*Դառնայ այդ յերկն ՚ի հետ*
*Ըմննոր,*
*Ընդ եղբարցն խմբից ըստ*
*Սիրասուն*
*Զ հայրենիդ ըղձանամ*
*Զ օրհնութիւն,*
*Ու պատրոյգ լուսագեղ*
*Պահի լոյս,*
*Թէ սպառի ՚ի կանթեղ*
*Բոցոյն բոյծ.*
*Զամէն բոյսք, և ոչ վարդ*
*Գեղանի*
*Գարնայնոյն կազմէ զարդ*
*Ըղբունի,*
*Եթէ ոչ նոյն ցող*
*Աստեղաց*
*Եւ նոյն թէ ոչ շող*
*Տայ ըղձած.*
*Նա ՚ւանիկ ոչ իւղդ*
*Բոց աղօտ*
*Ու այնպէս վարդ ցողդ*
*Ի կարօտ,*
*Օրհնութեան իբր աջոյդ*
*Շնորհածիր*

Հոգւոյս իմ ծարաւոյ

Է՛ երկիր ·

Խաչանիշն իւր զինեւ

Կնքելով ·

Գեր քան բոյս 'ի յարեւ

Գըտայց ջուր ·

---

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## Ի ԼՐՈՒՄՆ ՏԱՐԻՈՅ

### ՈՒՂԵՐՁ

Աստուածատունկ

Ի յարեւելս էր պարտէզ ·

Ուր ծաղկունք

Անդ և ծառոց ազգ պէսպէս ·

Ի նմա աղբիւր

Որպէս հոգի 'ի մարմնի

Շուրջ համատիւռ

Ոռոգնէր բղխուր կենդանի ·

Մանկաւոր

Էր արծաթեաւ անդ լարիւ '

Կապեալ սափոր

Մշտահոսով 'ի յանիւ ·

Եւ յօգնախումբ

Ի նմանէ ծառք և բուսակք

Յուշիկ 'ի յումպ

Ընդունին բոյծ և ճարակ · —

1 Մինչ չեւ կործանեալ էին լար արծաթոյն, և խորտակեալ մանեակ ոսկւոյն, և մանրեալ սափորն յաղբիւրն, և ընկրկեալ անիւն 'ի գուբն. և դարձցի հողն յերկիր որպէս և էրն. Ժողովող. ԺԲ. 6.

Զինչ էր սափորն
Եւ զինչ անխուն այն չքնաղ ,
Բայց կարեւոր
Որդւոց քոյին քոյդ կենցաղ ։
Մի՛ մեզ երբէք
Լիցի զայն լոր արծաթոյն
Տեսանել բեկ
Եւ ըզմանեակն այն ոսկւոյն ․
Մի՛ խորտակեալ
Նշբէք յաղբիւրն ըզսափոր ,
Կամ ընկըրկեալ
Զանիւն 'ի գուբն այն 'ի խոր ։
Կեցցես յամայր
Որ 'ի զշնորհացն հոգեբուղխ
Ըզկենարար
Զեղուլ աջովդ 'ի մեզ ուղխ ։

---

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## Ի ԼՐՈՒՄՆ ՅԱՐԻՈՑ

### ՈՒՂԵՐՁ

Ըմպոյ ինչ թեթեւ
Որ անցանէ վաղ ,
Համգոյն արդարեւ
Եւ քոյդ է կենցաղ ։
Ըսկ դու հոլանի
Ի գեղածիծաղ
Գործես գարնայնի
Ի դալարատ չքնաղ ․
Եւ ցօղեալ 'ի բունձ
Գոս յուշիկ 'ի շաղ

Պատրաստես ըզհունձ
Սուրք 'ի մանգաղ.
Ուրեւ փըթթին ծաղկունք ,
Եւ ալոճնի պարտէզս
Նայս աստուածատունկ
Ի միրգըս պէսպէս ,
Հըրճուլին տիեզերք
Ի խայրեացն 'ի տես ,
Եւ յաւէրժ 'ի յերգ
՚Նեբրոդէն ըզքեզ.
Ոնդէր ու երգեմ
Օրդ նոցին և ես .
Ո՛ն Մ՛ուսայդ վըսեմ
Դրոշմեա 'ի քարտէս .
Որքան են աստեղք
Յերկնաձեմ կամար ,
Եւ մայրիք ահեղք
Կանգնելին երկնածայր ,
Եւ որքան 'ի ծով
Մըլեաց է գումար ,
Հատք բազմայոլով
Յաւազ հողմավար ,
Ըզտարեաց այնքան
Լիցի ինձ 'ի քնար
Երգել ըզվախճան
Սըք արհին իմ Հայր .

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## ԵՒ ԱՌ ՀԱՄՕՐԷՆ ԿԱՐԴԱԿԻՑ ԵՂԲԱՐՍ

## Ի ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ ՓՐԿՉԻՆ

### ՈՒՂԵՐՁ

Նայս չորիցս անգամ
Նո փրկչին մերում '
Վերստին դառնամ
Ըղձիւք 'ի համբոյր,
Յորմէ հետէ աստ
Սահեալ կամ նըժդեհ,
Նըժդեհ ոչ անբաստ
Ի քաղաքս յայս վեհ.
Նշէրս անդ բաղում
Լռելեայն հեղի,
Նաւ զայս արդ հեղում
Ի ձայն լըսելի.
Փրկիչ իմ Յիսուս,
Վասն խաչի քոյ,
Զոր անպարտ 'ի յուս
Բարձցես 'ի մօտոյ.
Լուր ինձ որ 'ի դէմն
Համօրէն ուխտիս
Նու քեզ աղօթեմն
Որ կաստ 'ի մըտրիս,
Ըզխաղաղութիւն,
Զոր յերկիր ածես,

1 Քանզի 'ի Հռովմայ գրէ քերթողն զյարեւմտութիւնքս զայսոսիկ, ուր է Ջեմարան մասունք փրկչին մերոյ յղեալ անդր 'ի սրբոյն Հերոնիմեայ, զոր և 'ի Թափոր հանեալ յաւուրս ծննդեան, գնեն յուխտ ժողովրդեան.

Հաստատահիմն ընդոյն
Ամրացո 'ի մեզ,
Որ շուրջանակի
Բաղխիմք սատակած,
Քան ժայռ 'ի ծովի,
Մայրեք 'ի հողմոց.
Տուր մեզ 'ի կոչման,
Յոր քեզ հետևիմք,
Մինչև 'ի վախճան
Կալ հաւատարիմք.
Համբակք բարունոյդ.
Որ այժմէն խակ տաս
Յանթառամ մրգոյդ
Երբեքին մեզ դաս.
Մանուկ կուսածին
Հօր կամակատարդ,
Ի կերպ աղքատին
Աստուածդ եղեալ մարդ.
Կեցո յամայր ամ
Ըզձայր մեր որհի,
Որ 'ի քէն պատգամ
Ածցէ մեզ յերկրի.
Կեցո համօրէն
Ըզհօտ քո փոքրիկ,
Բանեալ առ 'ի քէն
Պահպանեալ ցայժմիկ.
Տուր, որ անմեկին
Կեանքս 'ի կենցաղում,
Կեալ 'ի միասին
Եւ 'ի փառսըն քում.

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## Ի ԼՐՈՒՄՆ ՏԱՐՒՈՅ

### ՈՒՂԵՐՁ

Քաղցըր ծիծաղն ՚ի գարնայնի,
Քաղցր եւ ծառոց հիւղք երփնագեղ
Նորոգեն զերգս ամի ամի.
Եւ ոչ տաղտուկ ձըպուռն ՚ի լուր
Նուագէ յեց յոստ ծիրանւոյ,
Ըզհին ձուենձ յեղյեղեալ գիւր.
Ներեա ապա ինձ, Հայր արհի,
Մաղթել դարձեալ քեզ կեանս յոլով,
Մինչ ամն ՚ի վերջ իւր խոնարհի.
Քաղցր ինձ կենացդ յոյս ՚ի հոգւոջ,
Քան խոնջելոյ նինջ ընդ ծառով
Կամ պապակելոյ վըճիտ խոխոջ.
Տացեն երկինք քեզ ամս յամայր
Որքան ծաղկունք են բազմահոյլք
Լայնածաւալ ընդ դաշտավայր.
Եւ որքան այգ ծիծաղախիտ
Հատոյս ցօղոյ մարգարտախայլ
Սփռէ ընդ ճառան եւ ընդ հովիտ.
Քեզ աստեղաց բուլից հանդէտ
Շուրջ յոգներամ պարունակեալ
Կայցեն որդւոց սիրելեաց ձեռ.
Եւ բերկրեսցիս նոքօք ՚ի սպառ,
Որպէս արփի ճաճանչաւէտ
Ի յաստեղաց շողեալ կաճառ.

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## Ի ՆՈՐԵԼ ՏԱՐԻՈՅ

### ՆՈՒԱԳ

Օ՛ր միշտըն մաղթեմ 'ի սրտոյս մրմունջ,
Հոգի 'ի բարձանց ազդէ յիս ներշունչ,
Նորոյ գէթ տարւոյս զայն 'ի սկըզբնակէտ
Դրոշմել 'ի քարտիս, ո՛ արհիապետ։
Ի վայելս ընչից թէ տենչին փարթամք,
Մե՛ր ինչք և մեր տենչ են կենաց քոյ ամք,
Ոյց ու ժանգահար զինանին մըթերք,
Այլ մեզ և ազգին գանձք արդիւնաբերք։
Գիտեմք զի քեզ ծանր է յանձնեալն աւանդ,
Եւ թէպէտ յոսկի կապեալ մեհեանդ,
Լուծանիլ խընդրէ գերի պարաւանդ.
Այլ 'ի սէր քոյոց համբեր զայն ո՛ Հայր.
Տացեն մեզ երկինք ըզքեզ յամս յամայր,
Եւ յարդեանցդ հաշուել զամաց քոյ համար։

---

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ ԱԽՏԱԿՐԵԱԼ

## Ի ԼՐՈՒՄՆ ՏԱՐԻՈՅ

### ՆՈՒԱԳ

Մի՛շտ խնկ և ցանկ, այլ առաւել այժմ 'ի սկըսեալ նոր տարւոյս,
Կողկողագին աչք 'ի յերթեր կենդանութիւն մինչ մաղթէ
Ուխտ երկնակրօն հարց և եղբարց ցաւակնելումդ 'ի յախտէ,
Գոլ ձայնակից բամբից նոցին և ինձ էր անկ կըրտսերոյս։
Այլ իմ հրեշտակն ըզմաղթանաց փոխէ ըզձայն 'ի խրախոյս.
Ու աստանօր ըզտանջանքումբք աստիճանօք իջեալ շող,

Եւ ոչ գուշակ որ երկնառաք մեզ զապառնոյն հերձեալ քօղ,
փարատելոյ ցաւոցդ 'ի քէն ուռեալ նըշան՝ ազդէ յոյս .
Մարգարէիցըն տէրն ինքնին տայ սուտ պատգամ անընդմէջ ,
Զայն զոր յառաջն ետ՝ 'ի յերկիր առ գութ սիրոյն յորժամ էջ .
Յոր հաւատան միտք իմ ըմբոստք անզխմադարձ և անվէճ ,
Զի ուր երկուց և կամ երից միաբանեալ յիւր անուն ,
Զոր հաւատովք ինչ 'ի Հօրէն իւրմէ խընդրեն՝ թէ առնուն ,
Չընկըրկեսցե՛ն բամեալ մեր խիղճք զանխուն 'ի քէն ըզմահուն ,

---

## ՑԱՄՓԵՏՆ ՂԱՐԱՄԵԱՆ

### Ի ՆՈՐԵԼ ՏԱՐԻՈՅ

#### ՆՈՒԱԳ

Արեւն ահա օրակըշիռ
Պարունակեաց և զայս իւր հիռ .
Անցէ և նոյս անկեղակարծ ,
Եւ ոչ անցեալըն կայցի դարձ ,
Ըզքառածիմն որ ընդ երկին
Ակերասանք յաւէրժ վարգին ,
Զնոսա երկոկեքըդ մընայուն՝
Կալցիս , Ակպետդ , անզընայուն ,
Զուր առանցն է վաձառաշահ ,
Եթէ և այնք անկեալ 'ի սահ ,
Իզհետ նոցին յաջորդէ մահ ,
Դու զանցաւորս գիւրասահ զանձ
փոխանակեալ ընդ սոն անանց ,
Կեցցես մահուն միշտ գերազանց ,

ՑԵՐԿԱՑՆԱԽՈՒՐՍ

# ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԱԲԲԱՀՕՐ

## Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՍՈՒՔԻԱՍԱՆՑ

### ՆՈՒԱԳ ԵՐԳԵԱԼ Ի ՀՌՈՎՄ

Զօր ’ի սկիզբն իմն տարւոյս էր ըմբռն,
Նուիրել զայս քեզ հօրդ խմբում ձօն,
Ընծայեմ ընդ խմբս արդ եղբարց,
Ի սրբոցն Ալանաց տարեդարձ.
Որպէս խունկ ծըխեալ խառն ընդ Սաքայն,
Ըզմաղթանս իմ զայս կից ընդ նոցայն
Նուիրեսցէ անմահին ’ի սեղան
Սերովբէն քոց կենաց պահապան.
Կարմրափայլ պըսակեալք ’ի յուղէշ
Ի հանդէս տօնի այդր ’ի Սեհէժ
Մինչ նորին քեզ մաղթեն կեանս յաւէժ,
Ընդ նոսին զիմն և իմ խառնեալ ձայն,
Լսելի քեզ բարեօք ամենայն
Ըզտարեաց մաղթեմ շարս ընդ երկայն.

---

## ԱՌ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԱԲԲԱՀԱՅՐ

### ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

### ՏԱՌՔ ՆՈՐԱՁՈՅԼՔ

Ո՞ւմ յաւէտ ’ի դէպ նախկին զլուրեանց երգ
Յերկուրեալ կարեն տառքըս դեռ համերք,
Եւ քեզ, ո՛ արհի ուխտիս դիտապետ,
Սիրող զարգացման որդին անձկաւէտ.
Զամուռք ’ի ներքոյ, զխոսեմ, ցաւք և վիշտ,
Զամուռք ատրաքոյ ներքին ըզքեզ միշտ.

Այլ կան քեզ և Սեան հատուցմունք կրկին,
Իբր խղումնական քո նախատրպլին ։
Այսպէս 'ի ստահակ գումարել հոյլից,
Մըրրկեալ կոհակք 'ի Հանդըրն 'ի ծոց,
Գերձագոյն 'ի կէտ նաւահանգըստին
Զակաղձուն բեռամբք վարեն զեղեւլին ։
Ըսպարիզամէմ այսպէս երիվարք,
Թէպէտ և առոյգք թէ և օդապարք,
Այլ ճապուկ 'ի ձաղկ և մտրակ 'ի կուշտ
Ղեպլին կառածից 'ի նպատակն անշուշտ ։
Եւ, որ ըղկառացս այս երասանակ
Նա զարգմաւխս նըւաճես ըղջեակ,
Ի կէտն արշաւեմք պըսակահամբար,
Վեհ քան յողիմպեանն յաղթողք 'ի գուպար ։
Այսպէս վայրահակ վտակ գետնատող,
Ընդ նեղ խողովակ ցայտէ երկնադող ․
Զի 'նդ սանդուղք խաչին, առաք ըղպատուէր,
Ըզհետ փըրկողին բարձրանալ 'ի վեր ։

---

## ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՆ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ ՀԱՅՈՑ

## Ի ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԲԱԺԱԿՆ

### ԵՐԳ

Սրբեալըդ բաժակ
Անմահից կենաց լիցի քեզ ճաշակ ․
Այլ մերոց սըրտից
Հրաժեշտ քո 'ի մէնջ ծանր առթէ թախիծ ,
Երթիցես ողջամբ ․
Ի թեւս աղօթից իբր 'ի թեթեւ ամպ
Ի Բիւզանդիոյ
Ժամանեալ 'ի ծոց , նըստցիս յաթոռ քո ․

Հօլանել յամերամ
Ըզհօտ քո անդորր յարօտ անթառամ.
Եւ ամաց քոց թիւ
Ի պերճ վաստակոցդ արկցի 'ի հաշիւ.
Վիճեղ տուեալն աւանդ
Թէպէտ բեռն է ծանր և խիստ պարտաւանդ,
Այլ որդւոցդ 'ի սէր
Ծանրութեան հոգոյն հայրաբար համբեր.
Մեկնիս մեզ 'ի վիշտ,
Թողեալ քո զանձուկ 'ի սիրտս մեր միշտ.
Որոշխմբ տեղեաւ,
Տամնեալն անձկալի յոյժ արագ թռեաւ.
Այլ սիրտք մեր անլոյծ
Կապեալ ընդ երեալս 'ի սիրոյն համբոյց,
Կեցցուք անմեկին
Ի մի տեղ Յիսուս կեցք ամենեքին.

---

## ԱՌ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ

## ՔԱՂԿԻՍՄԱԿԱՆ ԿՈՂՄԱՆՑՆ ԴԻՏԱՊԵՏ

### ԵՐԳ ԲԱԺԱԿԻ

Ոչ փաղերնեան[1] աւիշք որթոյն,
Եւ ոչ փորմեան[2] հոյզք ծաղկահամք,
Այլ յիս աշխոյժք ազգէն Հոգւոյն.
Անցցեն աւուրք, անցցեն և ամք,
Այլ յիշեսցի միշտ քո անուն
Ի տանս յայսմիկ' ուր բազմեալ կամք[3].
Կենդանութիւն դիտապետիդ,
Կենդանութիւն և բազմելոց

1 Փաղերնոն երկիր յԻտալիա, բերրի ազնիւ գինւոյ.
2 Փորմիա քաղաք յԻտալիա յերկիր գինեւէտ.
3 Յեկեղեցատան աշխի 'ի Հռովմ, ուրոյ կառուցող նոյն ինքն էր զոր երգէ քերթողս.

Ընդ քեզ 'ի ճաշս յայս բերկրալից․
Նահապետացն 'ի տիպ սրբոց
Երկայնաւուրս տացէ վեհիդ
Մերանըստեան յաստեղաց քոց։
Արբեալդ 'ի քէն զինւոյ բաժակ
Ըզվերնատանն ինձ ածէ յուշ
Ըզկենարարըն զայն ճաշակ,
Զոր 'ի հոգւոց յաճախ 'ի բոյժ
Ըմպես յանմահն 'ի պատարագ,
Զենլոյ գառինն 'ի հօտ անոյշ։
. . . . .
. . . . .

---

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## ԿԱՌՈՒՑՈՂ ԵԿԵՂԵՑԱՏԱՆՆ ՀԱՅՈՑ Ի ՀՌՈՎՄ

### ԵՐԳ

Տեսի 'ի տանս արձանագիր,
Դրոշմեալ առ սուրբ սեմոյքն 'ի վէմ[1]․
Ի զամենայն անդ վերծանեմ
Ըզբախտ սորա եւ որ է ձիր․
Եւ զվերըստին իւր կառուցմանն
Ըզժամանակն անդ ընթեռնում
Արձանակեալ մանրապատում,
Որպէս պարտ իսկն է եւ արժան։
Զկառուցողին ապա զանուն
Հետազօտեալ անդ վայր 'ի վեր,
Եւ զարմացումն ինձ յոյժ ածէր
Խորախորհուրդըն լռութիւն։
Որպէս հըմուտ ճարտարապետ
Թէ երկնաբերձ կանգնէ տաճար,

1 Ի Հռոմ յեկեղեցւոջ սրբոյն Վլասայ կայ արձանագիրս․

Մնդընդալիր նաւս 'ի խոնարհ
Դիմնէ զետեղ հիմն և ամեթ .
 Նա անվրկանդ 'ի գլուխ լերին
Ուր ամբառնայ յամպըս կաղնի ,
Թէ հաստարմատ ոչ կանդաղի
Յերկիր 'ի խոր արկեալ կաճ՚ն .
 Նոյպէս շնորհք աստուածական
Զիւր շինուածոյն անձեռակերտ
Արկանէ զհիմն անշարժ և սերտ
Ի սիրտ խոնարհ անպարծական .
 Դու կառուցող ձեռակերտիս ,
Բաղխտական կողմանցըն սլեա ,
Դու յիշեսցիս աստ միշտ յաւէտ ,
Թէ և 'ի քանդ ոսկոյդ լռիս .
 Նա թէ հիւրոց լինէ մի նըւազ
Շնորհացանես դու 'ի վիմիդ ,
Նոյն իսկ քեզ փառք են ճըշմարիտ ,
Նա բոլորից վեհագոյն գաս .

---

ԱՌ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ

## ԳՐԻԳՈՐ ԺԶ.

### Ի ԳԱՏՈՒՆԵԼ ԵԿԵՂԵՑԱՑԱՆՍ ՀԱՅՈՑ ՅՈՅԻՆ ՆՈՐԱ Ի ՀՌՈՄ

ԵՐԳ.

 Ո՜վ դու նըժդեհ զխնայըաւ ,
Հայըրդ հոգւոց մեր Պալհաւ ,
Կոհակակոծ ծովահերձ
Դաս ընդ լերինս բարձրաբերձ . . . .
 Նա այըըր գայ 'ի Հռոմ կոյս ,
Ի կեփայեան 'ի գահոյս .

Ուր փոխանորդն Յիսուսի,
Մեծին յաջորդ Պետրոսի,
Դրանց դըժոխոց գերազանց,
Օրէնս կրօնից տայ ազանց.
Զոր և առեալ 'ի նմանէն,
Դարձ նա յաշխարհ իւր անդրէն.
Իսկ այժմ, ով տէր, գաս դու հիւր
Ի սրբարան այսր 'ի յիւր,
Խոնարհ առ նա աղօթկէր
Եւ բարեխօս վասըն մեր.
Օրհնեալ որ գաս յանուն Տեառն,
Ըզհոգեշունչ լընլով տառն,
Եթէ ահա գայ առ քեզ
Խոնարհ արքայն քո և հեզ.
Լուսաւորիչըն Գրիգոր
Շըրջեալ յերկնից զաչս 'ի սոր,
Հըրձուի սերկեան 'ի հանդէս,
Ի համանունդ իւր 'ի քեզ.
Նոր Սեղբեստրոս մեզ պարգեւ
Տըւեալ ազգիս Հայոց քեւ,
Յընծայ յոտին քում տաճարս,
Զնախնին 'ի յուշ ածեալ փառս.
Դու, որ 'ի սիրտ անյողդողդ
Ըյքան ալեաց համբերող
Զանշարժ վիմին տիրաբար
Ըներես յանձին ըղտոխպար,
Եւ որ Փըրկչին Յիսուսի
Ի տիպ ճըշգրիտ 'ի յուսի
Կրելով ըզխաչ նոյնպէս,
Սահ 'ի յերկինս մեզ հորդես,
Նոր յաւելեր և զայս մեզ
Խոնարհ հոգւոյդ ցոյց և հեզ,
Մեծարելով զանարգս այս
Ըզ արժանի քեզ ըղձայս.

Եւ քեզ կամօքդ աստանօր
Թուեցեալ 'ի սիւնս կանգնաւոր.
Եւ ոսկեհուռ ծիրանի
Քեզ ընդ ոտիւք ծածանի.
Այլ որպէս զարդք ամենայն
Թագաւորին դստերն այն,
Ի սիրտս մեր 'ի ներքոյ
Ծածկին անտեսք արտաքոյ.
Ի զորըրբազամ ոտիւք քով
Օ՛ սպասիկ իղձիւս հեղլով,
Խընդրեմք ո՛ հայր բարեգութ,
Ի զհովանի քո աջոյդ.
. . . . .
. . . . .

---

ԱՌ ԱՐՀԻԱՊԱՏԻ ԴԻՏԱՊԵՏՆ ՏԱՐՕՆՈՑ

## ԻԳՆԱՏԻՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ

### Ի ՀՌՈՄԱՅ ԳԱՀԻՑՆ ՎԵՐԱՊԱՏՈՒԵԱԼ

ՆՈՒԱԳ.

Մխիթարեան ուխտին ընդ փառս ոչինչ նուաղ քան ընդ քոյս,
Տըրուպս յորդիս իւր և քոյին ցընծամ արդեամբք և 'ի յոյս.
Իղձք որ արդէն լըցան 'ի լիս, և ոյց մընամն անձկաւէտ,
Բախեն ըզսիրտ իմ իբր ալիք փարեալ զափամբք մէտ 'ի մէտ.
Մինչ հայրապետն աստուածարեալ կամացն երկնից արքանեակ
Ի գերարգոյ ծաղկեալ ալեօք եած 'ի գլուխ քո ըզթագ,
Աչելի յաջումն իւր սաւառնեալ տեսի հրեշտակ ընդ այեր,
Արդարութիւն 'ի գեղանի նա 'ի տեսոյն խմմէր.
Եւ այլ հրեշտակ ոստ 'ի ձեռին իւր ձիթենւոյ հողաթեւ,
Խաղաղաւէտ ըզյոյս 'ի դէմս ածեալ պարէր շուրջ ըզքեւ.

Ըզմին 'ի քեզ այժմէն տեսի լի բովանդակ ցընծացեալ,
Իւ 'ի միւսոյն մնամ անշուշտ 'ի ցընծութիւնն ակընկալ.
Մինչ չիք 'ի շուրթն իւր աղաւնին դարձցի 'ի լաստ անդրէն իւր,
Ընդարմութիւն ածեալ ընդ սուրբ խաղաղութեան 'ի Հայքըս.

---

ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

## ԱՆՈՒԱՆԱԿԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՐԳ

Ընդ ուրախութեան, զոր ընկեա բաժակ,
Եւ զոր հանդիսից բաշխես 'ի ճաշակ,
Զամփիթէատրեանն ինձ ածէ 'ի յուշ
Պանդամատրոնն տեսիլ խուժադուժ.
Ուր հողն 'ի վկայից ոռոգեալ յարեան,
Ընթիւք 'ի նմանէ մարտիրոսք յարեան,
Ծագելով 'ի Հռոմ ջահք գերապայծառ
Քան թէ 'ի յերկինս աստեղաց կանթառ.
Ի հողս նոյն փայլեալ գերարփին
Իբր արեւ յաստեղս տեսանեմ ըզմին.
Այն զոր ոչ բաժակդ եւեթ յուշ ինձ ած,
Այլ եւ 'ի սեղան ջամբեալդ 'ի քէն հաց,
Ըզցորեանն ասեմ զայն աստուածային,
Զոր հաց գազանաց ժանիքն արարին.
Այն որ տէրունոյն մանուկ 'ի գիրկի,
Եւ այժմ 'ի յերկինս 'ի նմանէն զըգուի,
Ծնեալ 'ի տեղւոջ՝ ուր զարիւնն անմեղ
Սուրբ աստուածազգեաց Հայրապետն եհեղ.
Ըզնորին մաղթեմ տողիւքս այս զարիւն,
Տալ անուանակրիդ իւր կենդանութիւն.

1 Յաւուր տօնի սրբոյն Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետին յօրինեաց քերթողն զերգս զայս 'ի Հռոմ, ուր յամփիթէատրոնին մեծի կատարեցաւ սուրբն.

### Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿՆ

# ՂԱՐԱՄԵԱՆ ԱՍՊԵՏԻՆ

## ԵՐԳ

Ո՜ւր յապարանս ոսկեձեղուն,
Ո՜ւր 'ի խընջոյս փարթամ 'ի սպաս,
Ընկերութիւն անդ զուր խընդրես ով մեծատուն,
Այլըր մատոյր 'ի ժողովս յայս,
Յերգըս տաղից ուր քերթողք
Եւ 'ի գեղգեղ ներդաշնակ ·
Երաժըշտաց հընչեալ փողք,
Յուրախութեան 'ի բաժակ
Ո՜ Ասպետն երգեն մերազնեայք ·
Անշուշտ քան զայս սիրոյն գուշակ
Ու է սըրտին սիրապատար ·
Ապա բեկանեն խորոյն այն ծովուն կոհակք ·
Նա զմատն առնէ հըմուտ 'ի քնար ·
Ո՜ աչս 'ի յերկնից դու 'ի սոր
Դարձո առ մեզ ով Պօղոս ·
Դու յառաւելն ես հըզօր
Ի մայրենիդ ցոյց սիրոյ
Ա՛ռ հագեծնունդ որդիդ քոյ ·
Դու թէ զմաղթանս մեր զապիկար
Ընդ քոյդ խառնես աղերս անդարձ,
Տացեն երկինք զանմահից կեանս անըսպառ
Աղեքսանդրի առնել 'ի վարձ ·
Բուռնք 'ի պարտէզ անթառամ
Սերածեալ ծառ երկնուղէշ,
Պըտղաբերել յամերամ,
Արփոյն 'ի նմա լոյս խառնէշ
Ճառագայթեալ միշտ յաւէժ ·

## Ի ՀԻՆԳՆ ԱՊՐԻԼԻ

## ՅՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ ԱՍՊԵՏԻՆ

### ՏԱՂ.

Եկ Ապրիէլ ցանկալի
Եկ, կարմրերփեան ըզպսակ
Ածեալ 'ի գլուխ վարդենի.
Եւ զՄուսայից սիրայնոյն,
Որ քեւ ետես նախ զարեւ.
Դարձիր եկ բեր ինձ զանուն,
Եւ այնպիսի վայելուչ
'Ի քեզ զարդ ծաղկունքդ յօրինեն
Եւ ոչ գոհար վարդից փունջ,
Որպէս դրոշմեալդ այդ 'ի քեզ
Աղեքսանդրի անուան տիպ
Զոր ինձ առեալ դու բերես,
Զքեզ ողջունէ աւասիկ
Յեցեալ 'ի յոստ վարսագեղ
Սոխակն 'ի յիւր դայլայլիկ.
Ընդ զեփիւռ քաղցրախուք,
Փարեալ 'ի մէջ զալարեաց
Ազծաղկաւէտ արօտիք.
Ճեալի զարուն քեզ 'ի տաղս,
Եւ 'ի նաժիշտըս տարւոյն
Գեղջայօրէն ձոխանաս.
Այլ յոյժ քան զայդ ամենայն
Ցանկալի զքեզ յօրինէ
Աղեքսանդրի շուք անուան,
Պճնեալ դալար զարդարես
Դու զծաղկազանց աշխարհիս
Զիմանալի ըզպարտէզ.

Դալար անդ ծառք պըտղաւէտ
Ի ջերաերախտ մըշակին
Լընուն ըզյոյս միշտ յաւէտ .
Նա թէ Մուսայք լոկ համրըք
Քաղցրաձայնից անդ հաւուց
Նախանձընդդէմ շարժին յերգ ,
Եւ յայն այլազգ խրախուսէն՝
Բայց արծարծեալ նոցին խանդք
Յաղէքսանդրի անուանէն .

---

Ի ՀՈԳԵԻՈՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱԼՈՍԻՈՍԻ ԵՂԲՕՐ ՂԱՐԱՄԵԱՆ ԱՍՊԵՏԻՆ

## ԸՆԴ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՍ

Քան ընդ Ալոեայ աղցաւոր ծըննդ ,
Ընդ այս զոր տօնէ ժողովս համագունդ՝
Հըրձուեալ 'ի յաստեղս հայրըն Ղարամեանց ,
Խրախոյս խընդութեան տայ մեզ 'ի բարձանց .
Նոտ ու գուսանաց հընչէ ցընծութիւն ,
Եւ կայթք պարանցիկ , ձեռաց ու ծափիւն ,
Նայլ բարեպաշտիկ սէր զոգ ընդ կրծից
Ձեռն 'ի ձեռն ածեալ ցընծան պարակից .
Հարազատք երբեակ սիրելիք միմեանց
Ի նոր բորբոքին բոց սիրապատար
Յայս եղբայրութիւն վեհ և գերազանց .
Զայն՝ տաղարթաւոր Պինդեայեցըն պար
Նըրգեցէ ծընունդ , տուն Մխիթարեանց
Զայս հընչէ յաւէրժ 'ի սըրտին քընար .

# Ի ՆՈՐԸՆՏԻՐ ԱԲԲԱՀԱՅՐՆ

## ԵՐԳ

Լըռե՛ա Մուսայդ անմըռունչ.
Մերկացի՛ր ըզսեւազգեաց քոյդ ըզքօղ,
Զարտասուաց սըրբեա յաչաց քոց ըզցօղ,
Դարձո յերգոց զողբս 'ի մըրմունջ,
Սանդարամետ ձիգն ընդ վայր
Ջերունուոյն գործեաց կենացն 'ի դարան.
Աչաւիկ վերկենցաղեալ թիթեռն այն,
Եւ ոչ մնացաք որբ և անհայր,
Զայս ընդ եթերս ամբառնամ,
Մըխիթար խուռն ահա բերկրեալ անդ,
Եւ տօն մեծ խըմբէ յերկնից բարձրանդ.
Ընդ հայկազանց սըրբոցն երամ,
Վընարեն ժառանգք ասմնեան,
Դուք զի կայք քերթողաց պար հայկազանց.
Աշակերտդ Ապոլոնի գերապանծ[1]
Զի՞ յապաղես մնամք տարտամ,
Առ խուրն երկլին պաշտօնէ.
Պաշտամանն ընձեռէ ոյժ համեմատ.
Թէ թըռչնոյ ոչ էր տըւեալ փետուրդ այդ,
Ու հրամայէր թըռչել բարձ.
Դեռ եւս ընտրեալ Բեսելիէլ
Խորանին ճարտարապետ վըկայութեան,
Ըզնովաւ շնորհաց Հոգւոյն գետք խաղան,
Լաւ քան ըղձեան 'ի գործ ածել,
Ըզուխն ամպոյն նըկատեմ
Զերկնընթաց Իսրայելին առաջնորդ,
Հովանի անապատին ընդ ոլորտ,
Եւ զգիշերոյ վանել նըսեմ.

1 Ակնարկէ 'ի վարժապետ իւր և 'ի վարժակիցս իւր քերթողս.

Յաստուածախումբ առենին,
Ինքն Հոգին 'ի քրովբէից Թեւածող,
Նա ինքն էր, եւ ոչ այդ բախտն իշխեցող,
Եւ ոչ հրամանք Ճակատագրին.
Հովիւ ընտրեալ դու կեցցես,
Պարագայց ամբ ըզքեզդ հովուել հօտ.
Եւ երկինք Թէ իցեն այսոմ կարօտ,
Հանցուք յօժար մամն 'ի մերմէս.

---

## Ի ՆՈՐԻՆ ՕԾՈՒՄՆ

## Ի ԳԻՏԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԻՒՆԵԱՑ

### ԵՐԳ

Ի Սիւնեաց աշխարհէն
Յարեւուն 'ի տխր խաւարէ
Ձիք 'ի կառս 'ի հրեղէն
Երշաւին այսր 'ի Սեհէժ.
Նոյնք երբեմն ընդ ալխ
Եսպատակք զայրացելոյն,
Դան այժմիկ բարձր 'ի վիզ
Տեառն 'ի հաշտ հեծելուԹիւն.
ՅաԹոռակին յեց ոգին
Աշխարհին այն պահակալ.
Օվիր անխիքըն գլլին
Սանձարձակ կառավարեալ.
Դու ոգի գերաբուն,
Մ`ուսական ազգեա սիւք յիս.
Երգել զերդ սիրայնոյն,
Իզմէ յայդ ուղի Ճեպիս.
Ըս ընտրեալն իւր հովիւ,
Սիսական զրօշմ 'ի վերջէ,

Ոսկետուտըն վառի,
Խաչադրօշ գունդ ճաճանչէ,
Ի Սուկաւ լերին արդ՝
Հընդկերին Ալյանքըն սուրբ
Խայտան Վ՛օշքըն ալեգարդ,
Երկնային վառեալքըն հուրբ։
Աղօթից նոցին ամպ
Յօղացեալ յարևելից,
Զընտրելոյն գագաթամբ,
Իջ ցօղովն ըղձա ելից։
Եւ ընդ գլուխն 'ի մօրուս,
Իբր երբեմն Ահարօնին,
Զիւղն եհեղ տէր Յիսուս
Յըստորոտըն գլխապանին։
Ի Սիւնեաց եղեւ ազդ
Սըրտատուչ հարսին այրեաց,
Եւ զմըրշանն յըղէ աստ
Փեսային իւր խօսելոյ։
Սերկեա, հարսն ողջախոհ,
Թաղծութեանդ ըղձանդերձ լուրթ.
Պարիկք Հայք 'ի մի գլոհ
Ագլսեմն երգեն խորհուրդ։
Դու աշխարհ բարեբաստ,
Նախնին խայր Բարդուղիմեայ.
Զերկնակրօն հարց երաստ
Յաջորդեալ ըղձեա նորա.
Եւ վարժից լեալ դայեակ,
Եւ Աթենք երբեմն 'ի Հայս
Կառուցար՝ խնմերեակ
Սուսայիցն Հայոց 'ի կայս։
Դու և արդ, մինչ հրատղ
Սըմբակաց գլխոխ 'ի կոխ,

1 Զի ծնելոյն անուն կոչէր Սուքիաս։

Մ՚ինչ աստեղք անմըշող
Այլ և բախտն է քեզ ոսոխ,
Ով 'ի սպառ թողացար.
Կանգուն կայ քոյին նըսեհ,
Եւ կըրօնդ և վարժեար,
Այլ 'ի տար աշխարհ նըժդեհ.
Աստ փոխան քոյին մեք
Ի հանդըրին ցընծամք 'ի ծոց.
Զարթիք դուք, զի՛ լըռէք,
Նըւագիչք հըմուտք երգոց.
Զարժանին դիտապետ,
Ընդ աջոյն իւր ամրապահ,
Ծածկեցաւ տէրն որ եդ
Ի Սիւնեաց բարձրագոյն գահ.
Արքայից աթոռք պերճ
Հուպ ընդ հուպ մինչ փոփոխին,
Մ՚ի Սիւնեացն առցէ վերջ
Յեց յանշարժ գահ Յիսուսին.
Աստ Բաբել վաղանխուլ,
Մեմփիս ընդ կործան անկեալ.
Ընդ հիմանքըն խարխուլ
Թաղին գահք աշխարհակալ.
Եւ զերկիրըն անծանօթ,
Ուր նոցա ծածկեցան փառք,
Ըզխոպանըն զարօտ
Հերկեցին գերի արջառք.
Այլ Սիւնեաց 'ի գահոյս
Մ՚ի գըժխեմ հըպեսցի բաղդ.
Ի դըրօշմն տացէ լոյս
Նըշանին ամենայաղթ.
Իբր 'ի նիշ ներկոյ դըրանց
Յարենէն եղեալ թաթախ,
Ըզսեւօքն արար զանց
Սատակիչն անդըրանկածախ.

Շնորհատուին հայրապետ
Հոգևոր տերանցն 'ի կարգ՝
Նորգեացէ միշտ յաւէտ
Սէր 'ի սիրտ քան փողք և քնարք.
Կեցցէ նա յամս յամսյր
Ի խաղաղ աթոռ իւրում.
Հայ ազգին 'ի մերն հայր
Մ՚ի լիցի Հարկն ապառումն.
Ձիթենիք անթառամ,
Ձեռատունկք նորա յոլով,
Քահանայք լուսերամ
Կացցեն շուրջ ըզսեղանով.
Խայտասցին զառանց հօտք.
Յաւելուն հովիւք նոցունց.
Յընծասցեն դաշտք արօտք,
Յաճախին մըշակք 'ի հունձ.

---

## Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՍՆ ՍՈՒՔԻԱՍԱՆՍ

## ԱՌ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԱՆՈՒԱՆԱԿԻՐ ՆՈՅԻՆ

### ԵՐԳ

Ի յՄ՚ամսոց մարգէն զխմբալք այսր 'ի Հայս,
Հարսին չըքնաղ արքայազնին հարսնաւէրք.
Հըրձուլք վերնոյ առագաստին արդ 'ի կայս,
Ով փեսային Քրիստոսի սուրբ փեսաւէրք.
Շարխական զոհիդ ձեռոյ գլխշատակ
Տօնէ մանկամբքն եկեղեցի յայսմ աւուր,
Խառնեալ խընծիղ յողբերգական իւր նըւագ,
Յեռեալ արտօսր 'ի վարդագեղ ծընօտ իւր.

1 Հոգեւոր տէր. մակդիր է Սրբազնեայ հայրապետին.

Քրիստոսական ամենազօր սիրոյն բոց,
Որ հրազինեալ ըզբազմերամ սրբոյն հոյլ՝
Եւ խաչ 'ի յուս հրաժարեցոյց յերկրայնոց,
Լուցաւ 'ի ձեզ գերապայծառ 'ի նշոյլ՝
Գըրգեալք 'ի փառս և 'ի պատիւ աշքունեաց,
Ու մեծութեան և ոչ բարձից լինէ հրապոյր
Խոչ արկ կամ խութ յասպարիզիդ երկնընթաց,
Եւ ոչ հըզօր Թագաւորին սաստ յահուր․
Ի Նաղկէց իջեալ քարոզքն 'ի լեռնէն,
Որք իբր ոսկի փորձեալ գըտան 'ի բովս անդ,
Եդին 'ի հլու ձեր ուսդ ըզխաչ կենացն,
Ոսկեղինիկ զուլամբդ արկեալ մեհեանդ․
Ո՛վ երջանիկ ալիք գետոյն Եփրատայ,
Որ ընդ շնորհաց Հոգւոյն ըղձեօք զեղանէր,
Ի կեանս ըղձեղ վերածնելով գերակայ,
Ի ծաղկազարդն խոր վայելուչ գետեզեր․
Յելուն երկինք ահա, տեսէք 'ի հանդէպ․
Եւ որ յանտեան հաւատացիք 'ի Յիսուս,
Ա՞ 'ի վնոյն կըրել յանձին զերաշխէպ,
Տեսէք այժմէն զառհաւատչեայն ձեր ըղձոյս․
Ա՛նուի 'ի լեառն անդըր դիմեալք խաչակիր,
Օ՛րմէ հարցմամբ տեղեկացեալք ըստուգիւ,
Եւ ձեզ կանխաւ եցոյց դուշակն հոգեկիր,
Սուրբքըդ ձեռօք անբիծք մտօք և սրտիւ․
Խոստաճարակք ելով զօրէն անդեոց,
Գըխախըլուխք վայրենացեալք իբր ըզբօշ՝
Նախանձելիք եղէք զօրացն անմարմնոց,
Ընդդէմ չարին ձըգնեալ զինուորք խաչակրօշ․
Օ՜ն հպարտացար լեառըն պարարտ Նաղկէց․
Փառք, որ նոքօք 'ի քոյդ հանդչէր դարևանդ,
Ի Սուկաւէտ փոխեալ լերինն 'ի վերոյ,
Օ՛սլինն ընտրեաց քան ըզյուռթի քոյդ մարմնոյդ․
Քան զանուշակ ցօղն, որ ըզքո դալարիս
Պըճնէ այգուն մարգըրտայեա 'ի շրպար,

Աստորաբուղխ արեան նոցա նա յալիս
Ծփանազգեստ ալճնի հարսին 'ի ափպար ·
Որոց բարձեալ ըղձենչալին խաչ խրեանց ,
Առ սատակիչսըն մըտադիւր դիմելով,
Իբր ըղձաւլինս 'ի մէջ գայլոց գիշախանձ ,
Հեղին զարիւնըն խաչակիցք տեառն եղով ·
Ահա պսակք ձեզ 'ի յերկինս անթառամ
Ձեզ պատրաստեալ մընան , որի նահատակք ·
Հրեշտակք երկնից գեղուն ըղձեօք խուռներամ,
Ինքնամըւէր ողջակիզիդ 'ի փափաք ·
Պօղեալք 'ի կեանս 'ի խաւարչտին լերանց ծերպ ,
Զարքունական կոխեալ ըզփառս առաթուր ,
Ջահք 'ի մահուդ պայծառացայք արփակերպ ,
Յոսկերտուդ ձըգեալ խընդիր զարքայն հիւր ·
Լըւան երկինք · ահա 'ի նմին խիկ տեղւոջ ,
Ուր արտասուքդ ուր և արիւնք ձեր հեղան ,
Ուր փափկասուն մարմինքդ արկան 'ի կոչկոճ,
Ախտահալած վիժակք վըճիտք խոխոջան ·
Գըրպատիկեայ ծոլակին տիպ գեղահրաշ ,
Նոյն վէրըստին նորոգեցաւ աստանօր ·
Եւ մարմնաւոր եւեթ եղյն ախտիւք հաշ ,
Այլ և բաժիչ ախտաժեռացն հոգեոր ·
Անըլնջականք , առ որս հանդերձք դուք նըժդեհ ,
Ձեզ պաղատին յարտօսրաբուղխ 'ի սրտէ ,
Որ 'ի յերկրէս՝ ուր ձեզ ծագեաց լոյսըն վէհ՝
Ագըլթութիւնդ ձեր առնել 'ի բացէ ·
Պաղատեցէք ձերով արեամբդ հաշտարար ,
Խաղաղութիւն շնորհել մերոյ աշխարհի ·
Եւ ըղբուժումն ախտակրելոյս տալ 'ի պատ
Անուանակըրիդ ձերում, մերոյ Հօրս արհի ·

# Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ ԵՐԿՈՒՍ

## ԵՐԳ

Ընծայուորք են, ո՛վ անբան աղաւնի,
Որ այսօր քրիստոսաշէն տաճարին
Աղանին աւետաբերք հաշտութեան.
Միո՛յն ու ողկուզազարդ որթենի,
Հասկաթու զո՛հ կենսատու ցորենին
Աշխարհին առեալ բերեն 'ի բերան,
Ընձեղունք մատուցան ընդ երկնաւ,
Հաշտութեան աստուածայի՛ր նշանակք,
Եւ փախանք երկնատեղաց բարկութեանց.
Մի՛ եւս այլ համայնաջինջ հեղեղաւ
Ըզմեղաց լուծցէ աշխարհ ըզվրիժակ
Ի ներհակ զխոնէլ բոլից ատեղաց.
Նորատունկ զրախտին բուսոցըն մշակք,
Հովերուղխ գետոցըն զնացք կենսածիր
Ծփրածիր 'ի ձեր խընամս յանձնեցան.
Ձեզ ծաղկունք մնան կարօտ, և բուսակք
Թարշամեալք 'ի ծարաւոյ անյարիր
Կենսակիր ձեօք վերըստին կանգնեցան.
Մահացուք զերազանցեալք անմահից,
Ունելեաց չէղեն կարօտ 'ի մասոյ
Ի նոցունց անհըրպելին կայծականց.
Հովեղէնք ընդ բոցաղէն Սերովբէից
Կաքաւեալ 'ի պատերազմ թանց զինուց,
Զանմահոյց բացին շաւիղըն կենաց.
Նո՛ր Մովսէսք աստուածախօսք նմանապէս,
Ահարոնք քրիստոսական ամբոխին.
Ի լերին նա զերեւոյթն Ըմանէկ,
Ըսպաղէն առեալ գուպար նոյնպէս
Եւ տքա բազկատարածք 'ի բեմին,
Պարտեցին զաներեւոյթն Ըմանէկ.

Ի խորանն երբեւ յաճեղ մըտանէք,
Ահարոն ընդ Մովսիսի աջակից,
Ի յերկնից ձօն ուղերձել քաւութեան,
Կամ 'ի լեառըն մինչ Թաբօր ելանէք,
Այլակերպ Յիսուսին եւ խօսակից,
Մասնակից լուսի եւ ինձ գոլ յիշման.

---

## Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ ՎԵՑ

### ԵՐԳ

Ով ըղձըրոլքըն վեցեքումբք վառեցար
    Հուրդ աստուածային,
Դու բոցըղեա յիս, տուր եռանդն եւ բարբառ,
    Երգել ըղձոսին.
Դու եւ ըղպիղծ շըրթունս երբեմն եւ զանարգ
    Յարդարես քարոզ.
Եղուք համերք եւ յիմաստից միտք դատարկ
    Ըն քեզ պերճախօս.
Զայս քեւ մուսայքն Իսրայելի հոգեկիր
    Կանխաւ երգեցին.
Ես լուռ եղէց, բաժեէ, գլխարդ եւ անկիր
    Եըրման խորհըրդին.
Դեռացիք նոր 'ի պատիւ մեծ կոչեցան
    Յանարիւն նուէր.
Հոգիք հրեղէնք սպասաւորեն 'ի սեղան
    Սոցին աւըրնթեր.
Ըղաւեղանով ուր գառն անմահ զենանի,
    Ով խորհուրդ ահեղ,
Հուր չէք եւ սուր, ծուխ անուշից գիգանի,
    Ով արեան հեղեղ.
Օծմամբ սըրբոյ իւղոյն 'ի ձեռս 'ի ճակատ,
    Սրբեցան շնորհօք.

Իջանէր ցօղ քաղցրածաւալ յորդառատ ,
Յօղ հողենորդ .
Քան 'ի մօրուացն Ահարոնի իւղն որ էջ
Զգեստուցն 'ի ստորոտ ,
Եւ 'ի Հերմոն 'ի գլուխ լերինըն ցօղէջ
Ծաղկալից 'ի խոտ ։
Ընդ ամէհուա պատմուճանին՝ սրբութեամբ
Աւել պըճնեալ ,
Ծուխ ղաղօթից ընդ անուշից խընկոց ամպ
Ի վեր ծաւալեալ ։
Ամբիծք սրբուխ յար հրեշտակաց և համդէսք
Մըրոն աներկեղ ,
Խորհըրդականք թագաւորին ծածկալէսք ,
Ի խորանն ահեղ ։
Անմահութեան նեկտար և ուղխ կենարար ,
Զոր արբին այսօր ,
Զմայլեալք նովաւ և զմայլեցին անըսպառ
Յուրախութիւն նոր ։
Շուրջ պար առեալ քահանայք սուրբք լուսերամ ,
Օծեալք խաղագլուխ ,
Ձիթենիք նոր տընկեալք յաւերժ անթառամ
Ի վտակ հոգեբուղխ ։
Մինչ բարկութիւն աստուածասաստ յարիցէ
Ի վանել զերկիր ,
Ի հաշտութիւն ածեալ՝ ըզսուրն 'ի բացէ
Դիցէ վրէժխընդիր .
Բազկատարածք 'ի սուրբ բեմին քաւութիւն
Ուղերձեն մարդկան ,
Բարձեալ 'ի յուս զամբաւ ուղխս ըղձմորդոյն ,
Ընդ նոցին փոխան .
Բարձողք մեղաց եղեալ զառինն 'ի տխպար
Նըմանք Յիսուսի ,
Լուծ ծանրաբեռն եղեալ նոցին դիւրատար
Խաչաբարձ ուսի ։

Իբրեւ ըզթեւս հաւուց ըզբեռն այն բարձին,
    Նա՛ իբր ըզթիթեռն,
Թեթեւ ածել թեւս ընդ կամարն արփային,
    Տըւեալ ձեռն 'ի ձեռն ։
Կամ որպէս կառք զի գնան թեթեւ եւ սաստիկ,
    Անուոցըն բեռամբ ·
Թագաւորին երկնից լինել կառաձիգ
    Ճեպընթաց ոտամբ ։
Մինչ 'ի յուս ընդ երկրորդաւս այս այժմիկ '
    Անդ լըծով մըտին ·
Բայց են միմեանց, սոքա անոյշք գեղեցիկք,
    Թեթեւիչ բեռին ։

---

## Ի ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

### ՆՈՒԱԳ

Որոտ եւ շանթ, հուր եւ մըրրիկ անդամնոր
Ազգագաթամբ Սինայ լերինըն պատեալ,
Ահարեկեր զըսքանչելեացն ակընկալ
Զազգն առ ոտամբ նորին կացեալ 'ի ծործոր ։
Յայժ աստ այլազգ հրաշիցն էր տիպ զոր տեսի ·
Զի մինչ ամբարձ ըզձեռն իւր նորս Ահարոն,
Շընորհք Հոգւոյն որպէս ցօղէջքն 'ի Հերմոն
Իջ ըզսըրբովքն, եւ ոչ 'ի շըխնդն այնպիսի ։
Զահագնակերպ փառացն իւրոց ըզհանդէս
Ծածկեալ 'ի սպառ արար աչաց աստ անտես,
Նա՛ ակներեւ ըզսէրն եւեթ եթող մեզ ։
Ասքանչելիք աստ գերահրաշք գործեցան ·
Աստ ամենայն ինչ կատարէր լըռելեայն ·
Ոչ ինչ տեսի, եւ գերագոյն հրաշքն էր այն ։

1 Քանզի առ աբեղայս ուղերձեալ է երգս, որք 'ի վերայ կրօնաւորական ուխտիցն յանձն առնուին եւ զպարտս քահանայութեան ։

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

### ՆՈՒԱԳ

Դու որ անձամբ կաս առընթեր խորհրդոյդ,
Ալացիր մտօք ՚ի վերնատուն անդըր մուտ,
Ուր ՚ի շըրջան աւուրց սերկեան յիմնեկլին,
Հոլանեցաւ քահանայից գունդ նախկին.
Մհեղագոյն անդ ՚ի պարզի գոռան օդք,
Ազգք և ազինք դիմեն ՚ի ձայնն հետաքօտք.
Լեզուք հրեղէնք փայլեալ վերոյ գագաթանց,
Ընդ էջ Հոգւոյն սասանի տունն ՚ի հիմանց.
Ուր ահագինքն առ ճուր նըշանքն այնոքիկ.
Սքօղեալ այսց եղեն նոքա պիտանիք.
Հոգի հրեղէն ՚ի սիւք համդարտ ՚ի յերկնէ
Զանձամբ իւրոյն առ ընտրելոց իջանէ.
Ի բաց կացէք, անհաւատից ջոկք, ՚ի բաց.
Զի հաւատոց սա երեւոյթ է այսց.

---

## Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

## ԱՆՏՈՆԵԱՆ ՀԱՐՑ ԼԻԲԱՆԱՆԵԱՆՑ

### ՆՈՒԱԳ

Ըստ մարմնաքնար դաւթեան երգոյն,
Յոյժ իմն ՚ի ձահ երգել այժմիկ.
Ըռնաւենոյ արդարքն համգոյն
փըթթին յաւերժ գեղածաղիկ.
Մայրեայն ՚ի տիպ Լիբանանու
Ի վարսագեղ պըճնեալ կողերց,
Հոլմից ՚ի մարտ գոն ձայնատու,
Ծփարեալ ՚ի յանձ ծայր երկնաբերձ.

Ի տէրունի տընկեալք 'ի տան
Էջմ̃ն որ նոյն տընկեաց յԵդեմ
Զծառ կենացն անմահական ։
Պատգամ յերկնից քեզ գուշակեմ.
Սայելեսցես ազգ արամեան
Յարգինս ընդ հուպ սոցին վըսեմ։

## Ի ԴԻՄԱՑ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁԻՆ

### ԵՐԳ

Լուծ, զոր եդեր ինձ 'ի յուս,
Է փոքրոգի եւ թեթեւ.
Ի քէն ուսայ, տէր Յիսուս,
Ուր որդ ըղձամ զայն ինեւ,
Եւ ամբարձեալ զլուխ 'ի վեր,
Ի հերկ կենացս արշաւեմ։
Զըմբոստ մարմինն եւ ըղխեռ
Սանձահարեալ 'ի ձախ ձեռն։
Որ պարանէն զիս անլոյծ
Ի ձիգ քոյդ հրամանի,
Թեպէտ եւ ծանր իցէ լուծ,
Թեթեւաբեռն եղանի.
Ո՛վ տէր Յիսուս, 'ի տան քում
Կեցից ըստրուկ եւ գերի.
Ոչ ըղձըղձայս իմ թողում
Ընդ տէրութեան բիւր երկրի.

## Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

### ԵՐԳ

Օ ընտրելովք երկքումբք
Շնորհիդ քո տէր շողեալ ճաճանչ,
Խաչակցաց քոց 'ի խումբ
Խառնեցան տիպք քո խնկաքանչ·
Ու ըղձիւ փայտակերտ
Պահակօրէն բարձեալ 'ի յուս,
Նայլ զանձնութ և զանշերտ
Օր յուս նոցա եղեր 'ի հլուս·
Բևեռօք խըր երրեակ
Ճառաստահեղոյս պընդեալ 'ի նմա
Ըզմեղացըն մուրհակ,
Կողոպտեցին ըզպատանս·
Նա մահուդ զուգակիր,
Յառնել 'ի տիպ քո գեղանի,
Յանթերի կերպագիր,
Լիցին մաղթեմ, տէր, արժանի·

---

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

### ՆՈՒԱԳ

Ծով է կենցաղս այս ալէկոծ,
Վայրք ընդ ալեօք թաղունք և հոծ,
Ընթիւք 'ի սմա մըրըրկաց յոյզ
Արանէն զհոգիս անդընդասոյզ·
Բանիք 'ի նոյն ընկճեալք 'ի վտանգ,
Նա յանձկալին եզր անժամանք,
Մի զանձն 'ի խորս անդր ալէտաստ
Մատնել յանդուգն՝ առնէն մեզ ազդ·

Դուք ընդ անբոյթ արդ ընդ շաւիղ
Կոչեալք յերկինս դէպ ուղիղ,
Ուր երկնաւորըն Նաւապետ
Հորդէ Յիսուս ձեզ արահետ.
Հա՛պա վտանգաւ այլոց ըզգօն,
Ըզհետ նորին դիմեցէք, ո՛ն,

---

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

### ՆՈՒԱԳ

Այո՛ աշխարհս նսեմաստուեր է բաւիղ,
Մոլորահետ աստի ու անտի բիւր շաւիղ.
Անձուկ ուղին, խախամ են թուփք բազմաձիղ,
Ընդ թիւրըն խառն և ճանապարհն է ուղիղ.
Յածեալք 'ի սմա և վարանեալ դուք այժմիկ,
Դրոշէք զուղղոյն ելս ո՛ ամէք երջանիկ.
Օ ի ստուերական լուսոյ մինչ զուշըդ խըցէք,
Ընստուերին ցայտեաց ճաճանչն աստղիկ.
Ձեզ կարապետ է ուղեցոյց ինքն Յիսուս,
Որ զանընթաց հորդէ ուղին խաչ 'ի յուս.
Ու մոլորիք, 'ի նա եղեալ քաջայոյս.
Օ՛ր ոսխին շուրթըն չըմթէ փաղաքուշ.
Քա՛ն զերկնընթաց ճանապարհին խուռն ինչ փուշ,
Է՛ բազմահոծ 'ի ստորաքարշն և խիտ յուժ.

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

### ՆՈՒԱԳ

Ծերանայ այս աշխարհ, նոյն և մնացանէ զերկրածինս համայն,
Եւ մայր խուժադուժ սիրասուն որդւոց զարմանի արեան.
Դժան ըղձատուանեայ' որդեկուլ աղխ զըժախորովայն,
Կլանէ համօրէն, և շատ ոչ առէ ընդ արուն միայն։
Ոչ թէ ըմբռնող արջառոց ըսպանդք և անթիւ խաշանց
Եանամն զատուածոյս անհամբոյր քաղքն յագածոյծ խրեանց,
Զ իջանի երբէք սիրողն ծարաւի մարդկայնոց արեանց.
Եւ ծիլ ոք երբէք առ սեղան սորին անմնացոյց մնաց։
Եւ ոչ սխալեմ, թէ ոչ մարդ կոչեմ որ մնաեալն 'ի կախ,
Եւ արխաբար վաղեաց զանհրաժեշտ այս Ճակատագրի.
Ընթառամ զարնիք գեր ըղՃակատուց հանուրց գլուցաղանց,
Խամբեալ թարշամին 'ի Ճակատ նորա առ պատկառանաց.
Չէն խակ համեմատ ընդ անզուգական նորին արութեան,
Ուր և գլուցաղունքն այն մնաեան 'ի սպանդ յայս անշուշտ սեղան։

---

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱՆՁՈՒՆՍ

### ԵՐԳ

Զուղէշ ընտանեակ
Ի քուն վայրենի
Ի նոր գարնայնի
Պատուաստէ մըշակ։
Ի լուսնին 'ի ցօղ
Կոճեղն առեալ ջով,
Ոստովք և պըտղով
Պըճնի յարփւոյն շող։

1 Սատուռնոս դիք ժամանակի, որ ըստ առասպելաց՝ առ աչի կորուսանելոյ զթագաւորութիւնն՝ կլանէր զորդիս իւր ընդ ծնանել նոցա։

Ընկերի ընդ օտար
Ըներս խուրոյ երկանց ,
Եւ զձեան սատաքանց
Օրհնէ զբարերար ·
Ի տիպ վերագոյն
Յաստուածատունկս աստ
Հայիմ'ի դարաստ
Ներգործեալ ըղնոյն ·
Օ՜ եղբարց երեցուն
Այսպէս դու զկանանց
Հատեր զոսա 'ի բաց
Ի՛ հնազանդութիւն ·
Եւ զաստուածայնոյն
Յեռեր 'ի հոգւոջ
Նոցին ըզբողբոջ ,
Մըշակ վէհագոյն ·
Բեւ խոկ նոքա արդ
Լինին պտղաբեր ,
Իբր առ գետեզեր
Ծառ տերեւազարդ ·
Հրաժարեալք յըղձից ,
Իղձք նոցա յաւէտ
Լինին փըրկաւէտ
Աստուածայնոյն կից ·
Չէն խոկ նոցա կամք ,
Թէ ոչ այն միակ ,
Յոր մըշտափափաք
Հրձուին սըրբոց բանք ·
Ապրանաւէտք աստ
Կեցեալ միշտ նովաւ ,
Նոյնք 'ի կեանս անզրաւ
Կեցցեն բարեբաստ ·

# ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ

## ԵՐԳ.

Դալարագեղ 'ի յարօտ
Ընդ բարեստուեր հովանեաւ
Ծառակաւոր տեսի հօտ.
Հեզաստահին առ եզեր
Գետոյն հովիւ բարեխնամ
Ըզտաւարեան արածէր:
Գառանց բոլորն երամակ,
Ընխառն 'ի սեաւ 'ի յուլից,
Փայլեալ 'ի գեղմն 'ի սպիտակ,
Հեզ և հլու առ 'ի լուր
Դիմէր դղրոյթ տայր ըղհետ
Ի սոյլ սրընգի հովուին խուր:
Ի տերունեանն 'ի մակաղ,
Ընքոյթ գայլոյն 'ի ժանեաց,
Ընծէր նա զխաշինն մատաղ,
Ըն 'ի սեղան անմահին
Ի հոտ անոյշ ձենձերել
Սուրբ ողջակէզ ըղնոսին:
Ո՛վ երջանիկ երամակ,
Հովանացին քեզ աստեղց
Բոյլք 'ի յերկնից պարունակ.
Պարարեցիս յերկնատառ
Դու զցայգ 'ի ցօղ, և զցերեակ
Ի յարփենւոյն ճառագայթ:
Մ՚ի զարտուղի 'ի հօտէդ,
Օցտեալ դըժնեայ արկածիւ,
Ընկցի 'նդ մոլար ոք ընդ հետ.

Այլ հովուապետն նորին Յիսուս
Զխուրն ՚ի ձեռումդ ընկլըսեմ
Տըպաւորեալ դրոշմ ՚ի յուս,
Ընդ խուրմն ընձեղ ծանիցէ
Ընդ ՚ի յաւուրն ՚ի յետնում
Խառն ընդ օղիսն ՚ի յաջմէ.

## Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ.

### ԵՐԳ.

Մանրերամ մանկտին
Զանձնիւր կերպարան
Քաջ ձեւացուցին
Յախորժ տեսարան.
Խաղ էր զոր լըւայ,
Այլ քաղցրիկ յուսոյն
Մեծ առհաւատչեայ
Թըւեցաւ ինձ նոյն.
Թողեալ հետ ընդ հետ
Ըզպատիրըդ դէմ,
Ի տաղաւարէդ
Ամբարձցին ՚ի բեմ.
Քարոզք հոգեշահք,
Որք ըզԹատրըն սուրբ
Լուսցեն որպէս ջահք
Աստուածային հուրբ.
Ա՛հ, թէ ես կեցից,
Տեսից զոր ցանկամ,
Աղաւնիս ամբիծ
Զազատուց երամ.
Այժմէն նըկատեմ
ԶԱրուսեակն ՚ի հող.

Մարգարէ թէ չեմ,
Թըռուեցայց թող մօգ.
Ճարտարքն ողբերգուք,
Պայցէ ժամանակ,
Զի զմեծ ես եղուկ
Երկցեն յեղանակ.
Ըզմեղուցելոյ
Երեւալ զանձամբ կերպ,
Եւ վէր 'ի վերոյ
Որպէս առ Թատերբ,
Եւ ընդ Յիսուսի
Ճըշմարիտ գոլ զոհ,
Տըռեալ խաչ յուսի
Ըզհետ նորա զրոհ.
Ահ, զիս յո՛ տարաւ
Խեռ ոգւոցըս խանդ.
Զայս ըղձից գըրաւ
Ընծայեմ յաւանդ.
Հայրապետ արհի,
Օրհնեա ըզմանկունս.
Մեր և աշխարհի
Մի մերժ յոյս սէն.

---

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ ԴԵՐԱՍԱՆ

### ՆՈՒԱԳ

Եյժմ 'ի Թատեր մինդ 'ի ռամիկ,
Ի Թագաւոր մեւորդ ծըպխա,
Կերպարանեալ 'ի ձեւ Ճըշգրիտ,
Ո՛ Սոփոկղի համբակք մաղըխէք.
Դուք և 'ի մեծ Թատր աշխարհի,
Յոր ոչ Սոփոկղ և ոչ Մուսայն,

Ուր տէր ըղձեղ կացցց գուսան ,
Թէ տայք ճարտար և հաւատի
  Ոմն ըղմեծին Անտոնի գեղերգ ,
Թէպէտ և ոչ լերանց 'ի ծերպ ,
Ուր 'ի յայլոց բազմագումար
  Աստերոց միումին գոլ տիպար ,
Զեզ երկնաւորն հանդիսադիր
Ընծցէ 'ի գլուխ պսակ ընտիր ։

---

## Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ

## ՈՂԲԵՐԳՈՒ ՄԱՀՈՒՆ ՏԱՒՈՒՂԻ

### ՏԱՂ

  Նուաղ են տաք սարդենեաց ,
Նուաղ վարդից պերճ ոլոք ,
Նաւ ձիւնափայլ շուշանաց ։
  Նուաղ և բոյք են ծաղկանց
Ի զարդ քերթող գագաթան
Մատաղ մերոց հագներգուաց ։
  Յանկարծ մարմանդ ծաղկաքեր
Պըսակ նոցին ճակատուց
Բոյս աստեղաց վերբերեր ։
  Թատերական 'ի հանդէս
Ցուցին 'ի տես և 'ի լուր ,
Իբր 'ի գեղբուեան դաշտորէս ,
  Զանխառունակ ըղվախճան
Ըստուեր կըցորդ անմեկին
Աստուածանմար պերճութեան ։
  Սաղաթարշամ գիտէի
Ըզգեղ փափուկ ծիրանւոյ
Իբր ըղծաղկունս 'ի դաշտի ,

Ուր ազահէն 'ի վերուստ
Ամպք շայեկան բանալ ծոց
Եւ ընծային տալ զապրուստ ։
Իբր ըզփըրփուր անկայուն ,
Զոր խըստաշունչ հիւսիսի
Խառնէ յալիս ըլթագոյն ,
Եւ իբր ըզկայծ վաղանցուկ
Եւ ըզբիւրեղ բեկանուտ
Վարկանէի ես ըզշուք ·
Հանգիտարագ ըստուերաց
Գնէի զայն , և արծուոյն
Օդահերձիկ թըռչանաց ,
Եւ շուտափոյթ կայծականց՝
Որ բարկաճայթ 'ի յերկնէ
Թափին 'ի գլուխըս լերանց ։
Այլ պայուքիկ 'ի սերկեան
Տիպարք աղօտք ինձ թըւին ,
Չեն չեն սըմին զուգական ,
Զոր մեր քերթողք ութեքին
Կենդանակերպ և ճըշգրիտ
Գծել յանդիման մեզ ածին ։
Պըսակադիրն հագներգուաց[1]
Մի օտար ինչ բուսուցէ
Պըսակ սոցին գաղաթանց ·
Յիւր նըշուլիցն ակեթել
Այնըր փոխան հիւսեսցէ
Երկարաձիգ կենաց թել ։

1 Փէբն , որ և Ապողոն հայր քերթողաց ։

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ ԴԵՐԱՍԱՆ

### ԵՐԳ

Օ՜ ինչ ցանկալի և զինչ մեծ
Վա՛ն 'ի յուշիմ մանկութեան,
Յոր յոյս նախնեացըն կայ յեց,
Հանդերձ փառք գոլ նըկուն:
Յօգնապըտակն ողբերգու՝
Որ ընդ համբակն իւր սոխ
Ըզչարեցաւ նախանձու,
Լոյծ վրիժագործ արծուոյն զոխ:
Յոյժ զայնպիսւոյն եպերեմ
Մ՛ըտածութիւն վայրահակ.
Ինձ հայք յիմաստըս վըսեմ
Եղէն Մ՛եսրոպ և Սահակ.
Որոց 'ի դէմըս ժըպիտ
Փայլատակէր աննախանձ,
Եւ հըրձուէին խընդամիտ
Յաղթահարեալք 'ի մանկանց,
՝Նոքա յերկնից 'ի վերուստ
Այժմ ակնարկեն քաղցրախորժ,
Յերկոյն իւրեանց անկորուստ
Խայր 'ի Հանդըրին պահեալ խորշ.
Մ՛ինչ զԵւրիպիդ և զԵսքիլ
Հայաբարբառ 'ի թատեր,
Եւ սոփոկղեան նոր տաւիղ
Իջէ 'ի նուագ մանկանն մեր:
Օ՜ որ ձեզ կարգամ երանի,
Թէ երկոքումբք խոկ յանկարծ

1 Ծանօթ իսկ են մեզ Եսքիւղեայ, զի յընդունել համբաւին Սոփոկլի զմրցանակ քերթութեան՝ տրտմեալ նորա առ նախանձու, մեկնեցաւ յԱթենայ: Եւ 'ի ննջել նորա ուրեք 'ի գաւառի, մի յարծուեաց համարեալ ժայռ ինչ զգլուխ նորա ճաղատ, արկ անդր 'ի բարձանց զորս իւր զկրիայ առ 'ի խորտակել, և եբեկ զգլուխ նորա:

Լճիկք ողկք արժանի
Իմաստասէր և սուրբ հարց ,
Ոյց 'ի յերկինս եղեալ դէմ,
Զիմաստութիւն և ըղձրոն
Լըծակցեցին 'ի ձա՜հ ձեմ.
Կմնօղք նոցին լերուք , ո՛ն ,
Չըքնաղք դոքին երկուորեակք ,
Գ.եր քան Պեգասք օդապար ,
Թռուսցեն ըղձեղ վերելեակ
Ի յերկնայնոցն կամար ․

---

Ի ԹԱՏԵՐԱԿԱՆ

## ՆԿԱՐԱԳԻՐ ՄԱՀՈՒՆ ՊՈՂԻԿՏԵՍԱՑ ՎԿԱՅԻ

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ ՈՂԲԵՐԳՈՒ

### ԵՐԳ

Ո՜յսպէս սիրոյն Յիսուսի
Սպառազինեալ մարդ ոլկար ,
Ընդդէմ մահու խրախուսի .
Ո՛րդ խելամուտ եմ, ծանեայ
Զի ես անուամբ եմ լսկոլ
Նա ոչ արդեամբք քրիստոնեայ .
Ո՛հ, ես ընդէ՞ր կեամ, աւա՜ղ,
Եթէ յիս ոչ առկայծէ
Ճաճանչ բոցոյն այն չքնաղ .
Քա՛ն ըղսխրան այն չիք ինչ վեհ ,
Յորում լուցեալ ճարակի
Ընծախականն այն հըրդեհ .
Ոչ ըղձա սաստ անհամբոյր
Նա ոչ ողբք և թախանձ
Զօրէն ձըգել 'ի հրապոյր .

Չեմ ես, ես չեմ քրիստոնեայ,
Հուրն այն սիրոյն Քրիստոսի
Յոյժ է յինէն 'ի բացեայ,
  Որով վառեալ Պողիկտէ,
Մարմին տըկար հողեղէն
Գտաւ հրանիւթ քերոբէ.
  Նա քան ըզմահ գեր 'ի վեր,
Եւ զՀըզօրն իսկ քան ըզմահ
Ըզհիմնեանն ընկճեաց սէր.
  Տանթընկեցիկ 'ի գընդէն[1]
Ի զօրս յերկնից վերասեալ,
Խաչիւ վառեալ կենաղէն.
  Կոխեալ ըզփառս երկրաւոր,
Եւ փոխանակ ծիրանւոյ
Ներկեալ յարեանն 'ի բոսոր,
  Դիմէր առիւծ ամեհի,
Զջեանէր ըզզիցըն բագին,
Նրբեան խորում ծարաւի.
  Անուշահոտ ողջակէզ
Ի սուրբ սեղան անմահին
Մատչէր անմեղ գառն և հեզ.
  Արք իմ ցօղէն արտասուս.
Յերուն երկինք, տեսանէ
Համգիտազիր ըզՅիսուս.
  Եւ սրախողխող կատարի,
Պըսակաւոր վերձեմեալ
Քաջ նահատակն և արի.
  Ըզքո, Փեղիքս[2], ո՞ յանկարծ
Ըզմեծաստատ բարկութիւն
Զիջոյց 'ի գութ և 'ի դարձ.

1 [illegible] կոչէր գունդն արքունի, յորում զինուորեալն Պողիկտոս:
2 Փեղիքս իշխան Մելիտինեայ քաղաքի փոքուն Հայոց, աներ Պողիկտոսի, որոյ 'ի մահ մատնեալ նախ զՊողիկտոս վասն 'ի Քրիստոս հաւատոյն, և ապա ինքն ես դարձեալ 'ի քրիստոնէութիւն:

Այսպէս 'ի քէն խնդրէ վրէժ
Բողոք արեան վըկային,
Տալով դահճիդ կեանս յաւէժ.
Իսկ դու ընդէ՞ր, Պաւլինէ[1]
Ողբաս ըղձախոտ սիրելւոյդ.
Քո՛յդ մանաւանդ լալի է.
Նա ինքն յերկնից 'ի բարձանց,
Նա 'Նէարքոս'[2] զոր տեսեր,
Լուցին 'ի քեզ սուրբ նախանձ.
Ցայտեալ արիւն նորա զքեւ,
Սրբեաց յաչաց քոց ըղձիդ
Ի լոյս պայծառ քան զարեւ.
Ո՜հ, յիրաւի ըղձիրտ ձեր
Նշերականըն տեսիլ
Խանդաղատեալ գեղմնէր,
Ուր ոչ զօրեաց անխըլիրտ
Կալ յուրուագիծ պատկերին
Հանդիսատես բամիս սիրտ.

---

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ

## Ի ՀԱՆԴԷՍ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ

### ԵՐԳ

Որ 'ի Խոռնի միայնացեալ, դառն 'ի կոծ
Ըզմնիկ աշխարհըդ լայիր,
Ինձ, Մուսա, դու հայր քերթողացըն Հայոց,
Ջըրպիրհ երգոյս ներեսջիր.
Շարժեաց զհոգիս 'ի քէն քընարդ որ հարաւ,
Լալ ինձ զիմ ազգ և ըզտուն.

1 Պօղինէ դուստր Փեղիքսի, կին Պօղիկտեայ, որոյ յողնաթախանձ հրապուրանօք ջա-նացեալ դարձուցանել 'ի քրիստոնէութենէ զայր իւր, և ապա ինքն ևս դառնայ 'ի հաւատս.
2 Նէարքոս բարեկամ Պօղիկտեայ, որ դարձուցն զնա 'ի քրիստոնէութիւն, և յետ վը-կայութեան նորա, և ամփոփելոյ զաւրբ նշխարս նորա, վկայեաց և ինքն.

Ալեւոր ողբամ զորս 'ի նոցունց ընտրանս
    Ալին Մուսայք և առնուն,
Խնամատութեան սիրոյս անեղծ պսակին
    Եւ անթառամ հանճարոյ.
Առեցի զփուշ, սիրտ իմ հարաւ ընդ ծաղկին,
    Թշփոյն 'ի տխպ վարդենւոյ.
Սիրողք սոքա և սիրելիք խնամոյց,
    Ի թևս նոցա թռուչին յեց.
Մերթ ընդ ոլորտս երկրի յածեալք, մերթ յերկնից
    Վերաբերեալք կամար մեծ.
Կամ զաստեղաց հետազօտել ըզշրջան,
    Կամ թէ զերկրի՝ զոր կոխեն.
Կամ ընդ օտար երկնաւ որ ինչ գոյանան
    Մերձք և հեռիք յարևելն.
Ո՜վ երջանիկ խնամատութեան սիրելին.
    Նոցին յերկիր անմարդի
Ապարանք մերձ կան բարեկամք անմեկին,
    Բաղցր 'ի սփոփումն սրտի.
Մանուկ տիովք նոցին մատաղ 'ի ծնօտի
    Ալեք ծաղկեն ծերունւոյ.
Դու ո՞չ գիտես, ծերութիւն ոչ սահմանի
    Հոծեալ ամացն 'ի թըւոյ.
Խորև 'ի վէմ նըստեալ ծորոյն 'ի Մոլփեր,
    Աղքատութիւն թէ ածէ
Նոցին բարւոյն թըշնամի, կայ անլեհեր
    Նա 'ի բախտին արկածէ.
Ո՜վ մեծատուն խնամատարն, եթէ գոյ
    Հարըստութիւն մահացու.
Ովէ ինչք թէ փառք, բախտին է այն և ոչ քոյ.
    Խնամատութիւն ոչ կապտի.

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՄԱՆԿՏԻՆ

### ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ընթա երկնաձեմ
Ախրաստուն մանկտի,
Ի վեր եղեալ դէմ
Ի Նպատակն արհի.
Ուր գեղանըրանէհ
Փառաց ասպարէզ
Նու մրցանակ վեհ
Պատրաստեալ կայ ձեզ։
Մ՚եսրոպ և Սահակ
Ձեզ ընդ ժիրաժիր
Որդւոցըն դասակ
Կան հանդիսադիր։
Յերկեակ յեցք 'ի թևս
Յիմաստ և 'ի կրօն,
Ամբարձիք թեթևս
Անդր 'ի բրաբիոն։
Հայրն աստուածամերձ
Առընթեր կայ ձեզ
Իւրայովքն հանդերձ
Հանդիսիւդ 'ի տես։
Հայաստան ազին
Դուք յոյս ապառնի,
Հրեշտակըն Նորին
Ըղձեօք սաւառնի։
Ոչ աստեղըք եթեր
Այնպէս գեղանի,
Որպէս կըղզեակ մեր
Ձեօք գեղազարդի։

Ու այնպէս ծաղկունք
Գիշերն ըզգարաստ.
Ու ըզծառատունկ
Օդային երաստ.
Ու ոսկուզազարդ
Նայգի փայլելուչ,
Եւ ոչ մայր թէ զուարթ
Մանկանց թաթաւուչ,
Իբր ՚ի ձեզ հըրճուի
Որպէս ձեօք ցընծայ
Փոքրիկս այս կըղզի
Տուն Մխիթարայ.
Ի տխրահրաւէր
Ուշ նըպատակիդ
Նժամանն ՚ի վեր
Մի մնասցէ և միդ.
Կեցջիք յամայր ամն
Ուշիմ մանկըտեակ
Բարձրելոյն ՚ի խնամ,
Եւ բարեաւ մընայք.

---

## ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ

### ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ

Մխիթարայ ընտիրք մեծին դուք Թոռնեայք,
Ողջամբ կեցջիք, ողջ և բարեաւ դուք մնայք.
Ո՜հ, դառն է ինձ հրաժարականս այս ողջոյն,
Եւ դառնագոյն սէր փոխադարձ գործէ զնոյն.
Ընցլին լուսինք երկեակ հանգոյն փայլական,
Որպէս երազք, իբր ըզքըթթել մի ական.

Տիեզերաց ինձ ակն, ուր գնամ տարագէմ,
Թուի աքսոր, թէպէտ և վէհ և վսեմ։
Անշերերգանկ ուրեմն հարից ես ըղձալ.
Մ՛ի դու, այլ զուարթ հար ինձ Մ՛ուսա մատն 'ի քնար.
Թէպէտ մեկնիմ, թէպէտ և գնամ տարագիր,
Րերկլիմ 'ի ձեզ ցընծամ դասակ ժիրաժիր.
Զի զձեօք երկինք հովանացեալ 'ի բարձանց,
Սրբոց գրոհիւ յօրինէ զարդ գեղապանձ։
Ո՛հ, զի՛ բարի և զի՛ բնակէք վայելուչ,
Հարազատաց 'ի տիպ եղբարց համաշունչ.
Ի՛բր ընդ մորուս Ահարոնի 'ի ստորոտ
Իւղն 'ի գլխոյն իջեալ բուրէ քաղցրահոտ.
Եւ երկնառատն 'ի Հերմոնէ քանիոն
Ցօղէ չըքնաղ ձեզ ցօղ 'ի լեառն 'ի Սիոն.
Ի ձեզ երկինք պատրաստեցին զօրհնութիւն,
Եւ զհամազգեաց 'ի ձեզ ըզկեանըս միայուն։
Ի տէրունեան թէ զձեզ հայիմ 'ի տաճար,
Թուի զուարթնոց ինձ տեսանել անդ ըզպար.
Ձեօք սրբազանքն որմունք փայլեն գերազարդ,
Որան յատեղաց կամար երկնից խորանարդ։
Մերթ մըրցակիցս ըզձեզ 'ի վէհս 'ի նըսեմ,
Իմաստակերս իբր յաթենեանն Ակադեմ,
Իմանալեօք ծաղկեալս ալեօք տեսանեմ,
Եւ մերթ դըժնեայ հետոտըս 'ի գիր և 'ի բեմ։
Ի վաստականն հասպս դիմեմ 'ի վարժոց.
Եւ անդ բազմեալս ընդ թարգմանչացըն սըրբոց
Հայիմ ըզձեզ ընդ խորենեան ծերունւոյն,
Եւ ժիրաժիր ընդ աշակերտս նորուն։
Ի հայկազնեանըն վերաձեմեալ 'ի Պառնաս,
Ընդ Մուսայիցն ըզձեզ դիտեմ անդ ընդ դաս.
Ու 'ի փեբեան պըսակաւորս 'ի դափնեակ,
Այլ անթառամ ածեալ 'ի գլուխ ձեր պըսակ։
Ձեզ երանի Հանդըրէն կարդան շուրջ ալիք.
Ծափեն տատովք լուրեանց ըզձեօք սարդենիք.

Լերինք և բլուրք շուրջ 'ի բացէ եւգամանամբ ,
Ընդոյն 'ի հայ բարբառ կրկնեն արձագանգ ' :
 Նակ Սերովբէ էջ 'ի յերկնից դու առ իս ,
Որ երբ անոյշ մատուցանես խնկենիս
Ըզգերային մաղթանս յաթոռ անմահին .
Մատո և գիրձ իմ գայտոսիկ դու նըմին .
Կեցցէ դասակն այն կեցցէ յամն 'ի յամնյը ,
Նաև բազմորդին կեցցէ 'նդ նոսին նոցին հայր :

---

## Ի ԶՈՒ ՍԻՐԵԼԻՈՑ ԲԱՐԵԿԱՄԻՆ

### ԵՐԳ

 Նորթիցես բարեաւ ,
Բարեկամ ազնիւ .
Որոշիմք տեղեաւ ,
Բայց ոչ և սրտիւ :
 Ընկերաւք ընդ քո էկ
Ի սիրտ բազմատենչ ,
Երդ կամք սրտաբեկ
Ընդ մեկնելդ 'ի մէնջ :
 Քան զաճուական
Սիրտ բարեկամի
Չիք ինչ պատուական
Չիք ինչ սիրելի :
 Դու ոչ դաւճնաբեայ
Սիրոյ ինչ նուէր
Մեզ առհաւատչեայ
Սրտի քո թողեր .
 Բայց քան ըղհամայն
Պարգևացըդ ձիր

1 Քանզի մեծ յուգաննեան լերինս 'ի Պատաւխոն էր վարժարան ազգիս :

Յոյժ է պատուական
Սիրտ քո սիրալիր.
Սիրոյ սէր փոխան
Որդ սիրտ անմոռաց
Մաղթէ քեզ երկայն
Ուշուրս կենաց.

---

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՐԻՆ ՁՈՒ

### ԵՐԳ

Ի ջրոցոյ լուսայարփ
Թփթեան 'ի թիւ,
Պարբերի սիրատարփ
Ի զմահուն հիւ.
Մեկնի մերթ հեռանայ
Իբր ընդ զուեշտ.
Ոյր անդրէն ձրգէ ըղձա
Սէր անհրաժեշտ.
Դու այժմիկ, ո՛ Սոպեա,
Մեկնիս 'ի մէնջ.
Ուր դարձցիս հետ ընդ հետ
Երգոցդ 'ի տենչ.
Նու հրպեալ թէ այլ
Թփթեան 'ի քոց,
Երգդ կենցաղ երկարի
Հուպ առ քոյոց.

ՑՈՒՂԵԽՈՐՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԻՆ ՈՐԲՈՑ

# ԳԵՐԱՐԳՈՅ Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐ

## Ի ՀՆԴԻԿՍ

### ԵՐԳ

Դուք ծովածուփ նաւազին
Աստեղք անքուն պահապանք ,
Զսա ողջամբ 'ի տեղին
Դուք հասուցէք անվըտանգ .
Եւ մի զովաւ բըռնացին
Ալիք անգութք հիւրասպանք ։
Արգոյ նաւացըն , Տիւփէ ,
Զքեզ հըմուտ ղեկավար ,
Զքեզ ժողովս այս մաղթէ ,
Կացցես նաւուն դու 'ի լար ,
Զմըրըրկացն 'ի բացէ
Անել խըստից ըզգուշար ։
Զսա մինչեւ 'ի Գանգէս ,
Աշխարհածով ընդ ալիս ,
Եւ 'ի նահանգս 'ի հըրակէզ
Ափեան՝ յաղթող թէ դարձցիս ,
Օ քեզ երգեցից դարձեալ ես ,
Երդուեալ 'ի քնար տաւիղիս ։

Ի ԴԱՐՁ ՆՈՐԻՆ

# ԲԱԶՄԵՐԱԽՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ

## Ի ՀՆԴԿԱՑ

### ԵՐԳ

Տըխրականիդ առընթեր
Կալով չըւոյդ ծովածուփ,
Ողջամբ դարձիդ այժմ ընդէր
Ոչ գըտանիմ այդր 'ի հուպ [1].
Թէ զքեզ շըրթամբք ողջունել
Ոչ ներէ ինձ բախտ դըժխեմ,
Չիք ինչ մատինս իմ արգել
Որով զողջոյնս այս գըրոշմեմ.
Հասեր ողջամբ 'ի Սեհէժ
Ի հայրենին քո կըղզեակ,
Ընտանական քեզ ուղէշ
Ի գըրկս ածեալ մըրցանակ.
Այնմ որ այտի 'ի Պանդէս,
Եւ հիւրամերժ 'ի յախանցն
Այրէն դարձեալ ած ըզքեզ
Փառօքդ այդուիկ գերապանծ,
Ուխր գոհութեանս ընծայեմ
Նըմին որըստի բոլորով,
Որչափ աստեղք երկնաձեմ
Որքան ալիք են 'ի ծով.
Զուարթուն էից բանակ լուրջ,
Որ պահապանք երկնաւաք
Զերկնըղածովք պարեն շուրջ,
Տեսի զլաստիդ առեալ բակ.

1 Քանզի քերթողս էր յայնժամ 'ի Հռոմ, ուստի և զերգս զայս գրէ.

Տեսի զաստեղս 'ի վերուստ
Պփռեալ յուղղեակ քոյին հաշտ,
Ընկձեալ զալեաց ոլորտուստ,
Պործեալ կապոյտ ընդ քեւ դաշտ.
Զեւր և զԱլոտոս ընդ Զեփիւռ
Համբոյրս 'ի դաշն 'ի յանքակ,
Զառագաստիւքդ համասփիւռ
Տեսի շընչեալ աջողակ.
Ա՜հ, զի վրտանգ չիք ուրեք
Այց տեղ է ինքն ապաւէն,
Զի խըրատեղծ համայն էք
Ի նոցանէ պատկառեն.
Այլ զինչ կարեմ յօրինել
Քեզ արժանի զըրուատս,
Արում յերկնից բաժնին եղ
Գործի չըքնաղ գոլ իրիս.
Դու Հայկազանց բարձրութիւն,
Շուք և պարծանք կարգիս մեր.
Հայր անտէրունչ մանկըտւոյն,
Բարեաւ եկիր և ողջ լեր.
Լորդէն գուէն, Լուլեցի,
Հուք մանկըտւոյն բազմերամ.
Ընկոյն 'ի քնար տանաղի
Քեզ երգեսցեն յամայր ամ.
Իսկ որ ընդ քեզ ուղեկից[1]
Լու անծանօթք Մուսայիս,
Զաղնըւական ամոլից
Ի ըռեսցէ աստ տամաղիս.
Որ մայրօրէն մին 'ի հող
Խնամքըն ըզքեզ առոյնին,
Միւան ըզնըժդեհդ և զանոք
Որպէս հրեշտակըն քոյին.

1 Այրինքն էն Պարոն Աբրահամ Աղանուրեան, և ամկին նորա Մանկի դուստր Պարոն Սամուէլի Մուրատեան կանդնողի զվարժարանն.

Թէպէտ չիցեմ մարգարէ ,
Սակայն պատգամ Ճըշմարիտ
Ասցի 'ի սիրտ իմ յերկնէ .
Մի 'նդ այն լիցի որ երկմիտ ։
Արշիւ բարւոյն փոխադարձ
Ա՛ռ 'ի յորդոցն 'ի Նըրպատտ ,
Յորդիս իւրեանց տացի վարձ
Ծնեալ նոցա բարեբաստ ։
Մանրանըկար մուսին
Յըղեմ զխնդիս քեզ սըրտի ,
Կադմեայն[1] 'ի գլուտ գերըզզօն
Նըկարեալ զխղձս 'ի քարտի ։
Ա՛յլ Ճըշմարտին արդարեւ
Յոյժ ընդ աղօտ է սա տիպ ,
Որչափ փոքրիկ քան զարեւ
Մահկանացուիս ական բիբ ։
Նըրդուայ 'ի քնար տաւնաղիս[2]
Զի զգարձ քոյին երգեցից .
Զերծ յերդմանէս կացո զիս ,
Չար է դըրժել Մուսայից ։

## ԱՌ ՆՈՅՆ ԻՆՔՆ

### ՆՈՒԱԳ

Բխորդն զոր հեղեր որբոց 'ի Նըրպատտ ,
Հորդեալ նոցա առհ 'ի կրօն և յիմաստ ,
Որպէս ցօղ անկեալ 'ի բերրի դաշտատ ,
Բուսուցէ արդիւնս ընդ հուպ բարեբաստ ։
Արդէն խղձք նոցա հոլանացեալ քեզ ,
Ընդ ոսկեհական ալիս բարձրադէզ ,

1 Կադմոս նախկին 'ի փիւնիկեայ 'ի յունաստան եբեր զդպրութիւն ։
2 Ակնարկէ 'ի նախորդ տաղն ։

Եւ ընդ արփենւոյն նահանգ բոցակէզ
Հատեր անվրանգ զերկայն ասպարէզ։
Այժմ 'ի ցանկալի գալստեան քոյին,
Քեզ կենդանութիւն 'ի սիրտ խընդագին,
Ուխտ Մխիթարայ մաղթէ առանձին.
Այլ գայցեն աւուրք, զի տօղայք բազմերամ
Մաղթեսցեն քեզ կեալ յաստիս յամերամ,
Ընդ պսակ 'ի գլուխ տանել անթառամ։

---

# Ի ՎԵՐԱԴԱՐՁ ԲԱՐԵԿԱՄԻՆ

## ՆՈՒԱԳ

Ի Դիւցընկէց բարձու լերինն 'ի ստորոտ,
Ուր կաստաղեանըն կարկաջէ վըտակ սուրբ,
Ընկողմանեալ մինչ նընջէի ես յարօտ,
Ոստք վարսագեղ փարեալ զինեւ կախ ըղձուրբ,
Յիմ Պողիմնէ կացեալ Մուսայն առընթեր,
Այն որ տաղից 'ի յերգս արար զիս հըմուտ,
Տօն քերթողաց, ասէ, 'ի լեառն է 'ի վեր,
Արի 'ի քնարս յաւել նոցին զերգ ըղձոյդ։
Ընդոստ 'ի քնոյ մինչ 'ի վերելըն փութամ,
Յերգոյն ընտիր լեալ 'ի խորհուրդըս տարտամ,
Ընծեալ 'ի յուշ զերգս որ 'ի քեզդ է փարթամ,
Օ՜ն վարանիս, յաւել Մուսայն, տարապարտ.
Երգեա զթըռչնոյն դու զշարժ առ ծերն ալեզարդ,
Եւ յաղթական ածցիս 'ի գլուխ ըզսաղարթ.

1 Կաստաղեան լեառն և աղբիւր 'ի Բէովտիա մերձ 'ի Պառնաս լեառն, նուիրական Ապողոնի և Մուսայից։
2 Պողիմնէ մայր առաջերգութեան, մի յինուց Մուսայիցն։

Ի ԳԱՂՈՒՍՏ ՏԻԿՆՈՋ

# ՓՈԽԱՆՈՐԴԻ ԿԱՅՍԵՐՆ

## ՆՈՒԱԳ

Բախտն որ ըզքեզ յերկրդանեան 'ի յափանց,
Որ Փայետոն՝ ըզհայրենին վարեալ սանձ
Անկաւ 'ի սոր, անտի գլխտորեալդ 'ի բիւրուց
Ածեալ երեր և վեհագինն հարմնացոյց,
Նոյն բախտ աջովն թեւածեալ բարեբաստ,
Շարժեաց ըզքո սիրտ դըշխոյից և բեր աստ.
Ուր ոչ ինչ քուրմդ է տեսութեան արժանի,
Բայց սիրտ. և այն յոյժ ընդ աղօտ տեսանի։
Եթէ յանկարծ սա ոչ անտես էր ական,
Չէր իսկ կարօտ առնուլ ըզտողքըս թարգման։
Փառք զոր 'ի ձեռն ոտինդ եստուր մեզ պարգեւ,
Անպուրծ յուշոյ կացցեն պարծանք մշտատեւ.
Որում շնորհի մաղթեմք փոխան քեզ հիւսել
Պարկայըն՝ քերց Նարօտ անձայր ոսկեթել։

1 Փայէթոն որդի արեգական կամելով զհայրենի կառսն վարել, անկաւ յԷրիդանոս կամ 'ի Պադոս գետ։

2 Պարկայք Երեբոսի և Գիշերոյ դստերք համարք 'ի յէն. զթելս կենաց մարդկան մանեն ըստ առասպելին։



ՅԱՍՏՈՒԱԾԱՊՍԱԿ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

## ՓԵՐՏԻՆԱՆՏՈՍԻ Ա. ԿԱՅՍԵՐ

ՅԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՆ Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՆՈՒԱԳ

*Ոչ որպէս զօր մարտիկ որ յաղ 'ի կռով*
*Ի զմահատուղ շաւիղ ըղձհետ իւր թողլով,*
*Ընդ թըշնամեացն փլուզեալ պատնէշ և ճամբար*
*Փող առաջի իւր մըտանէ գերեվար ·*
*Ո՛չ որպէս Հայր 'ի սեամբս մեր մըտանես ,*
*Սիրոյ գըրքնաց կապանս ածեալ նորս ընդ Քեզ ·*
*Այլ ոչ Քեզ փոյթ լեալ ընդ սուսերդ յաղթական ,*
*Պարծիս 'ի խաչդ 'ի քում փայլեալ զագաթան ·*
*Փերտինանդէ , չէք 'ի յափունս սոտ ծաղիկ ,*
*Որ ոչ յոտին քում փըթթեսցի գեղեցիկ ,*
*'Նախանձ արկեալ հանուրց ընդ բաղդ կըղզեկիս ·*
*Իմէ՛ , Դու յոյր սիրտ ոչ ըղձիւք ընդդըրկիս ,*
*Ուր և ընդ ցուրտ ծածկեալ վիճակս աստանօր*
*Յընծան ակերք Մըխիթարայ Քեւ այսօր ·*

---

ՅԱՍՏՈՒԱԾԱՊՍԱԿ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

## ՄԱՐԻԱՄՈՒ ԱՆՆԱՅԻ ԿԱՐՈԼԻՆԱՅ ԴՇԽՈՅԻ

ՅԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՆ Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՆՈՒԱԳ

*Հեզիկ շրնչելով աջողակ հողմոյն ,*
*Հասցէ պերճ նաւակն այսր 'ի մեր ափունս ,*
*Ուր զխորոց ծովուն հերձեալ մըկանունս ,*
*Դայ առ մեզ հըզօր Գերմանիկ Դըշխոյն ·*

Արփւոյ համամփիւռ ըղձալի ճաճանչ,
Յորք չքնաղագեղ ոգւոյն բարեպաշտ.
Պճնէին համօրէն զարեւմուտ եւ զաշտ
Ի զարդարագեղ ծաղկիւ ՚ի կանաչ։
Եւ, Տիկին Մ. Եհայն, և զուարթերես
Ըզժըպիտ քոյին փայլեցո ՚ի մեզ,
Եւ հըրճուանս ՚ի սիրտ համայնից ազգես.
Եւ օրակըշիռ ցոլման արեգակն
Ի Հանդըրին ափունս դարձցի լուսածագ,
Կեցցէ երջանիկ աւուրս յիշատակ։

---

## Ի ՎԵՐԱԴԱՐՁ

# ԴԱՐԱՄԵԱՆ ԱՍՊԵՏԻՆ

### ՆՈՒԱԳ

Ճաճանչագեղ ակն արեւուն
Ի դրախտ չքնաղ ծագեալ այգուն,
Փարատէ զմութ եւ զտըխրութիւն,
Փըթթին ծաղկունք անդ գունագոյն։
Ի զարմազարդ նորին շըրջան,
Յաջորդեալ ցայգ ըղձեա տուընջեան,
Կանխէ միշտակն ՚ի յերկ ժըրաջան,
Դէտակն ՚ի լոյս նորին ծագման։
Այսպէս քո դարձդ, Աղեքսանդրէ,
Մըխիթարեանս յոյս ՚ի դրախտէ
Ըզմութ տըխուր ՚ի բաց մերժէ.
Եւ ՚ի յաւէտն քում գեղապանծ
Փըթթին յաւէտ քան զծաղկանց
Բոյսք համձարոյ տաս գերազանց։

## Ի ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌ ՄԷԾՈՖԱՆԹ

### ՆՈՒԱԳ

Կեցցէ Մ՚էծոֆանթ, կեցցէ յամն յամնը,
Կրօնից և վարժից պարծանք գերածայր.
Իւ աթենականն խակ ոչ պերճանայր
Վարժոց դըպրութեանց և քաղաքանայր:
Ընդ քառից ծագաց ազգս այլաբարբառ
Գեր ըզՄ՚իհըրդատ արշաւէ 'ի ճառ.
Վըսեմ հանճարով, այլ սըրտիւ խոնարհ,
Տէրունեան խըրատուն տիպ գերապայծառ:
Հոգին, որ երբեմն 'ի սուրբ վերնատան
Յառաքելոց դասն իջեալ հողմանձայն,
Նա նոցա լեզուս խօսել զանազան,
Նոյն ըզմեծ հրաշիցըն զօր անդ եցոյց,
Ոչ աղօտ ինչ աստ տայ մեզ տարացոյց
Ի զարմանահրաշ այրս աստուածուսոյց:

---

## ՄԱՄՈՒԼ ՆՈՐԱԿԵՐՏ ԱՌ ԲԱՐԵՐԱՐՆ

### ՆՈՒԱԳ

Դարձիր հայեաց յիս ո՛ Ասպետ,
Թէպէտ և համր իցեմ պըլուէտ,
Այլ հարկէ սիրտ երախտագէտ,
Ընդ աչըս քո բարբառել գէթ.
Ի չնախնին իմ ինձ դըժպատեհ
Լըքեալ 'ի բաց զանձուկն ըզգեհ[1],
Ուր իբր 'ի բանտ կէի նըժդեհ,
Քեւ արդ բնակեմ աստ 'ի տուն վեհ:

1 Այսինքն զհին տպարանն անձուկ:

Եւ սփիւռքն, ով վեհագոյնդ,
Յորժամ լինել անձն սերունդ,
Դիւրընկեցից 'ի քո անունդ.
Յորժամ պատուարքս իցեն անխուլ.
Հրաշակերտսլս յինէն անդուլ,
Որ երթեւեկ մարդկանըն հոյլ.

---

ՑԱԽԱՐՏ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՄԵԾԻ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ

ԱՌ ԽՐԿԱՍԻՐՈՂ ՆՈՐԻՆ Վ. Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ

### ՏԱՂ

Երախտապարտ գոհութիւն
Շարժէ ըղձիւք իմ 'ի յերգ,
Ի հայրենին ոգել զերկ
Բազմավաստակ ծերունոյն.
Որ ինձ քընար տամնաղի,
Մուսայդ անմահ էջ առ իս,
Օժանդակել քերթողիս
Ի ներդաշնակ չափ տաղի.
Քան ըղձից որդւոց հարկ
Չէք քաղցրագոյն ինձ 'ի վարձ
Ընծելաւէր երկոց հարց,
Զըքնաղ 'ի բնէ հաստեալ կարգ.
Իսկ զինչ քան զայն վարձ վըսեմ,
Եթէ բարւոյն օրինակ
Կըրթէ 'ի նոյն 'ի վաստակ
Զորդիսն ըղձեա հօրն 'ի ձեռն.
Մի առ գործոն մեղուին պար,
Մի եւս երթար դու ով վառ,

Կամ 'ի մրջեան բոյնն 'ի խորաստ,
Ուր մթերէ ըղձամբար.
Բոյլըր մատիր 'ի յորդոր,
Եւ 'ի սրտից դրոշմեա զայս
Զոր ծերունին տայ քեզ դաս
Բանականից ճաճաւոր.
Ա՜հ ես սրտիւ բոլորով
Մատչիմ ձեռինն 'ի համբոյր,
Որ 'ի հրխտակ որդւոյն իւր
Թող զայսպիսի գանձուց բով.
Ճոխացելումս 'ի բարբառ,
Իւ վեհ 'ի հոյլս կենդանեաց
Փոքր ինչ խոնարհ արարած
Բան ըղձերնոցն եմ կաճառ,
Սա վարժապետ ինձ ներկուռ,
Զ իմանալի կիրս հոգւոյս
Մարզէ իւրեւ տալ 'ի լոյս,
Բերեալ 'ի քարտ բարբառ լուռ.
Եւ զոր երգեմքս նուագ,
Սրտից նորին է պարգեւ,
Թէ սա ըղձեռ իմ զարեւ
Տեսցէ յանկէտ պարունակ.
Յանկարծ զիմել նայապէս
Յետնոցըս գոյր կարելի,
Որպէս մեծի Հօրն[1] ըղձնի՝
Նա ինքն եհատ ասպարէզ.
Որ 'ի սկըսեալն 'ի նմանէ
Մեծափարթամն 'ի սփիւռ
Յարեալ գանձուց ըզմըրթեր,
Զայն մեզ կըրկին աւանդէ.
Անկապտելի փառք մամլոյն.
Եւ ցոլչափ սա ճռընչէ

1 Մեծի Հօրն, այսինքն Մխիթարայ աբբայի, որ զառաջին բառագիրսն ած 'ի լոյս.

Պահել զհաստեալն 'ի գըրչէ ,
Մի մոռասցի իւր անուն ։
  Մագաղաթեայց ընդ փողն
Խառնեալ ըզցօղըս քըրտանն ,
Առ մեզ 'ի մի եւ մատեան
Ըզծածկեալ գանձս 'ի նոսին .
  Իբր յանգեղեայ սատափէ
Գեղանըշոյլ մարգարիտ
Յեռեալ 'ի շար խիտ ընդ խիտ ,
Մանեակ չքնաղ յօրինէ ։
  Ի գետափանց Տիբերի ,
Ուր է դըրախտին տիպ հանգոյն ,
Քառավըտակ արդ գետոյն
Յեզըր նըւագս իմ բերի ։
  Բարբառք , յոր նախ Եդեմայ
Այերքըն սուրբք հընչեցին ,
Մի եւս երբէք կորընչին ,
Անշարժ 'ի սմա առեալ կայ ։
  Բիւր օրհնութիւնըս կարգամ
Աշխատ 'ի սմա եղելոց ,
Հօրն ընդ նըմին եւ որդւոց
Մաղթեալ ըզկեանս յամերամ ։
  Բամբէ , ես զի՞նչ տեսանեմ .
Մովսէս եւ զհետ իւր Յեսու
Ընդ ընտրելոյն իւր դասու
Ընծայեն Թատր աստ վըսեմ ։
  Ոչ մին լերինն անդր 'ի ծագ
Արեալ կանուխ ըզվախճան ,
Լինի 'ի կէտն անժաման ,
Միւսն անդր հասեալ միայնակ .
  Այլ ինքն իւրովքն համօրէն
Տարժանաւոր յուղւոյն վերջ ,
Ի յաղթանակ պըճնեալ պերճ ,
Առ հասարակ ժամանեն ։

Երկնեալ 'ի սէրս 'ի սրտէ,
Ընթա անկեղծ իմ նուագ,
Հաս դու արծուոյ համգունակ
Ուր որ սա զքեզ ուղերձէ.
Երկայնաւորըս մաղթեա,
Երգեալ զբաժակն որ ընկալ
Յերկնահանգէս ակումբի
Խնդակցելոյն ընդ նմա.

## ՅԱՐԴԱՐՆ ԴԱՍՏԱՓԵՏԵԱԼ

### ՏԱՂ

Ո՛վ արտասուաց անմեղութեան արժանի,
Ըզքեզ ողբամ, սիրտ իմ 'ի քեզ գերանի.
Դու ընդ երկնաւ հեծես միշտ,
Երբէք դու ոչ կեաս անվիշտ.
Քեզ մախաւէտ աշխարհ լարէ միշտ թակարդ,
Քեզ խորխորատ պեղէ անդուլ անհանգարտ.
Ո՛հ միշտ բարւոյն փոխարէն
Ոյս կրշուեցի 'ի բախտէն.
Դու 'ի նախնում հովուէն, անմեղ գառն և հեզ,
Եղբայրադաւ ձեռին մատեալ ողջակէզ.
Ի քեզ մահուն նախ ժանիք
Լոյծ ըզմեղաց դատակնիք.
Մերեցելոյ հօրն 'ի վաճառ անմեղին
Գերի գնացեր նըժդեհակից ընդ նըմին.
Նըմին 'ի խորն յայն 'ի գուբ
Եւ 'ի բանտին եղեր հուպ.
Ընդ Յիսուսի դու բըռնամահ 'ի խաչին,
Ունկըշաւար կափուցեր զաչըս քոյին.
Ո՛հ, մինչ ոչ դու և ցարդ
Դատափետես տարապարտ.

Նաւ զաշացու է, այլ անմիտ է նախանձ,
Նաւաջարկեալ ըղձիցն 'ի յեզը անթափանց,
Ընտանել կարծէ՝ այլ փառաց
Յօրինել քեզ յաւելուած ։
Նանից փայլման է ձոյլ ոսկւոյն Ալփերայ,
Թէ ոչ ուռանց զոփէն բոմբիւնք 'ի վերայ ․
Նաւ 'ի հարուած չարատանջ,
Արփուէ նշոյլ և ձմանց ։
Թէ ըղձնայցի աշխարհ ըզքեւ առ սուղ ինչ,
Ո՛ի կարծեցէ ածեալ ստուերած քեզ անջինջ ․
Փարատեսցի այն ընդ փոյթ,
Դարձցիս անդրէն յերեւոյթ ։
Նայպէս զերկնիւք տիրէ վայրկեան մառախուղ ․
Նրփիական շողիցն ապա յորդ ցընցուղ
Թափի յերկիր անարգել,
Ծառոց ծաղկանց 'ի պըտկել ։
Ն պահպանակ տըկար, և դիւր բեկանի
Նաւար լանջացըն ծանրաբեռն հողանի ․
Դու թէ զմարդոյ ծածկես կուրծ,
Զերծ 'ի չարեաց է համուրց ։
Ո՛վ երջանիկ սիրտ, ում դու կաս ասընթեր ․
Ընտասպարտից մինչ ծըփին սիրտք 'ի յերեր,
Խաղաղութիւն անդ անլոյծ
Ճնմի ընդ քեզ միալուծ ։

## Ի ՄԱՀ ԱՐԴԱՐՈՅ

### ՏԱՂ

Ա՛նխացող է մահ. և ո՛ ՚ի մարդիկ
Զոր ժամանեաց նորին ոչ անկաւ ոտնձիկ.
Իշխերխոհնեայ կեցուն մահաճուլթ ՚
Ընդունելին հանգէտ պալատն և խըրճիթ.
Ո՛հ, ՚ի մահկաձև գերանդի անգութ
Զուգակիր բախտիւ անկանին ՚ի կութ
Կարմրազեղ կակաչ, բարձրաւլիզ ծաղկունք,
Եւ լուրթ մանուշակ, և բուսակք ցածունք.
Ի վիհ աննըշոյլ նուաստից և մեծաց
Անխըտիր հոսեն ոսկերք մարմնաքանց.
Սակայն արդարոյ և անդ ՚ի մահուն
Կացցէ կենդանի հոգին վեհազուն.
Զէ մահ ձեռընհաս ըզնա ընդ մարմնին
Փակել ՚ի յանձուկ խորխորատ շիրմին.
Զոյգ ընդ նըշուլից օրանշիւ արփւոյն
Ընդ ծագս աշխարհի ձեռմի անկայուն,
Յորժամ Ովկեան փըրփրադէզ ալեօք
Ըզտիեզերաց փարի զերեսօք,
Ձմեռայնոյ ձեանց յաջորդեն մըթերք,
Եւ յորժամ զետեղ պահին տիեզերք,
Անկորուստ ՚ի սպառ կեցցէ ՚ի յերկրի
Յիշատակ նորա համուրց պաշտելի.
Ոչ աշխարհ նըմին պարագրեալ սահման,
Այլ անանց յաստեղս է նըմա կայեան.
Ընդ ոտիւք նորա խոնարհի անդ մահ,
Կըշխարաց նորին ճիշդ աւանդապահ.
Եւ զանեղծ մարմին տուժի տոկոսիս,
Ընդ եղծանելույն՝ զոր կապտեաց յաստիս.

1 ԼՆՒՈՒԹՆ գիք մուկլոյ.

Զօր խիզախ մահ, սպառնալիք Թափուր.
Ոչ տըւաւ նըմա տիրել ընդ հանուր.
Յաստեղատունս անդ մահու գերազանց
Կեցցեն յաւէրժ հոգիք սըրբոց վեհազանց.

---

## ԽՐԱԽՈՅՍ Ի ՄԱՀ

Չիք ինչ վըսեմ, չիք ինչ կայուն ըստացուած,
Որում չիցեն կից հոգք ծանունց վըտանգաց.
Որ ոչ սոցին կամի լինել գլխագրաւ,
Մ՝ի յուսասցի արկանել ձեռն ըղձողաւ.
Մահկանացուդ, արդ զի է քեզ վըհատել,
Թէ յերկնընթաց ուղւոջ զկայլ քեզ արգել.
Ընթա ըզհետ, կառուցեալ զակն ամրապէս
Ի կարապետն՝ որ ճանապարհ հորդէ քեզ.
Տես զակաղձուն բեռամբք զանձուց զեղելն,
Զի ոչ դառնայ նա 'ի ծովեզր հայրենեն,
Մինչեւ անցեալ ընդ արհաւիրս ծովուն,
Եւ ընդ վըտանգ նենգող տարերն անկայուն.
Եթէ 'ի կեանս յայս պատահեր քեզ յանկարծ
Ըզփոխարէնսըն տեսանել և ըզվարձ,
Որ ինչ յաղթօղք դըժընդակացն աստ 'ի մարտ,
Քաջամնեալ անդր 'ի հայրենիս ունին արդ,
Ըզփոխարէնս անձառ և զվարձ այնուցիկ,
Որք վերացեալ գեր քան զամպըրոպս և մըրրիկ,
Լուսաշաւիղ ճեմին յաստեղս անդ յաւէտ,
Թողեալ հանգոյն աստեղանիշ յերկրի հետ,
Քեզ երկնաչու ուղւոյդ յայնժամ խոչ և խութ
Գործէր սանդուղք առ 'ի վերելս անդր անքոյթ.
Եւ ըզտատասկ 'ի ճեմ ոտինդ և ըզփուշ,
Համարէիր գալարագեղ դաշտ անուշ.
Արիաբար անց ախոյեանդ 'ի հանդէս,
Սուղ կենցաղոյս է և հակիրճ ասպարէզ.

Եւ յեղակարծ 'ի նըպատակ անդր հասեալ,
Մարթի առնուլ քեզ ըղձըլեալն ակընկալ.
Մահուն ըղձանօն աստուածախնամ տեսչութիւն
Որպէս 'ի քնար կըրթէ ճարտար 'ի բախիւն.
Եւ 'ի շարժել անդ խառն 'ի խուլըն մատին,
Քաղցր յօրինէ նըւագ 'ի քնար տասնաղին.
Մերթ յաւերն և մերթ յառոյգն 'ի հատակ
փոփոխելով զձայն արկանէ ներդաշնակ.
Թըւի աչաց խառն և անկարգ տեսիլն այն,
Բայց ըզգըլխակ ուղղէ կարծիս ունկն 'ի ձայն.
Ոտին յանկարծ գայ հասանէ, լեր դու կազմ.
Հըսկողութեամբ անազգն 'ի բաց վանի ռազմ.
Կեանք 'ի բարեաց չափին, և ոչ 'ի յաւուրց.
Նախին աւուրք որպէս 'ի հուր յարդից խուրձ.
Ընկլամնելի քեզ 'ի բոցոյ կառս տուն,
Մի փայտակերտ խոտ կամ եղէգն երերուն.
Զիւրաքանչիւր ասէ ուրուք գիրն ըզգործ,
Զխարդ և է, մատուցէ զայն հուրն 'ի փորձ.
Նահապետաց քեզ կեանս հանդոյն ըղձանամ,
Կեալ ամենայն յաջողութեամբ յանդր առ.
Բայց 'ի կատարծ միշտ հանդերձեալ վախճանին,
Երանեաշէր որոց 'ի Տէր նընջեցին.

## ՄԱՐԴՈՅ ՈՐՊԷՍ ԽՈՏՈՅ ԵՆ ԱԻՈՒՐՔ ԻՒՐ

Յերկիր, ով մարդ, ուստի ծընար,
Դարձցիս ընդ հող 'ի քոյին մայր.
Զի ոչ ինչ քեզ քան ըզբուսակ
Երկարատեւ տըւաւ հասակ.
Սաղարթազեղ գեղածաղիկ
փըթթեալ 'ի հովին քաղցրասիւք,
Քան ըզբողբոջ դու գեղանի
Պըճնիս տեսցդ 'ի գարնայնի.

Սակայն ծաղկունքդ խակ և գարուն
Էն վաղանցիկք և անկայուն.
Հասեալ ամառըն բոցակէզ,
Բուռնեալ հրատիպ ախտիցդ 'ի քեզ,
Խամրէ զնոսին խորշակահար,
Եւ երբ ըզգօս թողու զքեզ ծառ,
Ճարակ բոցոյ արմատախիլ
Կոճեղդ ստուերքն իւր ժղանիլ.
Մ՚ի 'ի հասակդ իցես վըստահ,
Նըրագ ոտամբ հասանէ մահ.
Ո՛հ, որ մեռան ինձ որ վըրձին
Պատկանաւոր երբէք գըոցին
Նա 'ի զկենաց քոյին պատկեր
Ճըշգըրտատիպ նըկարագրել.
Նկանակիտ սողեալ վըտակ
Ընդ խինձ ընդ մարգ ընդ անտառակ,
Փարի 'նդ ծաղկունըս բազմաբիւր
Սիրայորդոր յար 'ի համբոյր.
Նայլ հուպ ընդ հուպ դարձեալ ողջոյն
Հրաժարական տըւեալ նոցուն,
Դիմէ 'ի մայր իւր ծովակէժ,
Լըռել 'ի ծոց նորին յաւերժ.
Զըրնաղ կենաց քոց առաւօտ
Ծաղկի արագ 'ի յանդ ազօտ.
Եւ միջօրեայն պայծառութիւն
Նուաղեալ անյոյս 'ի յերեկուն,
Մահուն ապա նըսեմատուեր
Փոխանակէ նըմին գիշեր.
Ոչ ծիծաղի ընդ մարգ ծաղիկ,
Եւ ոչ 'ի ծով կոծին ալիք,
Ոչ քաղցրաձայնք շընչէ զեփիւռ,
Եւ ոչ թըռչնիկ պարէ 'ի թիւռ,
Թէ ոչ կենաց քոց 'ի պատկեր,
Եւ քեզ 'ի գոյժ մահահրաւէր.

Ուր ու՞ նոքին արկցեն քեզ ահ ,
Թէ միշտ 'ի յուշ կալցիս ըզմահ .
Կենաց ներկուռ դաստիարակ
Լիցի նոքին քեզ յիշատակ ,
Նա մեռանել՝ փոխումն եւեթ
Կենաց 'ի կեանս երանաւէտ .
Մա՛հ զոր 'ի յանձն էառ Յիսուս ,
Քեզ յարութեան աւետէ՛ յոյս .
Ձեն արդարեւ չեն նինջ կեղծիք ,
Վերածնանի անդրէն փիւնիկ .
Մե՛ռիր ապա մեռիր վըստահ ,
Դու յարիցես 'ի կեանս անմահ .

---

## ԱՌ ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Ուր . հանգոյն
Ըսոյգ հասակ
Եւ գարնայնոյն
Ո՛ պատանեակ .
Ուր նա ծնանի
Վերակենցաղ
Ըմի ամի
Պերճ եւ չքնաղ .
Իսկ փախըստեայ
Քոյդ մանկութիւն
Ոչ եւս դառնայ
Ի տիս 'ի նոյն .

# ԱՄՔ ՔՈ ՈՉ ԱՆՑԱՆԵՆ

Կեցի զբազում ձմեռունս ,
Տեսի յաճախ ըզգարնունս
Զանդ և զծառոց մերկութիւն
Ծածկեալ յեղեամն և 'ի ձիւն .
Այլ հաս ամառն ընդ արփին ,
Լոյծ զամրութիւն ըզսառին ,
Եւ 'ի զեփիւռ քաղցրաշունչ
Հընչեալ հաւուցն ընդ մըրմունջ ,
Զգեցան անդըրէն ծառ և արտ
Ի դալարի ու 'ի սաղարթ ,
Մ`ըրցեալ գարունն ընդ աշուն ,
Մ`ին ձոխ 'ի միրգ միւսն 'ի գոյն ,
՝Նազէին յաջ և յահեակ
Ամարայնոյն արբանեակք .
Դարձեալ 'ի նոյն հասեալ կէտ
Արեւուն կառք ժամանդէտ ,
Շըրջեաց զերկիր վայր 'ի վեր ,
Եւ զտօթ 'ի ցուրտ բըքաբեր .
Այսպէս 'ի ցայգ շըրջեալ տիւ ,
Բազմահոլով իբր անիւ ,
Ամք անդադար մըղեն զամ ,
Աւուրք զաւուրս , ժամ ըզժամ .
Եւ 'ի յանձնիւրն 'ի րոպէ
Սաստկագոյն յունկն իմ թոպէ
Թըմբուկ մահուն , և սեաւ փող
Գուժէ ըզդարձն իմ 'ի հող .
Ո՛հ , անցանէ ամենայն ,
Եւ ընդ նոսին ես համայն ,
Թէ ոչ յանուոյն միջակէտ
Կեցից անշարժ և անմէտ .
Ի սկըզբանէ այս , տէր ,
Զհիմունս երկրի հաստեցեր .

Եւ գործք ձեռաց են քոյոց
Երկինք արփիքն իւր ընդ բոց.
Սակայն նոքա համօրէն
Սահին գընան անցանեն.
Բայց դու նոյն իսկ ես յաւէտ
Մինչեւ 'ի դարս 'ի յանկէտ.
Ի կատարածս ամենայն
Տեսի զվերջինդ իմ վախճան,
Եւ ինձ անդորր ապաստան
Ի գքոյդ անձեւ պատուիրան.

---

## ԵՒ ԴՈՒՔ ԵՂԵՐՈՒՔ ՊԱՏՐԱՍՏՔ

Ա՛նց ըզքեւ հերուն,
Ա՛նցցէ եւ այս ամ.
Սուր անդադրուն
Կայ քեզ թերաքամ.
Եւ ոչ զօրըն վաղ
Ի քում ձեռին
Թող չարայաւաղ
Ոսկըն քոյին.
Հա՛պա խրատ քեզ տամ,
Յապայն անվրտահ՝
Գող յամենայն ժամ
Պատրաստ առ 'ի մահ.

## ՄԱՇԵՑԵՐ ՈՐԴՒՍ ՍԱՐԴԻՈՍՏԱՑՆ ՁԱՆՁՆ ՆՈՐԱ

Մ՛ինչ փարատէր այգ զուարթ
Ի զգիշերոյ մութ տըրտում,
Իջի 'ի դրախտ ծաղկազարդ
Կըթել յակինթ և քըրքում։
Շուրջ ծառաստան պըտղաւէտ,
Նուռն որթենի և խընձոր,
Ոստովքն յերկիր հակամէտ,
Պըղնին 'ի միրգ ցօղաւոր։
Հընչէին նոճիք քաղցր 'ի յերգ,
Ըրծակի ժիր մեղուաց պար·
Յառնէին մըշակք յուրեանց երկ,
Օդեան մըրջիւնք տողաբար։
Յանկարծ յառեալ բիբ 'ի վեր,
Տատանեալ մեղմ 'ի զեփիւռ
Տեսանեմ սարդ ընդ այեր,
Ի բազմուղի յոստոյն իւր։
Խընձորենւոյն 'ի ճիւղս անդ
Յեց նըրբաթելն իւր առէչ,
Ճօճէր երկայն մեհեանդ
Մ՛արգըրտայեռ 'ի ցօղէջ։
Ի սկըզբնածագ շող արփւոյն
Փայլեալ գործածն հիաքանչ,
Ծփածանին երփն 'ի գոյն
Արփուէր ըզցոլ և ճաճանչ։
Ի բեհեզեայն իւր չըքնաղ
Ինքն 'ի բաւղին միջակէտ,
Յանդորրաւէտն 'ի կենցաղ
Կայր ամփացեալ որսոյն դէտ։
Շէղ 'ի ձեռին գիրգ մանկիկ,
Որպէս և միշտն էր սովոր,
Ընդըր ոստայր գայր մընջիկ
Գողանալ նուռն և խընձոր։

Եւ մինչ 'ի յաջ և յահեակ
Չըգէր ձնապուկ գլուխըն շէրտ ,
Դխպեալ 'ի նուրբն 'ի մահակ
Եղծաւ սարդին դաստակերտ ։
Եղո՛ւկ նըմին և աւա՛ղ . . .
Բայց 'ի նմանէ ուսիր դու ,
Մ՚ի յանկայունդ 'ի կենցաղ
Յուսալ ո՛վ մարդ մահացու ։
Եւ դու յառոյգդ 'ի հասակ
Մ՚ի վըստահիր ո՛վ մանուկ ·
Դոյզն ախտ հիւծէ զայն արագ ·
Կալ քեզ խրատիչ ըզմանուկ ։

---

## ՈՒՆԻՄՔ ՄԵՔ ՀԱՅՐ ԶԱԲՐԱՀԱՄ

Բնձնիւր վաստակք են անկապուտ ,
Ոչ որ յայլոցըն կողոպուտ .
Դու զի պանծաս 'ի քո նախնիդ ,
Ոստ չոր , 'ի բուն քո պըտղախիտ ։
Որպէս ըղջահ նախնեաց համբաւ
Նըշաւակէ զորդւոց պարսաւ .
Թէ փառք նախնեացդ էին աղօտ ,
Նըւազ յայտնէր քոյին ամօթ ։
Յաչնայնոյն զալ կողով 'ի յոյս ,
Ի կուլծս այգեաց , մըրգաց 'ի յոյզ ,
Մ՚այրեաց վայրի անպըտղաբեր
Ողջէջք ամուլք են անեպեր .
Իսկ դու 'ի բուն բազմապըտուղ
Սաղարթախիտ արուզդ ընձիւղ ,
Մ՚եհեկանին 'ի սուր հօսոց ,
Բըշտեալ 'ի բաց արկցիս 'ի բոց ։
Բնդ բազմածուփ կենացդ ընդ ծով
Բա 'ի նուել քեզ ապահով ,

Օ՜ ինչ քեզ նախնեացդ իցէ օգուտ
Նաւուղղութիւն բազմահմուտ .
Ձըմեռան հասեալ մըրըրկայցդ
Արացէ զքեզ անդընդասոյզ .
Որոտընդոստ ամպրայնոյն
Նըսեմատուեր ամպոյն հանգոյն
Յորժամ հընչեալ փողն ահագին ,
Օ՜ օդէ զցամաք ոսկերոտին ,
Օ՜ ինչ օգտիցիս ունել յայնժամ
Հայր՝ յոր պարծիլըն՝ զԱբրահամ .
Թէ ոչ 'ի քոյդ պըղծնիս վաստակս ,
Ի հարսանեացն անկցիս արտաքս .

---

# Ի ՎԱՂԱՄԵՌԻԿՆ ԷՄՄԱ ԱՂԱՆՈՒՐ

## ԱՌ ԾՆՕՂՍ ՆՈՐԱ

### ՆՈՒԷՐ

Յորժամ զուարթունըն պահապան
Առեալ զԷմմայ զհոգին անբիծ
Յեօթնաստեղեայն ած 'ի խորան ,
Յերանաւէտ 'ի ցընծութիւն
Օրիորդիկըն խորասոյզ
Լուսափայլեալ 'ի տիպ արփւոյն ,
Ի սիրելիս իւր 'ի յերկիր
Անդուստ 'ի Հայր իւր և 'ի Մայր
Դարձոյց զաչկունսըն կարեկիր .
Եւ ընդ նախկին մըրմունջս ընդ իւր ,
Աղիողորմ և սըրտառուչ
Օ՜ այս առ Յիսուս աղերս հեղոյր .
Ով որ ընաւինդ ես սէր և գութ ,
Եւ յարտասուաց զիս 'ի հովտէ
Ածեր առ քեզ այսր 'ի յանքոյթ ,

Հայեաց 'ի ծնօղս իմ, որ զինեւ
Խանդաղատեալ դառն 'ի մորմոք
Հեծեն ընդ մահ իմ'ի սորեւ.
Մ՛ին առ քոյին հնազանդ 'ի սէր
Ընտանակցին 'ի տխուր նախնոյ'
Մ՛ատոյց յօժար զիս քեզ 'ի նուէր.
Մ՛իւմ ըզքոյս յանձին ընդ Մ՛օր'
Բ՛երեալ ըզտխուր որ առ խաչին,
Արցունս զոհին եկաց յորդոր.
Որպէս ալիք ալեաց ըզհետ
Մ՛ըղէն զկրեարս ընդ Ովկէան,
Վ՛իշտք ըզնոսա կոծեն համգէտ.
Խնայեա մաղթեմ 'ի նոսա արդ,
Ընցցեն մըրրիկք 'ի նոցանէ,
Դարձցի անդորր անդրէն զըւարթ, —
Ճ՛ուրջ պար առեալ 'ի հրեղինաց,
Փ՛րկեա 'ի դէմս իւր Տէրն յանժամ,
Զ՛այս առ զըստրիկն Լ՛ամեա ասաց.
Լ՛իցի այդպէս. և ընդ եթեր
Երփին առ իս դու ծիածան
Կացցես քոյոց աւետաբեր.

---

## ԱՌ ՆԿԱՐԻՉՆ

### ՈՐ ԶԿԵՆԴԱՆԱԳԻՐ ՆՈՐԻՆ ՕՐԻՈՐԴԻ

### ՅԵՏ ՎԱԽՃԱՆԻ ՆՈՐԱ ԿԵՐՊԱՐԱՆԷՐ

Նկարիչ ճարտար,
Ո՛ւ քնձ ըզքոյին
Ի ձեռս ըզվրձին,
Տալ զԼ՛ամեայն տխուր.

1 Քանզի անուն Հօր օրիորդին կոչի Աբրահամ.
2 Իսկ անուն Մօր նորա կոչի Մարիամ.

Զրընապագեղին
Թէպէտեւ չիցես
Դու ականատես
Լեալ գխմբից նորին,
Մի՛ ինչ երկմըտիր.
Ըզնորայն այսպէս
Լիցի դրոշմել քեզ
Ըզկենդանագիր.
Ո՛չ մըտօք քոյին
Ընդ կամարս երկնից,
Այլ ՚ի Սրովբէից
Նըկարեա ըզմին.
Տիպ յար եւ նըման
Ըզվաղամեռիկ
Զուարթնոյն այնորիկ
Ներգէ պատկերն այն.

---

Ի ՀԱՐՍԱՆԻՍ ՎՍԵՄԱԶԱՐՄ ԻՇԽԱՆԻ

## *ՄԻՀՐԱՆԱՅ ԶԻԼԷՊԻՈՅ ՏԻՒԶԵԱՆ*

### ԸՆԴ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՕՐԻՈՐԴԻ ՄԱՐԻԱՄՈՒ ԵԱՂԼԸՔՃԵԱՆ

ԵՐԳ

Մ՛ուսայդ, որ առ եզերբ Արասխայ կաս ծանրաթախիծ,
Մ՛ըշտայոյշ հարուածոյն՝ որ ըզգրոհիդ կործանեաց բախտ,
Այլ ՚ի սուգ զազգատոհմըն պանծալի նըստոյց ՚ի սեաւ,
Ըզքընար քոյին տըխուր հանի ըզկողերց կախեալ ուռեաց
Ա՛ռ ինձ օ՛ն, և ՚ի զուարթ լարեա անդրէն զայն ՚ի նըւագ,
Ի բաց խոժոռադէմն անտի հերքեալ արտաքսեալ մահ,
Այլ կեանք աւասիկ գայ մըտանէ գեղեցկաճեմ.
Խոր ՚ի մոռացօնս վիշտք տաժելոցն անկցին ամաց,

Ներփնատեալ 'ի ծոց մըռայլ ամպոց ծագէ արդ ծիածան:
՚Նուէր բարեբաստիկ քեզ, ով Տիւզեանըդ պայազատ,
Քեզ և քոյոց որդւոցդ ահա ածէ չըքնաղագեղ.
Պարագայց բախտի տոհմիդ կարգ մեծ ըսկիզբն առնու անդրէն,
Երկաթին առեալ դադար՝ նորոգի դարն ոսկեղինիկ:
Գահ հարստանեկան վառէ հրեշտակին տաքանաղեան,
Խորհուրդ կատարի մեծ երկնաւորին տիպ հարստանեաց.
Ընդ այն ամենազօր ձըգեալ 'ի սեաւն իւր գեղեցիկ,
Թեւածեն երամովըն զիւրեւ մանկունք աղաւնակերպ.
Ըստ հոյլս խուռներամ որդւոց 'ի նոյն նըմանութիւն
Հօրն աստուածընտիր 'ի ծննդեան ծոցոյդ գըգուանս
Եւ ազգին փառաց 'ի յոյս ածցէ ըղձքեւ թեւապարել:
Ո՛ գահոյք ողբունականք քեզ յեղեւնեաց Լիբանանու,
Ի սիւնս արծաթիս կանք ոսկի յեց հովանաւոր,
Ընդ բազմոց քեզ գերունակ կազմեալ 'ի սիրտ սիրեցելոյդ,
Հանգիստ անդորրաւէտ և պետութիւն միահեծան:
Հազարք ըղձըմանէ ընդդէմ նեռից կախեալ վահանք
Ըջեղըն ցանկալի պատըսպարեն ամրածածուկ.
Եւ դու կնիք 'ի սիրտ նորին և մատանի դիցիս յաջում:
Հըսկայն եթերածնեալ, ըստ մարմնաքնար հոգերգողին,
Յընծայից որպէս փեսայ յառագաստէ խըրմէ ելեալ,
Ո՛ ալուադ տիկնոջն երկնից համդիպակաց ընծայէ փայլ,
Քան զոր քեւդ 'ի քոյում ցոլայ հարսին գեղանըշոյլ:
Ո՛ ալուադ 'ի հրաշակերտ գործած ձեռինն արարչական
Սիրատարփ 'ի համբոյր ըմպէ փըչունն աստուածաշունչ,
Չըքնաղդ իւր ամոլք զուգեալք նորին 'ի հրամանէ
Ընմեկինք ոչ ինչ ընդհատ, ոչ ինչ ընդհատ սիրակըցորդք:
Ո՛ որփէական լարք ընդ խըեարըս դաշնակիցք,
Եւ ոչ երկնակամառ արփից շըրջանք նըւագաւորք,
՚Ներդաշնակ քան ըղձերդ յօրինեսցեն յարմարութիւն:
Մ՛ահաղէին, որ 'ի հեռ և 'ի գըժիտ պարարի, հէն
Խնայեսցէ 'ի յանլոյծ սիրոյդ հանգոյց արկանել սայր.
՚Նարօտ գեղեցկահիւս խառն ընդ խըեարս յարաձըգեալ,
Օթեանս եւեթ ձեզ լիցի յերկրէ փոխել յեթեր:

## ԵՐԳ Ի ԳԱՐՈՒՆ

Մըրփին ոսկեփայլ
Ըզձըմեռն 'ի բաց
Հալածէ դարձեալ.
Եւ 'ի գարնայնն
Պըճնէ 'ի ճաճանչ
Լուսազգեաց զերկին,
Բուք և սառն և ձիւն
Տեղի տան 'ի բաց
Յաղթեալք 'ի յարփւոյն.
Եւ ողկուզաբեր
Գընդակն 'ի յայգւոջ
Ուռնու արեգջեր,
Հովիտ և արօտ
Փայլեալք յերփն 'ի նոր,
Բուրեն քաղցրահոտ.
Բուրումն համատփիւռ
Սփռէ ընդ երկիր
Քաղցրաշունչ զեփիւռ,
Հընչեն եղկ այերք
Քաղցրաձայն հաւուց
Ներդաշնակ 'ի յերգ.
Համայն ուրեք ծառք,
Եւ համայն ուրեք
Նըւագեն անտառք.
Խայտայ ընդ արօտ
Սըրաբեր խաշին
Բազմերամ շուրջ հօտ.
Շաղակրատ ծիծառն
Կախի կաւակերտ
Ըզկողերց որրան.

Ըստ ըղկարմրորակ
Մանկութեն մրգասէր
Ժողովէ գեղակ ·
Ընդ գլուրն համգունակ
Օրիորդ ցածուն
Քաղէ զմանիշակ ,
Ո՜հ , քանի չքնաղ
Նշանակս ինձ այս
Պատրաստէ կենցաղ ·
Ո՜հ , զի գեղեցիկ
Նու զի սիրելի
Ինձ ամն է այժմիկ ,
Յերկնայնոյ դրախտին
Ըզտիպ գեղանի
Արկատեմ'ի սմին ·
Ուր մրշտաճաճանչ
Փայլէ գերագոյ
Սրփին խնկաբանչ ·
Ուր գեղածիծաղ
Ծաղկէ մրշտափթիթ
Գարունըն չքնաղ ,
Քանի գերագոյն
Պատրաստեալ մընայ
Ընդամնօր ինձ տուն ·
Ո՜հ , զի գեղեցիկ
Ի հրեշտակերամ
Ընդ պար երգեցիկ ,
Կեցից երջանիկ
Ընդ յարարչապետն
Ի փիցս այսոցիկ ·
Ընդամնօր խմբյս
Լցցին իղձք սըրտի
Ի յանշուշտն իմ յոյս ,

## ԴԱՐՁԵԱԼ Ի ԳԱՐՈՒՆ

Լուծան գետոց սառամանիք,
Գլխոյնի երկիր զալարագեղ.
Ճընչէ զեփիւռ արդ քաղցրասիք,
Նոր արձակեն հաւք ըղգեղգեղ։
Լեր դու մանուկ գործօն և ժիր,
Տես իբր 'ի գործ ձեպի մեղուակ.
Համեստութիւն դըստրիկդ ուսիր,
Մինչ ժողովես ըզմանիշակ։
Կմենեցուն տըւան 'ի խոտս
Եւ տուտպք յեկեցըս հրաշակերտ.
Գնա, զոր քեզ տայ գոյն ինչ արմատ,
Կալ դու ծընօղդ 'ի մըտի սերտ։
Վերընձիւղեալ չըքնաղ բողբոջ
Ի յարմատոյ առնու ըզջով.
Թէ զորդիս քո կըրթես դու ող,
Ձես հայր չես մայր որդեգորով։

---

## ԵՐԳ ՅԱՄԱՌՆ

Մինչ ըզմանկունս արտահունձ
Բոցակիզէ խեցգետին,
Եւ անջըրդի պապքի բունձ,
Եղինքն յակօս տարժանին,
Հովանաւոր ընդ ծառով,
Շուրջ պարուրեալ 'ի յոստոց,
Հանգչիմ ուր սիւք շընչէ զով,
Տերևակոյտ 'ի բազմոց։
Սաղարթագեղ մայրեաց ծայրք
Տատանին մեղմ 'ի զեփիւռ,
Եւ ծածանին դաշտավայրք
Ի շէկ ցորեան համասփիւռ։

Ծառաստանին մըրգաւէտ
Ծանունք 'ի շըղը ու 'ի ծիրան
Կողերքն յերկիր հակամէտ
Մերձ առ ինեւ կորանան ։
Ճըպուռն 'ի նուագ իւր գեղջուկ
Ի ծիրանւոյն յեց 'ի յոստ ,
Օ խուռն յեղյեղէ յար զանձուկ
Ըն տարփալին իւր Օգոստ ։
Գոհեմ, մըրգաւըրդ թըռչնիկ .
Ի յօրհնութիւն Արարչի
Ի քո գըծուծ գայլայլիկ
Գոհեմ զի դու խրատես զիս ։

---

## ԴԱՐՁԵԱԼ ՑԱՄԱՌՆ

Ջըմեռն արդ էանց ,
Հասանէ ամառն
Ի լոյս գեղապանծ .
Ոչ եւս այլ 'ի ձիւն
Ծածկին դաշտորայք
Ի սպիտակ 'ի գոյն .
Ոչ եւս ըզվըճնիտ
Շուրջ պատեն զերկին
Ամպրոպք թանձրախիտ .
Այլ ըզցըրտագին
Աշխէ ըզմըրրիկս
Նուող 'ի յայրին ։
Արփիդ կենսաձիր ,
Դարձ ճաճանչագեղ
Շողեա արդ յերկիր .
Պէտակն հիասքանչ
Ընդ ակնապատար
Փայլն ընդ ճաճանչ ,

Զվեհիցն երկնաձեմ
Արդարոցն ընտիր
Ի քեզ նկատեմ:
Յորժամ տէրունեանն
Ի յարևելից
Նշողէ նշան ,
Նա դառն 'ի թախիծ
Կոծեցին նըսեմ
Զօրք անհաւատից ,
Ընդ ճաճանչաւէտ
Ծագեցէն նորա
Արփենոյդ հանդէտ .
Ի նորն յայն եթեր
Իշխեցէ յաւէրժ
Արփին անըստուեր .
Նա գերանըշոյլք
Փայլեցէն հոգիք
Իբր արփից անդ բոյլք ·
Գո՛յր յանկարծ և լուծ
Ընդ հոյլս նոյին
Յայնժամ դասակից ,
Ընքոյդ գեղեցիկ
Ներել յիս ընտիր ,
Չքնաղ արևիկ ·

---

## ԵՐԳ ՑԱՃՈՒՆ

Ա՜ աշուն աշուն ,
Որ 'ի սաղարթաց
Զչքնաղ 'ի բաց
Կողոպտես ընկոյն ,
Նա զմահու դալուկ
Ի դեղնատերեւ

Ինձ յոստս ակներեւ
Յուշ առնես. Աղո՛ւկ.
Ո՛չ մոռանիմ
Տերեւոյ հանգոյն
Եւ ես մահ ընդոյն.
Սուղ խոկ են կեանք իմ,
Ուր նա 'ի յերկիր
Ընկանի տըժգոյն,
Յաւէրժ 'ի յանձին
Դառնալ մահակիր.
Իսկ ես ընդ եթեր
Յայնժամ 'ի թեթեւ
Սաւառնեալ 'ի թեւ
Ճախր առնում 'ի վեր.
Եւ երանաւէտ
Կեամ անմահ քրոբէ,
Փոխեալ ըղձոպէ
Ի կենցաղ յաւէտ.

---

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՅԱՇՈՒՆ

Յողկուզաւէտ 'ի յայգեստան
Ի Պերմաւոն 'ի կուռթս այգեաց իջի յաշնան.
Ողկիկ ոտամբ գիրգ պատանեակ
Ի հընձանին ձըմէր ողկոյզըս կարմրորակ,
Գլխակ յուռոց ածեալ 'ի գլուխ,
Ծնգեք եւ սրունք ներկեալ 'ի հոյզ բոսորաբուխ.
Եւ թաթաւեալ ձորձքըն բոլոր,
Հայէր, եւ չէր ոք որ օգնէր, այլ մենաւոր,
Սատակաբեկ մըշակաց խումբ
Յանմահարար օշարակին գինեն 'ի յումպ.
Օ՛ եղուն բաժակքըն փրփրադէզ.
Բայց բաժակ այլ, եւ այլ հընձան նըշմարեմ ես.

Տէր 'ի խաչին արիւնաներկ ,
Փըշանխւթեայ պըսակ 'ի գլուխ՝ տարածի մերկ ·
Ի կուսածինն իրան փափուկ
Բազմեալ զիմ մեղս , 'ի գոյն բոսոր պարածածուկ ·
Իւ անդըստին հոսեալն արիւն
Սատակեցոյս մեղօք շնորհէ անմահութիւն ։
Զոր անդ գուշակն ետես աղօտ ,
Ըստ աւասիկ փայլէ պայծառ քան զառաւօտ ։

---

## ԵՐԳ Ի ՁՄԵՌՆ

Ի ձմերայինն ահա հասեր յեղյեղակ ·
Երկնի Սկիւթաց տարադէմ չուն քեզ գուշակ ։
Մըրըրկայոյզ օդոյն զքեւ այծեղջիւր ,
Ի ծունկըս ձեան տեղայ յերկնէ ըզգեղմն իւր ։
Մինչ դու 'ի տան պատըսպարիս առ հըրով ,
Զոր 'ի սփոփումըն քեզ Հաստչին ետ գորով ,
Յիշեա զի ինքն յանպատըսպար 'ի հիւղի
Վասըն մեղաց քոց 'ի ցըրտոյ նըւաղի ։
Ընդ եզն եւ էշ ջեռլին 'ի սպաս անասնոր ,
Մի քան զանբանսըն գըտանիր դու 'ի սառր ։
Վըմս հանձոյ քան զջեռուցիչ նոցայն շունչ ,
Ան խղձք սըրտի եւ աղօթից քոց շըշունչ ։
Այսպէս լիցիս դու ընդ հովուացն արժանի ,
Զի շնորհք նորուն 'ի սիրտ քոյին գեղանի ։

## ԶԳԱՐՈՒՆ ԵՒ ԶԱՄԱՌՆ ԴՈՒ ՍՏԵՂԾԵՐ

Քո, Տէր, քո է տիւ
Եւ քո է գիշեր.
Դու զաշխարհ լըրիւ
Իւրով հաստեցեր,

Ամառն և գարուն
Հաստատեալ կան քեւ,
Քեւ շըրջան առնուն
Լուսին և արեւ,

Ու ծաղկունք գիլին
Ի ցօղ երկնառատ,
Ու բոյսք տուոգին
Յանձրեւ 'ի յանհատ,

Եթէ ոչ դու զայն
Իբր ըղձմարգարիտ
Արփեւս վաղորդայն
Ընդ լեառն ընդ հովիտ,

Եթէ ոչ դու զայս
Պատրաստեալ 'ի յամպ,
Ընդ երկիր տեղաս
Շայեկան 'ի ջամբ.

Քեւ ցորեան առոք
Ծածանի 'ի հերկ,
Ծանրանան մըրգօք
Սարագեղ կողերք.

Ծածկեալ 'ի սպիտակ
Համակլին 'ի գոյն
Ընդք առհասարակ
Յարափայլ 'ի ձիւն,

Ի հրամանաց քոց
Շանթ պտտընդատ

Պա՛յթէ 'ի յամպոց
Ի մայրիս բարձրոստ.
Եւ յաստուածաստատ
Ցասմանեղ կարկուտ
Ըզգաշտ և զարաստ
Առնէ կողոպուտ։
Մ՛երթ շընչէ զեփիւռ
Մ՛երթ խիստ հիւսիսի.
Ծածկէ համասփիւռ
Մ՛էգ զերեսս երկրի։
Աստ ականակիտ
Կայլակէ աղբիւր,
Ա՛նդ վըտակ վըճիտ
Ծաւալի յեղտիւր.
Եւ 'ի ծաղկաւէտ
Ծածկէ 'ի յակումբ
Կարկաջահոս գետ
Երկուստեք ըզթումբ։
Ափնածիր 'ի քէն
Փակեալ Ովկիան,
Եւ ոչ անցանեն
Ալիքն ընդ սահման։
Ի քէն ամենայն
Չափով և թըւով
Զետեղեալ եղան
Ը՛նդ ցամաք ընդ ծով.
Եւ զի դու զնոյն
Կարգեալ ինձ 'ի սպաս,
Զիս 'ի սէր քոյին
Չերգես համապազ,
Ո՛վ խնոց ըղձից
Դու կէտ և սպառուած,
Վասն քո կեցից,
Վասն քո մեռայց։

## ԵՐԿԻՆՔ ՊԱՏՄԵՆ ԶՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ.

Այո՛ Տէր, չեւ ծընեալ էր մարդ 'ի յաշխարհ,
Գոյր արեգակն և լուսին,
Եւ արուսեակն եւս նախ զիւր ճանապարհ,
Զաշխարհական դու զմէգն 'ի լոյս փոխեցեր,
Համապարփակ 'ի վըհէն
Ի գոյ ածեալ զերկիր ըզծով և զեթեր.
Ւեւ բազմամբոխ թեւաւորաց հոյլք ըզմին,
Ըզնա երամք լուղակաց,
Զօրքստանեաց ազինք ըզմիւսն լըցին.
Որպէս զի մարդն հաստեալ քոյին 'ի պատկեր,
Աստուածութեանըդ վըկայս
Գըտցէ զձեռաց քոց ըզհաստատուածս առընթեր.
Այլ բարձրագոյն յոյժ վըկայեալ 'ի գովուն,
Երկինք ըզքո պատմեն փառս
Ճաճանչագեղ լուսնին 'ի լոյս և արփւոյն.
Ո՛ որ ըզՍ՛ինհր 'ի գնա պաշտես դու Արիդ,
Եւ դու տիկնոջն երկնից դէտ՝
Որ 'ի լուսինդ յայդ նըկատես զԱնահիտ,
Դարձիր հայեաց յարարչապետն 'ի գոյն,
Եւ հաստուածոյն 'ի գեղջ
Ըզգեղ 'ի միտ առ ըզվըսեմ հաստողին.
Եւ զզօրութիւն հըզօր աջոյն այնորիկ,
Որ ըզգոտա ընդ երկին
Արկ իբր ըզգունդ ինչ մանկըտւոյ խաղալիկ.
Որք զիշերոյ նոյնք և տուընջեան տընօրէն
Ճեմին ընդ դաշտ եթերին,
Որպէս հըսկայք դարձուորք յաղթք 'ի մարտէն.
Այլ զաչացու է տեսութիւն մահացուաց,
Եւ էքս անտեսք 'ի նմանէ
Դընեն 'ի նոյն թաղեալ խաւար միգամած.

Եթէ ոչ դու, Տէր, այլ արեւ և լուսին
Ճառագայթեալ 'ի բարձանց,
Զաչըս մըտաց լուսաւորես ըզնոցին.
Ո՛հ, երանի որք ճանաչեն ըզքեզ Տէր.
Նոյն առաւել երանի
Որոց պաշտեն ըզքեզ և կեան 'ի քո սէր.
Տեսից զերկինս ըզքոց մատանցդ ըզվաստակ.
Տեսից զարեւ և զլուսին
Պայծառացեալ յիւրաքանչիւր պարունակ.
Զամենազօր քո տէրութիւնդ յանդիման
Տեսեալ յաւէրժ 'ի նոսա,
Քեզ բոլորով եղէց սըրտիւ խոստովան.

---

## ԳԱՐԾԵՍՑԻ... ՈՐ ՄԵԾԱՏՈՒՆՆ ԻՑԷ Ի ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԻՒՐ

Մեծատուն խոնարհ
Նըդարեւ բաղդ
Ի ակըն գոհար,
Որում չիք ինչ զոյգ.
Եւ ոչ շափիղայ
Յեռեալ ընդելոյզ
Յոսկի Սովփերայ
Ի ճաճանչալոյս,
Յօրինէ մանեակ
Նոյնպէս գեղանի,
Նոյնպէս գերունակ
Կազմէ մատանի,
Որպէս գեղեցիկ
Պըճնի մեծատուն
Ի յոսկեղինինն
Նաքինութիւն.

Մեծութիւն և գանձ
Խոչ և խութ ոտին
Կ խլից մեծատանց
Յերկնաչու ուղին.
Նոյնք լուսատեսակ
Յերկրէ 'ի յերկին
Սանդուղք վերելակ
Յօրինեն նորին,
Մինչ շահիւքն իւրեանց
Խամբին ձոյք ժըլատք,
Ծաղկէ գեղապանծ
Նա 'ի տուրս առատ:
Ի կորստական
Նոցա փառքն և գանձ,
Սորա կան և մնան
Ի յերկինս անանց.
Ուր ոչ ժամանէ
Ձեռն յափըշտակիչ,
Նա ոչ եղծանէ
Զայն ցեց և ուտիճ:
Օրհնէ որբն ըզնա,
Ըզնա և այրին.
Հընչեն երգք նորա
Ի յարկս աղքատին.
Ըզնա կաղն և կոյր
Օրհնէ մուրացիկ,
Ընտերունչ տըխուր
Ի յուղն ընկեցիկ.
Ծերն ըզնա զառամ
Օրհնէ կենդանւոյն,
Հասակ անթառամ
Նա յետ իսկ մահուն:
Յելս առաւօտու
Տեսի զմեծատուն,

Մայրեաց Լիբանու
Ըմբարձեալ հանգոյն.
Ընցի ընդ երեկ,
Եւ ահա ոչ գոյր
Ընդամնոր երբեք
Եւ ոչ տեղի իւր.
Տեսի և ծաղկեր
Մեծատուն խոնարհ,
Իբր առ գետեզեր
Ծառ մշտադալար.
Եւ պտուղք յաւէժ
Շէկ և կարմրորակ
Զոստըն գեղուղէշ
Ծածկէին համակ.
Զայնպիսիդ փարթամ
Զողորմած և հեզ
Օրհնեմ, և կարդամ
Երանիս բիւր քեզ.
Դու 'ի յերկրի աստ
Գեղեցկանըսեհ,
Լիցիս բարեբաստ
Եւ 'ի կայս անդ վեհ.

---

## Ա.Ռ. ՍՈԽԱԿՆ

Ի վարսագեղ յեց 'ի ճըղիդ,
Ո՛ քաղցրախօսըդ ծիծեռնեակ,
Ընդ նըրբաձայն փող հագագիդ
Ներդաշնակես ախորժ նըւագ.
Զարմանալի ինձ գունագոյն
Փետրոցըդ քոց են խայտալիք.
Որոց թեթեւ թեւոց բախիւն
Զիմ պարարեն ականջք.

Դու, մինչ կարմիր արևածայր
Յետ յանկողնի ծագէ այգուն,
Ի ձայն երգոց 'ի զուարթարար
Բանաս զանկեալ աչս 'ի նընջիւն.
Եւ աստեղաց շաղ զովարար
Մինչ 'ի տըխուր ծաղկանց երամ
Ծաւալելով մարգըրտաբար
Վերականգնէ զայն անթառամ,
Ընդ հովանեաւ սաղարթագեղ,
Խանջ և թախիծ ծուփք 'ի ճակատ
Նըստիմ յերգոցդ 'ի լուր գեղգեղ,
Եւ 'ի հոգոց հանգչիմ ազատ.
Ո՜հ, դու 'ի նուագդ յաւերժացիր.
Նըստայց ես աստ, սոխակ քաղցրիկ,
Մինչև տացես ինձ քաղցր 'ի նիրհ
Նընջել յերգոցդ 'ի դայլայլիկ.

---

ԱՌ ՇԱՇԵԱՆ ԱԶՆԻՒ ՊԱՏԱՆԻՆ

## ՊՍԱԿԱՒՈՐԵԱԼ Ի ԲԺՇԿԱԿԱՆԻՆ

### ՆՈՒԱԳ

Լիբիոնեայ անիւք կառացն արենաճեմ,
Եւ ընդ ալիս Աքերոնի նաւակ նըսեմ,
Յանագորոյն կասեալ ուղին յահ 'ի սարսուռ,
Հայլին 'ի քեզ ո՜ Ասկղեպեայ հանքակ ներկուռ.
Թըռչիմ այժմէն խոկ տեսանել, ո՜ յոյս չըքնաղ,
Իբր 'ի շիրմաց ըզմահացուս վերակենցաղ,
Մինչ դու ընդդէմ մահու զինես ստոխ վակճոյժ,
Օ՜ թնավառեալ 'ի բիւրազգի ծխս ախտաբոյժ,

Բնութիւն համայն գեղածիծաղ յօրինէ պար ,
Ի թըռչնամին իւր ոսկեզիմ լեալ սողնհար ,
Իւրեւ ըղձոգունս առ 'ի նմանէ թափեալ աւար .
Մանկանացուաց յետ կենսատուին դու ապաւէն ,
Զեզ ըմնոցին գործեալ կենաց ըղձապաւէն ,
Կեցցես անծայր կենօք յերկինս ընդ յաւերժ Նոյ .

## ՆՈՒԱԳ ԲՈՆԱՑԱՆԳ ԵՒ ԲՈՆԱԿԱՐԳ

## ԱՌ ՑԱՓՇՏԱԿԻՉ ՑԱՆԳԻՑ ՏԱՂԻՆ ԻՄՈՑ*

Չընձղուկ պըճնեալ յուլն երփնագոյն մենեանց
Վխտին փետրոց՝ զոր 'ի յանձախտ երթեակ
Գողացար , մեծ 'ի քերթողաց պարու ւանց ,
Նշան զթըռչնիկն իմ անիցես անարեկ .
Ծածկեա զխըլրտուխտ . գուցէ կացեալ ատրնեքեր ,
Ծանիցէ զհերն՝ որովք թեւէր երկնաձեմ ,
Եւ կապտեսցէ զօտար փետրոցն ըզմըքեր ,
Բզգողունի զարդ ձրնձըղկիդ քո զմըսեմ .
Եւ եթէ ըղձայն ծըպտեալն այն քո քաջազարմ ,
Դարձցի փետեալ և կորակոր յհերն 'ի տարմ ,
Որպէս մատեանքն աւանդեն զայն բազմաւմէպ .
Զի զբառսն եղծեալ անձնիւր տողիցդ 'ի համեղեպ ,
Տաղդ 'ի քաղաք դարձցի՝ որ չէք քաղաքորմ ,
Կամ կունդ 'ի գլուխ՝ հերքըն գերծեալ խղարքորմ .

* Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան , քերթող ձարտար 'ի բանաստեղծել բոնաւոնզ . Տես Հատ. Բ. 68–82 ուր քերթողին յեւմենեաստեան և աւելի եւս տաղս սովին յանգք է վարեալ .

## ՆՈՒԱԳ ԲՈՒՆԱՑԱՆՑ ԵՒ ԲՈՒՆԱԿԱՐԳ

### Ի ԽՍՏՈՐՆ

Խլըստոր, ոգին երգիծական ըզքո պըճղունս կըցկըտուր,
Կարի 'ի ձայն ինձ քերթողիս ազդէ յանգել 'ի այլուր.
Օ՛ քեզ կերողին վայր 'ի հեռի բուրէ բերան չարաճոտ,
Եւ գոլորշի 'ի գլուխ նորա վերամբառնի ջերմայոտ.
Լեզուն ընդարմ երկեթանայ 'ի քո համեղ կըծուակիճ,
Ոգևազէշ զխաղն 'ի փոր դընէս անմարս գայշ և ռիճ.
Ո՛վ իմաստուն եգիպտացին սըրբազանօղն ըզխլըստոր,
Սպէլէր իսկ յիւրմէ սուեղծեալ աստուածոյդ զող զագրաքոր.
Կամ տըղընդեր փըքոցուոյ եղեալ 'ի հողմէ ըզգայուռ,
Դըժոխային ընդ կոկորդին փող կերկերէ ձայն խըռայոռ.
Մերժեալդ 'ի վէհ բազմականէ համեմըղ ժամու խորտկապեղճ,
Որ 'ի ստամոքս իմ մածանիս, 'ի ծըխահամն իբր ըզմխեղճ.
Ձար անհրաժեշտ 'ի սեղանի, առնես զուտօղըդ մըղձուկ.
Իսկ որ չուտէն, յոյժ 'ի նորայն ծանր ես 'ի յուռէ և տաղտուկ.

---

## Ի ՎԻՄԱՓՈՐ ՋՐՄՈՒՂՍ ԱՆԻԵՆԵԱՑ *

### ԱՐՁԱՆԱԳԻՐ

Նոր աստ Մովսէս ձըգէ ցուպ,
Հերձուն դարձեալ վէմք և աստ.
Եւ սպառնալից մեծասաստ
Սանձին ալիքն հուպ ընդ հուպ.
Մըրցի բնութիւն ընդ արուեստ.
Խառնեալ զարմանս աստ ընդ ահ.
Գրիգորիէ, սա անմահ
Արձանացի քեզ գովեստ.

* Գրիգոր ԺԶ. քահանայապետ Հռովմայ ետ ընդ ստորոտ լեառն հատանել ջրմուղս, զի 'ի զեղլանալ Անիենեայ գետոյ՝ յորդութեան ջուրցն հոսեալ ընդ այն և գահավիժեալ, մի ողողեսցեն զՏիբուր քաղաք.

ԱՌԵՂԾՈՒԱԾ Ի ՅՈՎՆԱՆ

Առանց քայլելոյ
Ընթացաւ ընդ ծով,
Եւ չունէր նաւակ.
Անողող 'ի ջրոյ
Թաւալեցաւ ընդ ջրով
Ի ծովուն յատակ.
Զուրկ էր նա յոգւոյ,
Մեռեալ ոչ գոլով,
Եւ շընչէր յըստակ.
Ո՞վ իցէ այս մարդ,
Ասա դու ինձ արդ.
Եւ առասպելիս
Իմ գիտակ լինիս.

---

# ՏԱՊԱՆԱԳԻՐՔ

Բարոն Կարապետ տանէն Նայեան,
Վանացն որ 'ի Վնէժ ուխտին միաբան.
Ըզկրօնս ընդ վարժից անլըս չըքնաղ
Զրդեալ միաւուծ յամբիծն իւր կենցաղ,
Բարոնապետին ըղձեա երկնընթաց
Արար և ուսոյց քարող վեհխնոց.
Ի Բիւզանդիոն 'ի բնիկն իւր քաղաք
Կացեալ Ազգապետ ընդ ամս իններեակ,
Եւ զխաղաղութիւն պարգեւ երկնատուր
Ընդ արդարութեան ածեալ 'ի համբոյր,

Հրաժեշտ 'ի պատուոյն յանզօր աշխոյժ
Նա ըղձակերտեան յազգին իւր յօգուտ ։
Բզնորին աստ վէմս այս ծածկէ զաճիւն ,
Հիւրդ ըղյիշատակ օրհնեա զարդարոյն ։

---

Երկնակենցաղ կենացըն վառ 'ի յանձուկ
Կեցեալ յերկրի որպէս ըղբոյ 'ի պատրոյկ ,
Թերեւսխա տիկին ըզգաստ և ամբիծ ,
Մշնաւորեան Պ.երովբէի կողակից ,
Դուստր արժանի և փառք տոհմին Երեմեանց ,
Նախանձելի օրինակ մարց և հարսանց ,
Լիք աստ զաճիւնն , հոգին Թըռեաւ վերնաձեմ .
Որդքն ընտոխաւ զայս արտասուօք եղին վէմ ։

---

Ըստ պատմեանն Ալլահվէրտեան հանգչի Մանիկ ,
Մարդ 'ի փըթիթս անդ Թարշամեալ վաղամեռիկ .
Մ`ըրցեալ 'ի նմա հանճար ընդ սիրտ գերաշխարհիկ ,
Նա ազգասէր երկոց յաւէրժ երախայրիք
Ի սկըզբնաբոյս խայծեալ 'ի տիս գեղածաղիկ ,
Թող յուսակտուր զազգն և ըղձալոմ իւր ըզտոհմիկ ։
Դէմք և կենցաղ 'ի տիպ րամիցն երկնացեղիկ ,
Նա յաղէբախ մատունքն հըմուտ 'ի դայլայլիկ ,
Ի զմայլական նոցին 'ի նուագ երկնազգեցիկ
Նկարակըրթեալ աստուստ հոգին այն գեղեցիկ ,
Ծնողացն 'ի գիրկս անդր 'ի յաստեղս յարաթռուցիկ ,
Հարազատացն 'ի սուգ զաճիւն իւր աստ եղիք ։



Մ՚երամէթձեան բընոյ զարմին
Շ՛իւ օրհնութեան հանգչի 'ի ամէն ,
Սաղամուրիկ ամաց քըսան
Նաստանիկ մանուկ կուսան ,
Կեցեալ զօրէն բոցոյ 'ի ջահ
Սերտաւլացեալ 'ի կեանս անմահ .
Օ՜ բսպաս զոր նայն պարտէր մօր իւր ,
Մ՚այր իւր նըմին մատոյց տըխուր .

---

Բարուն Մ՚իքայէլ 'ի տանէն Ջամճեան
Սանայն 'ի Սեհէժ ուխտին միաբան .
Յութսուն և չորից ամացն աւելյթ
Նշկասիրելով համազգեացն 'ի փոյթ ,
Ի Բիւզանդիոյ մինչեւ 'ի Բասրա
Շրջեալ հովուութեամբ , աստ հանգչի աստ .
Յանձուկ 'ի չիրմիս պարփակեալ 'ի փոս ,
Ազգասէր երկոքըն աշխարհաքարոզ .



# ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

## Ի ՄԱՀ ՏԻԿՆՈՋՆ

# ԿՈՒԵՆՏԱԼԻՆԱՅ ՊՈՐԿԷԶԻ

## ՏԱՂ

Յաղջամըղջին և յամպի 'ի հիւղ խուր
Աղքատութիւն հիւծ և թըշուառ կայ տըխուր,
Զի անձկալին ոչ եւս նըմա ծագէ լոյս,
Զըմփոփանաց ազդել 'ի սիրտ նորա յոյս.
Ոչ եւս 'ի յարկ այրւոյն հընչէ ողբ նըւաղ
Մատաղ որբոցն, որ պաղատին անըւաղ.
Մ՝այրն հիքացեալ հեղձամըղձուկ յարտասուաց,
Մ՝եռաւ, որդեակք իմ, որ բերէին առ հաց։
Առ սըրբազանն անուն, յաղերս սըրտառուչ,
Զուր օրհորդըն պաղատի անտերունչ.
Ոչ եւըս բաց դուարթնոյն է դուռըն մըտից,
Որ սուրբ զհամբաւ նորին պահէրն և ամբիծ.
Հայի յասեղն անգործ 'ի յիլն 'ի կարժառ,
Եւ կեղերջէ յաղխողորմ 'ի բարբառ.
Ո՛հ զի մեռաւ որ հայթայթէրն ինձ վաստակ
Պարէն և զգեստ, և տայր 'ի գործ յորդորակ։
Ձեռն ախտակիր մերձեալ յօրհասն 'ի մահուն,
Ոչ եւս մահճացն խուր առընթեր հայի վընոյն,
Որ բերելով գերաշխարհիկ յանձին սէր,
Մ՝երթ յերեսաց նորին ըզքիրտըն սըրբէր,
Եւ մերթ զանգօրն ուղղէր բազկօք ըզմարմին,
Մ՝երթ աղօթէր, մերթ արտասուէր ընդ նըմին.
Եւ մերթ 'ի գուձս իջեալ 'ի մերկ 'ի յատակ,
Ազշխջանուստ արծարծանէր ըզկըրակ։

Որ յակնարկելն եւեթ կարէր իւր 'ի սպառ
Կոչել ծառայս և ժխտաժիր ապախնայս ,
Մատուցանէր ծերոյն ըղձեղ միայնակ
Եւ զկերակուր և զըմպելին 'ի ճաշակ ։
Ձիւանդն ըզգլուխն 'ի վէր առեալ ծանրակիր ,
Շուրջ անբարբառ հայի նորին 'ի խընդիր ։
Գտէթ միանգամ, մինչ չեւ խըցեալ զաչըս իւր ,
Դարձեալ հայել 'ի նա տենչայ , այլ 'ի զուր ։
Նշան, ոչ եւս առնէ նա դարձ ։ քուն մահուն
Զաչըն կափոյց , շըրջեաց ըզդէմսն 'ի տըժգոյն ։
Ով եւս տպա , առէ թըշուառ ծերունին ,
Տացի հայել ինձ առ յամբիծ աղաւնին ։
Եւ 'ի տըխուր ձայնին 'ի սիրտ իւր կըրկնել ,
Գոգցես լուծեալ նա 'ի մարմնոյն կիսամեռ ,
Թըռչի յերկինս 'ի վէր գոչել զուարթադէմ,
Գամ տեսանել ըզնա յաստեղս երկնաձեմ ։
Լըքեալ 'ի կիցս ուղեաց ողբայ կաղն ընդ կոյր ,
Եւ զըթութեանն 'ի դաստակերտս՝ ուր ամուր
Պատըսպարան անմեղութիւն եգիտ իւր՝
Նըխողորմ ողբան որբոց հոյլք տըխուր ,
Զորս 'ի ծնողաց իւրեանց եթող անմայլ
Աստուածասաստ ցասմանն հարուած սոսկալի[1] ։
Եւ առ խրեարս առէն 'ի յողբան անդադար ,
Զայս արդ երկրորդ անգամ մնամք մեք անմայր ։
Ի դառնաղէտ օրէն զի յարկք անըշանք
Ձընչեն լալեաց և հեծութեանց արձագանգ ,
Ի պըղընձւոյն զանգել ընդ այգն ընդ երեկ ,
Յորում ժամու առնէր նա անդր երթեւեկ ,
Եղերերգեն գունդ եղկելեացն անհամար ,
Նա 'ի հանգիստ նորա հոգւոյն բարեբար ,
Աստուածատուաց զերդն առնելով միմեանց ազդ ,
Որ հանգուցեալ պաշտի հոգւոյն 'ի նըպաստ ։

1 Ակնարկէ յորդացեալ մանկունս , որոց ծնողք յախական մաղձախտէն կորեան ։

Փայլէր լուսով նա անդամնոր հիասքանչ
Խոնարհութեամբըն գերահրաշ 'ի ճաճանչ.
Ընդ ըղստոհմիկըն զիւր ծածկէր մեծութիւն
Ի տար ուղի և 'ի յանշուք վերարկու.
Չէր ուղեկից, ոչ գործակից նորին այլ,
Բայց թէ հրամանն առ 'ի սրբոյն պատուիրեալ,
Որ գըթասէր քերցըն կացեալ կարգապետ,
Քրիստոսաւանդ սիրոյն նոցա զանուն եա'.
Բայց է, քանիցս անգամ նորին 'ի տխպար
Ըզկերպարան արկեալ զիւրեւ նա զօտար,
Նըպաստ խւրոյն ածել փութայր աղքատաց,
Լըցեալ զկարիս նոցին յառաջ քան զհայցուած.
Որում սակաւ ինչ էր պիտոյ՝ տայր բազում,
Մխուին ըղհաց մատուցանէր, զասր այլում,
Կամ ըզկըտաւ և կամ զվերմակ. և անոր
Գոհ և զըւարթ և օրհնութեամբք դառնայր լի.
Բայց դըժնէից ու լոկ վըշտաց օթևան
Ըզգերդ ծաղիկն ողբայ ճարակ լեալ մահուան,
Բայլ պողոտայք զեղեալ մարդկամբ բազմահոծ,
Նաւ ապարանք բարձունք հընչէին դառն 'ի կոծ,
Նաւ սուգ բախէ ըզդուռն ըղձոխ և զանգոյր
Ուր զուարթագոյն բախտն երևէր 'ի դէմս իւր.
Ո՛վ Պորկիսեան դու յարկըդ հէք և թըշուառ,
Նախանձելի երբեմն, և արդ ողբոց վայր.
Խոր և անհուն և անթարգման է բանի
Գառն և տըխուր վիշտն որ ըզքեւ զեղանի.
Բայլ այն ընաւից յորդէ զաչօք և սըրտիւ,
Մէհ և վըսեմ կրօնից նորին 'ի պատիւ.
Խուժեաց Հըռոմ ըզդագաղօքն իւր ըղծով,
Տարափք ծաղկանց անձրևեցին ըզմարմնով
Հարսին քոյդ Կուէնտալինայ սիրելւոյ,
Որպէս զուարթնոյ խաղաղութեան նընջելոյ.

1 Ակնարկէ 'ի կարգ Քերցն ողորմածաց. որոց կարգապետ եղեւ սուրբն Վինկէնտ Տըբօլ:

Վանջէր աստ հողն. այլ անդ հոգին գեղանի
Ընդ հրեշտակաց պարս ընտրելոց յարթմնի,
Ի յարուսեակն արդարութեան ըղձալիւր,
Ի գըթութեանցն 'ի յանըսպառ 'ի յաղբիւր.
Նա 'ի հընչիւն հրեշտակային բարբառոյն,
Ըզմօրն ըզհետ հասին տըղայքըն սիրուն.
Նոքին ընդ նոսա 'ի միասին երկնընթաց,
Հայի 'ի վայր յայն զոր այնքան աստ սիրեաց.
Նա այց առնէ երբէք երբէք և 'ի քուն
Տառապելոյ անմխիթար ամուսնոյն,
Շողեալ չըքնաղ աստեղն այգուն 'ի տխրար.
Մ՝ի սիրեցեալդ իմ մի այլ եւս, ասէ, լար.
Այսպէս երկնից եղեն հրամանք, երկիր պագ,
Հայեաց ուր կամս, և իբր եմ ես երանեակ.
Նշանակից հայեաց ընդ իս աւընթեր,
Ի սերովբէս ահա փոխեալ զորդիս մեր.
Քեզ իսկ կեցի, արդ վասըն քո առ տէրն իմ
Խաղաղութիւն քոյոցդ և քեզ պաղատիմ.
Գխտեմ 'ի սիրտ քոյին եղէց անմոռաց,
Այլ աղաչեմ զընել ցաւոց քոյոց սանձ.
Նա թէ երբէք մարթի ըղձից ինչ գոլ յիս,
Քեզ զաղքատիկս իմ յանձն առնեմ զեղկելիս.
Կորեան որդիքդ, ահա վերջինն իմ կըտակ,
Զաղքատս իմ կալ քեզ որդեկաց փոխանակ.
Ո՛վ երանեալդ, որ այդր յերկնից 'ի կամօք
Յուրախութիւնն անզրաւականըս թըռեար,
Մ՛ինչ զՆորդիս ըզհայրենիդ յիշես վայր,
Յուշ լիցի քեզ Իտալիա ուր հանգեար.
Հռովմէական ազգին լեր մայր բարեմոյն,
Յիշեա զխմրդ եա նա գյետին քեզ ողջոյն.
Որ այնպիսի ըսպաս կրօնից քոց մատոյց,
Նա արդեօք և ընդունակ իսկ նոցունց.

Վարդունի Թատոէի Տիկին Հռովմայեցի :

## Ի ՆՈՅՆ ԻՆՔՆ

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ո՞ւր նա ծաղիկ շքնաղագեղ
Գերաշխարհիկ լուսոյ նըշոյլ.
Ո՞ւր նա հրեշտակ՝ յոր բազմագեղ
Հաճեցան շնորհս երկնից գեղուլ։
Ընտրեալ յերկնից գըթութենէն
Սփոփիչ մարդկան, և զուարթ 'ի ժպիտ
Ձըգէր 'ի կրծս և 'ի յօրէն
Զես 'ի բարւոյն ընդյետամիտ։
Այնպէս ամբիծն իւր կերպարան
Գեղազարդեալ 'ի շուք ցածուն,
Զի զժըպրհութիւն ապերասան
Յաղթահարեալ ածնէր նըկուն։
Ո՞ւր այլ և այլ ազգաց բարբառ
Այնպէս փափուկ 'ի շըրթունս իւր,
Զի որ լսէրն՝ յակնջլուրս կայր
Ի զմայլելի նոյնն 'ի լուր.
Ա՜խ 'ի շքնաղ աչաց խորոց
Այնպէս վըձիտ և գեղանի
Ամբիծ սիրոյն համանէր բոց,
Որ 'ի սուրբ խանդ ձըգէր զհոգի։
Ո՛վ բարեբաստ, ասէ, այր
Որ յինքն ընտիր գրաւէ զնորին.
Բարեբաստիկ և որդւոց պար,
Որ 'ի նմանէ նըշոյլք սըփռին։
Չիք 'ի կանայս նըմին զուգորդ.
Բաւից հընգից ամաց անփորձ
Գոլով դեռևս ինքն օրիորդ,
Հըզօր 'ի խրատս է և 'ի գործ։
Այլ երբ առել այժմիկ կարեմ
Զիարդ համայն է Հռոմ 'ի սուգ,

Նու յորդախաղ կոծ տըխրադէմ
Հեղուն յաւաջն իւր արտասուք ։
  Մըգ ցուրտ մահուն ծածկէ գըլըխող
Հարսնն, աւաղ, ըղկեղպարան ։
Որ անարատ վարեաց կենցաղ
Ի սուրբ հըսկմունըս մըշտական ։
  Մայրն անոք և անտերուն ,
Որ զհետ նորին արտասուալից
Գըրնայր մանկամբքըն թաթաւուն ,
Յիշէ այժմիկ յօգնաթախիծ՝
  «Քանի սիրով նա բարեխնամ
Պատըսպարան լինէր նոցին ,
Նու յաղքատին իւր իբր 'ի սեամ
Նըպաստքն խոկոյն հասանէին ։
  Յաշխարհըլի վիպէ 'ի ձայն ,
Օ՜ խորդ գորով ինքըն ախտակիր
Մինչ 'ի խըշտեակն անօգնական
Հեծէր լըքեալ անկարեկիր ։
  «Նա ժիր առ ինքըն ժամանէր
Որպէս ըզքոյր բարեգորով,
Ի գութ եւեթ զանձն և 'ի սէր
Նըրանուէտ համարելով ։
  Որբն և զառամ աւատիկ ծեր
Յիշէն 'ի յօղքըս տըխրագին ,
Օ՜ խորդ ինքեանց նա ազախնէր
Իբր ըզնաժիշտ արծաթագին ։
  Նա ինքն եղէ ախանատես ,
Օ՜ի մուրացիկք երամովին
Ծերք և տըղայք իբր և որպէս
Բըզգազաղաւ խըռնեալ նորին ,
  Նու զախրելըոյ առեալ ըղկոծ ,
Հանգիտա նըման պաղատէին
Նըւագաւոր ձայնիւ երգոց
Մըխողոր և տըխրագին ։

Եւ անըզգայք ըզգեամ 'ի բաց
Ի տեսլենէն դըժոխըմբեր
Շըրջըրջէին մահուն կառաց՝
Որ ըզդագաղն առեալ բերեր ։
Կեսք ըզնորա ձայնեն զանուն ,
Աչերս երկնից արկանելով ․
Եւ կեսք նըւաղ 'ի հեծութիւն ,
Այլք 'ի ներբողըս բազմագով ։
Ի յեղանակըս բազմազան
Նոյն բացատրէր իղձ 'ի բնաւից ,
Եւ յալեկոծ շըփոթ խըռան
Խափանէին երգըն թախիծ ։
Պատէր տըմոյն համատարած ․
Եւ տեղայլն բոլորք ծաղկան
Աստի անտի 'ի պաշտգամաց
Ըզդագաղաւըն ցիր և ցան ։
Խոցածաւալ ապա 'ի հուր
Իղձք առկայծեալք արծարծեցան ․
Եւ բազմութիւնն որ անդ զեղոյր
Քաղաքայնոց ազնըւական ,
Ոչ գոհ ընդ ողբան աղօթանուէր ,
Ծըխուրն խնկին ձըգեր զանխու ,
Յորում տոհմիկ տիկինն հանգչէր ,
Նախ քան զերեկ լըցեալ զիւր տիւ ,
Որպէս կըրթի ոք յապշութիւն ,
Նոր և չըքնաղ երազեալ իրս
Եւ թօթափեալ յանկարծ ըզքուն ,
Ըզնոյն և ես կրեցի ըզկիրս ։
Ո՛ օրիորդք և նոր հարսունք ,
Կացցէ 'ի սիրտ ձեր անմոռաց
Քաղցր յիշատակըն միշտ նորուն ,
Եւ ուսարուք լինել զըթած ։
Արհամարհեալ ըզվեհագուն
Ազգատոհմին շուք հայրենի ,

Զորս կըրէրն յինքեան զարիւն ,
Իւ պանծան վէպք Նըքինի ,
Եւ ոչ սիրոյն 'ի քաղցր ոլոր
Զարմն երանեակ հըպարտանայր ,
Ընդ իշխանաց յօդեալ հըղօր
Ընտանիս 'ի սիրտ մեծամեծար .
Ի գիւրութեանց շուրջ առեալ պար
Եւ 'ի զանձուց բազմամըթեր ,
Որ են վկայ մեծացման մայր ,
Զայլոց 'ի յուշ զաղէտս ածէր .
Եւ յանկայի 'ի սեամն յաւէտ
Ընարդ հիւղից յաձախելով ,
Ուր չըքաւորն 'ի բազմաղէտ
Զեծէ 'ի վիշտս հիւծի 'ի սով ,
Զնարէր զպարգևս իւր բարերար
Ծածկել 'ի վայրս անդ խաւարչուտ ,
Խոնարհութեամբն իւրով ձարտար ,
Կենցաղական զօլից անփոյթ .
Ով երջանիկ դու ոչ մեռար ,
Կեաս 'ի բնաւից դու 'ի սըրտի .
Դու 'ի յերկնից կեաս 'ի կամար
Երանաւէտ և լուսարփի .
Լըր արժանի անձուկ քոյին ,
Զի 'ի բանտեալդ 'ի քեզ գըթայր
Եւ 'ի կապից մարմնոյդ յերկին
Կոչէր ըզքեզ մահացուացս Զայր .
Զամպս փեռայն քո երկիւղած
Ըսփոփեսցէ ըզսուգ տըխուր ,
Զօրկ յերեցունցն իսկ որդեկաց՝
Ոյց դու յերկնից հրաւէր ետուր .
Ի գիրկըս քո ահա զնոսին
Մ՛երթ կարմրագեղ շըրթամբք 'ի դէմս ,
Եւ մերթ փարեալ զուլամք քոյին
Ըմբիծ բազկօքըն տեսանեմ .

Նու խոպոպիք գեղագանգուր
Խառնեալ վարսիցն իբր հիւսքանց
Ի մայրենի շրթանցն համբոյր
Գեղափայլեն լուսաճաճանչ.
Ի փարելի և զուարթ տեսոյն
Ընկղմին միտք իմ խորասոյզ,
Օ՜ եղեալ յանձառ 'ի քաղցրութիւն
Սիրտ իմ և բնաւ մտածմունք հոգւոյս։
Սէր 'ի կամարս անդ 'ի յերկնից
Նախամեծար և 'ի յերկրի,
Քեզ 'ի կենցաղս յայս ուղեկից
Փառօք ըղձոխ քո արար լի.
Իմաստութիւնն այժմ անքըննելին,
Որ զքեզ եբարձ վաղամեռիկ,
Ծագեալ ընդքեւ շող սերափին,
Ընծէ սիրոյ զքեզ ոսկի բընիկ։

Հ. Անտոն Պոնփիլիոյ:

---

Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԹՈՌՆԵԿԻՆ ԻՒՐՈՑ

## ՀԱՒՆ ԱՌ ՄԱՆԿԻԿՆ

Շնորհաց Հոգւոյն երկն ամբիծ,
Թոռնեակ քաղցրիկ, ասա ինձ.
Ջիմ իբր յախտէ մնհաութ
Ի գրգուանաց քո հաւիդ
Շրջես խոժոռ զդէմն 'ի բաց
Ըզտարփալին հրեշտակաց։
Օ՜ ի հեկեկես շնչասպառ,
Յոգւոց հանես անդադար։
Շողշողելով շրջափիլ
Ըզթերաբաց ըրբացդ հիւ։

Ո՜հ, զի է քեզ վրշտակիր
Բնութեանն ազգմանն նախկին ձիր,
Եւ նախընծայ հոգւոյդ շարժ
Ընկձէ զմարմնոյդ ջիլս անվարժ.
Քեզ վերընկալ լինիմ արդ
Յաւազանէն լուսազարդ,
Ընծել դըստրիկ գեղանի
Ըզքեզ հրեշտակ արփենի.
Օ՜ի զգա պըրկես, ո՛ դայեակ,
Իբր յանցաւոր անազգակ.
Գնէպք յեղակարծ. ո՛ ապուշ.
Ա՞ր ծակես զունկն ըզքընքուշ,
Գու աւագին մայրդ անգութ
Եւ կամ վարձկան դու ստընտուդ
Չիցես արդեօք յոռեգոյն
Քան զհոյլս Արաբ կանանցոյն,
Եւ քան ըզգուժ Անուհին՝
Որ ձըռնչէ զոտն որդեկին,
Կամ որ 'ի դրոշմ և 'ի տառ
Նէրկէ զնորին մորթ դալար.
Ոչ խնդրէ քաղցր իմ թոռնեակ
Օղ գեղափայլ և մանեակ.
Այլ ծոց և ծնօտք իւր մատաղ
Որդան կարմիր և չքնաղ.
Թէրի այլ ինչ գեղոյդ չէք,
Ո՜ հրաշագեղ իմ դըստրիկ.
Քեզ գիրկս ածել սըրբազանն
Ըհա սպասէ աւազան.
Եկ 'ի բազուկս իմ աղէ,
Գիմել քեզ այսր 'ի ձայն է.
Եւ զի է քեզ, երկընչիս
Թանալ 'ի ցուրտ 'ի յալիս.
Թերևս 'ի քոյդ անձկութիւն
Գոգքա և եւս յաւելուն.

Եւ զմրգրափայլ կըտաւխոտ
Ընդէ՞ր քըրքըրես անհանգիստ .
Մ՚ի զուրբ խորհուրդն անպատիւ
Ամնես անստատ քո ձըչյիւ ,
Թէ յորդանաց քեզ այժմէն
Հեստել կըծնից կամք իցէն ,
Եւ ընդ ըմբոստ ուռնել գաս
Արուսեկին աղախնայս ,
Արդ աղէ լէր , լէր դու գգօն ,
Նախահօր քում լուր ինձ օ՛ն ,
Ընդէր փակես , աղէ բաց
Աչքոյին սեաւ բիբս աչաց ,
Այլ՝ ո՛հ , անլուր դու խըրատու
Զատուկդ 'ի ձիւն յաւելուս .
Յորդանս ապա առ մայրիկդ
Ածեմ ըզքեզ ատաղիկ ,
Ի մայրենին անդ համբոյր
Եւ 'ի միակ գըրգուռմն իւր
Լիցիս հըլու և խոնարհ ,
Ընկճեալ ըզքոյդ արհամարհ ,
Շընչեալ զեփիւռ հեզասիք ,
Հանդարտեսցէ զքոյդ մըրրիկ .
Դարձայց յայնժամ անձկապէս
Դըրգուել 'ի գիրկս իմ ըզքեզ .

Հերոնիմոս Որբի :



## Ի ՊԱՐՈՆ

# ՊՕՂՈՍ ՇԱՇԵԱՆ

## ՊՍԱԿԱՒՈՐԵԱԼ Ի ԲԺՇԿԱԿԱՆԻՆ

### ՆՈՒԱԳ

*Դու որ զգիտնոց ըղձաղարթս այս պերճ մըրցանակ,*
*Ի բազմաբերտըն ճակատուդ ածես պըսակ,*
*Հայեաց 'ի սոսր քանի եղեւըն մահաբեր*
*Պարանին յեզր Նախերանի նըսեմաստուեր.*
*Տես անդ 'ի մնայըն աղբիւր հրավառ ծըծըմբաւոր*
*Տըժգոյն ըղձանողն, որ անոփ գիւըն առնու տուչոր.*
*Օ՜ հըսկող մըղձուկն, և զըղժընդակ ցաւոց երաստ,*
*Խոժոռադէմ յար 'ի վըզեան կազմ և պատրաստ։**
*Նաև այն, Պօղէ, որ առնէ զմարդ մոխիր համբուն,*
*Ցուցանէ զքեզ յաղեղն իւր յամր և 'ի դատարկ,*
*Ընդդէմ նոցին նոր լինի սպառ յաղթ աննըկուն,*
*Հեծեն նոքա ընդ այն՝ զի է ժամու ծերոյն հարկ,*
*Օ՜ որ տեսանես ժիր յերթևեկ 'ի սատուերաց չուն,*
*Ի նուագս յոլով յայսըմ հետէ կալ աննաւարկ.*

*Փիլիպոսի աբբայ Վենետացի:*

---

## ՁՈՐԵՑՈՒՆՑ ՑԵՂԱՆԱԿԱՑ ԸՆԴ ԻՐԵԱՐՍ ՎԷՃ

*Նաժիշտք արփւոյն չորեքին,*
*Որ իշխեցողք են տարւոյն,*
*Մ՚ին որ 'ի ձեռն իւր առին*
*Պըրձնէ զարօտ երկին 'ի գոյն.*

* Տես 'ի Վիրգիլեայ յԵնէականին, գիրք Զ.

Նշկորդն 'ի շող բոցակէզ,
Միում ողկուզովք սփածեմ,
Զորորդն 'ի ձեանց բազմեալ դէզ,
Տայծն մժեանց վէճ ընդդէմ,
Նորափետուր մին ճնեւ,
Ճշեր, երկիր զարդարի.
Միում այն թէ զհասկ ոսկեձև
Նա ներկանեմ 'ի վայրի.
Նախանձընդդէմ երկոցուն
Ճնդուստ և միայն պանծայր.
Գող լուսատու ձիթենւոյն
Նու զուարթարար որթոյ մայր.
Զորորդն յայնժամ դաշն և հեզ
Զայնեալ առ քորմն իւր ասէր.
Թող արմիոնք կացցեն ձեզ,
Դաշկունք և կութք այգերեր.
Ճշլ ունքն 'ի գալ իւր յաշխարհ
Ճր 'ի ծնանել տղայարար,
Նախամեծար զարհամարհ
Սատանանիւն իմ արար.

*Օրփէի Կոմսուհւոյ ռամկայեցի:*

---

## Ի ՆԱԽԸՆԾԱՅ ԱՐՏԱՍՈՒՍ

### ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿԱՆ

Ճրատուէ Յիսուս
Մայրենին 'ի ծոց.
Մըթագնի գլուարթ
Նշեաց իւրոց
Ճփխագեղ լոյս.
Յոլացեալ յերկնէ
Սերաբին հրեշտակ.

Զարտասուաց նորա
Յակնեղէն բաժակ
Ըզշիթս ամփոփէ ․
Եւ վերասլացեալ
Նուիրէ Հօր զայն ․
Երգ տխուր, ահ,
Լիցի քաւութեան
Մահացուաց յուսալ ․
Իսկ Հայրն երկնաբնակ ․
Տանէր արդեօք զա,
Ընդ Որդեակն իւր ինձ
Զորին իւր ցանկայ
Ձօնել փըրկանակ ․

Ագապէ Պառօլա երէց հռովմայեցի :



## ՑԱՆԿ ՔԵՐԹՈՒԱԾՈՑ

## Գ ՀԱՏՈՐՈՑ

# ՏԱՂԻՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ


ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳԵՂՕՆԳՔ Ա. Մայր և Դուստր . . . . . . . 7
. . . Բ. Հովուուհի . . . . . . . . 23
. . . Գ. Կիւրոս և Վրէն . . . . . . . 27
. . . Դ. Նեկրունի մեռեալ 'ի մահ, և ընտանիք իւր . . 33
. . . Ե. Վրոյր և Աւան հովիւք 'ի Բեթղեհէմ . . 40
ԹՈՒՂԹ Ա. Առ Ալէքսիս և Մենալքաս . . . . . . . . 42
. . Բ. Առ Մենալքաս . . . . . . . . . . 45
. . Գ. Առ Մենալքաս . . . . . . . . . . 47
. . Դ. Առ նոյն . . . . . . . . . . . 50
. . Ե. Առ նոյն . . . . . . . . . . . 52
. . Զ. Առ նոյն . . . . . . . . . . . 53
. . Է. Առ վարժարանեայս և առ վարժապետ նոցին . . . . 55
. . Ը. Առ նորընծայ մանկունս . . . . . . . . 56
. . Թ. Առ մանկունս Մխիթարեան վարժարանին . . . . . 58
Առ Արհիապատիւ Աբբահայրն 'ի լրումն տարւոյ . . 60 . 61 . 62 . 66 . 67
Առ նոյն իւքն, և առ համօրէն կարգակից եղբարս . . . . . . 64
Առ նոյն իւքն ախտակրեալ. 'ի լրումն տարւոյ . . . . . . 67
Յէսայեան Ղարամեան 'ի նորել Տարւոյ . . . . . . . . 68
Յերկայնաւուրս Արհիապատիւ Աբբահօր . . . . . . . 69
Առ Արհիապատիւ Աբբահայր Մխիթարեան Ուխտին, Տաղք նորաձոյլք . . 69
Առ Եպիսկոպոսապետն ուղղափառաց Հայոց. 'ի հրաժարական բաժակն . . 70
Առ Արհիապատիւ Քաղկիտական կողմանցն Դիտապետ . . . . . 71
Առ նոյն իմքն կառուցող եկեղեցւոյն Հայոց 'ի Հռոմ . . . . . 72
Առ սրբազան Քահանայապետն Գրիգոր ԺԶ. . . . . . . . 73
Առ Արհիապատիւ Դիտապետն Տարօնոյ Իգնատիոս Վ. Փափազեան . . 75 . 76
Ի կենդանութեան բաժակն Ղարամեան Ասպետին . . . . . . 77
Ի հինգն Ապրիլի յոր ծննդեան Ղարամեան Ասպետին . . . . . 78
Ի հոգեւոր Եղբայրակցութիւն Ալոսիոսի եղբօր Ղարամեան Ասպետին . . 79
Ի նորընծայ Աբբահայրն . . . . . . . . . . . 80
Ի նորին օծումն 'ի Դիտապետութիւն Սիւնեաց . . . . . . 81
Ի Ս. վկայսն Սուքիասեանս . . . . . . . . . . 84
Ի նորընծայ Քահանայս . . . . . . . . 87 . 88 . 90 . 91

Ի Նորընծայ Միանձունս Անտոնեան Հայոց Լիբանանեանց . . 91 . 93 . 94 . 95
Ի դիմաց նորընծայ միանձին . . . . . . . . . . 92
Առ նորընծայ մանկունս . . . . . . . . . . 97 . 107
Առ նորընծայ մանկունս Թատերախաղ . . . . 98 . 99 . 100 . 102 . 103
Առ նորընծայ Քահանայս 'ի հանդէս իմաստասիրական քննութեան . . . 105
Առ նորընծայ Քահանայս հրաժարական ողջոյն . . . . . . 108
Ի չու սիրելւոյ բարեկամին . . . . . . . . 110 . 111
Ցուցերութիւն խնամակալութեան որբոց՝ գերարգոյ Հ. Սարգսի Վ. Թէոդոր . 112
Ի Դարձ նորին 'ի Հնդկաց . . . . . . . . . 113
Առ նոյն ինքն . . . . . . . . . . . 115
Ի վերադարձ բարեկամին . . . . . . . . . 116
Ի գալուստ Տիկնոջ փոխանորդի կայսերն . . . . . . 117
Ցաստուածապաշտ վեհափառութիւն Ֆերդինանդոսի Ա. կայսեր յայցելութիւն 'ի Վանս Մխիթարեանց . . . . . . . . . 118
Ցաստուածապաշտ վեհափառութիւն Մարիամու Աննայի Կարոլինայ Դշխոյի յայցելութիւն 'ի Վանս Մխիթարեանց . . . . . . . 118
Ի վերադարձ Ղարամեան Առաքելին . . . . . . . 119
Ի բազմաբարբառն Մեծոֆանթ . . . . . . . . 120
Մամուլ նորակերտ առ Բարերարն . . . . . . . 120
Ցաւարտ տպագրութեան մեծի Հայկազնեան Բառարանին . . . . 121
Ցարգարն գատափեռեալ . . . . . . . . . . 124
Ի մահ արդարոյ . . . . . . . . . . . 126
Խրախոյս 'ի մահ . . . . . . . . . . . 127
Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր . . . . . . . 128
Առ տիս մանկութեան . . . . . . . . . . 130
Ամք քո ոչ անցանեն . . . . . . . . . . 131
Եւ դուք եղերուք պատրաստ . . . . . . . . . 132
Մաշեցեր որպէս սարդոստայն զանձն նորա . . . . . . 133
Ունիմք մեք հայր զԱբրահամ . . . . . . . . . 134
Ի վաղամեռիկն Էմմա Աղանուր . . . . . . . . 135
Առ Նկարիչն որ զկենդանագիր նորին օրիորդի յետ վախճանի նորա կերպագրէր . 136
Ի հարսանիս վսեմազարմ իշխանի Միհրանայ Չէլէպւոյ Տիւզեան . . . 137
Երգ 'ի Գարուն . . . . . . . . . . . 139 . 141
— յԱմառն . . . . . . . . . . . . 141 . 142
— յԱշուն . . . . . . . . . . . . 143 . 144
— 'ի Ձմեռն . . . . . . . . . . . . 145
Զգարուն և զՁմեռն դու արարեր . . . . . . . . 146
Երկինք պատմեն զփառս Աստուծոյ . . . . . . . 148
Պարծեսցի . . որ մեծատունն իցէ 'ի խոնարհութիւն իւր . . . . 149
Առ Սոխակն . . . . . . . . . . . . 151
Առ Շուշան ազնիւ պատանին պսակաւորեալ 'ի Բժշկականին . . . . 152
Նուագ բանայանգ և բանակարգ . . . . . . . . . 153

Նուագ բանդայանց և բանակարգ ՚ի խառօրն . . . . . . . . 154
Ի վիմաւոր ջրմուղս Աթենենայ, արձանագիր . . . . . . . 154
Աւերծուած ՚ի Յոմէան . . . . . . . . . . 155
Տապանագիր · Կարապետ վարդապետի Նաայեան, Աղցապետի ուղղափառաց . 155
— Թերեզեայ տիկնոջ . . . . . . . . . . . 156
— Մանիկ Պէյի Ալլահվէրտեան . . . . . . . . . 156
— Մէրամէթճեան Անտոնի . . . . . . . . . . 157
— Միքայէլ վարդապետի Չամչեան . . . . . . . . 157

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Ի մահ տիկնոջն կուէնտալինայ Պորկեզի . . . . . . . 158
Ի նոյն նիւթն, եղերերգութիւն . . . . . . . . . 162
Ի մկրտութիւն Թոռնեկին իւրոյ, հաւն առ մանկիկն . . . . . 166
Ի պարոն Պօղոս Ռաշեան պաշտաւորեալ ՚ի բժշկականին . . . . . 169
Չորեցունց յեղանակաց ընդ իրեարս վէճ . . . . . . . 169
Ի նախընծայ արտասուս Յիւսուփ մանկան . . . . . . . 170

# ՏԱՂՔ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Վասն քերթողական աշխուժից , եւ կամ վասն ընտիր եւ անակնկալ իմաստից ի նոսա բովանդակելոց , տպագրութեան արժանի համարեցան ։

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ